Global Developments Fund

# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՑԱՆԿ

(ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ)

## ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ

## ՀԱՅԵՐԵՆ ԱՆԳԼԵՐԵՆ

ԵՐԵՎԱՆ 2020

Այս բառացանկը մշակվել է *«Գլոբալ զարգացումներ» հիմնադրամի* կողմից:

Խմբագիր՝ *Արամ Ավագյան:*

Հղում տալ որպես՝ *«Մասնագիտական կրթական և ուսուցման եզրույթների բառացանկ (մեկնաբանություններով). անգլերեն-հայերեն, հայերեն անգլերեն», «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամ, Երևան, 2020:*

@ «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամ, 2020

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ** ........................................... 4

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ** ........................................................................................ 7

**ՄԱՍ 1. ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ** ................................................ 8

ԱՄՓՈՓ ԲԱՌԱՑԱՆԿ ..................................................................................... 8

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲԱՌԱՑԱՆԿ ........................................................................ 14

**ՄԱՍ 2. ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՑԱՆԿ** ............................................ 87

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Սույն բառացանկը հասցեագրված է կրթության բնագավառում աշխատողներին՝ կառավարիչներին, մասնագետներին, փորձագետներին, դասավանդողներին, կրթության համակարգի շահակիցների ներկայացուցիչներին, ինչպես նաև ուսանողներին, և նպատակ ունի աջակցել մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառի միասնական եզրութաբանության ապահովմանը:

Բառացանկը կազմված է երկու մասից: **Առաջին մասը** պարունակում է Մասնագիտական կրթության զարգացման եվրոպական կենտրոնի (CEDEFOP[1]) կողմից մշակված «***Կրթական և ուսուցման եվրոպական քաղաքականության եզրութաբանություն***» (Terminology of European Education and Training Policy) բառացանկի երկրորդ հրատարակության (2014թ.) անգլերեն տարբերակի[2] հայերեն թարգմանությունը և ներառում է 130 եզրույթ: Մի շարք եզրույթների վերաբերյալ բերված են նաև խմբագրի նշագրումները, որոնք զուգահեռներ են անցկացնում Հայաստանում կիրառվող եզրույթների հետ կամ տալիս անհրաժեշտ բացատրություններ:

Եզրույթների հայերեն տարբերակներն առաջարկված են՝ հիմնվելով դրանց իմաստի, այլ ոչ թե բառացի թարգմանության վրա: Հնարավորինս հաշվի է առնված նաև ՀՀ իրավական ակտերով սահմանված եզրութաբանությունը, որը, ցավոք, միշտ չէ, որ անթերի է: Այդ խնդիրներին նույնպես անդրադարձ է կատարված խմբագրի նշագրումներում:

Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ այնուամենայնիվ, ոչ բոլոր անգլերեն եզրույթների համար է հնարավոր առաջարկել միանշանակ հայերեն համարժեքներ: Այդ իսկ պատճառով որոշ դեպքերում առաջարկված են այլընտրանքային տարբերակներ: Օրինակ՝ *“Job”* եզրույթը, կախված համատեքստից, կարող է թարգմանվել թե՛ *աշխատանք*, թե՛ *պաշտոն*, իսկ *“Advanced”* բառը՝ թարգմանվում է որպես *խորացված*, եթե խոսքը գնում է, օրինակ՝ գիտելիքի մասին, որպես *առաջադեմ*, եթե վերաբերում է տեղեկատվական և

---

[1] Ֆր.՝ Centre européen pour le développement de la formation professionnelle, անգլ.՝ European Centre for the Development of Vocational Training : Հիմնադրվել է 1975թ.: Կայք՝ http://www.cedefop.europa.eu

[2] Կազմված է 7 լեզվով՝ անգլերեն, իսպաներեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն և պորտուգալերեն:

հեռահաղորդակցման տեխնոլոգիաներին (ՏՀՏ) և գործիքներին, և որպես *բարձր*, եթե առնչվում է որակավորման մակարդակին:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրության արժանացնել *“Learner”* եզրույթը, որն անգլերենում լայն ու հավաքական իմաստ ունի և ներառում է բոլոր նրանց, ովքեր որևէ կերպ ընդգրկված են ուսումնառության մեջ՝ մանկահասակներին, երիտասարդներին ու մեծահասակներին, աշակերտներին, ուսանողներին, ունկնդիրներին և այլն: Բառացանկի հայերեն տարբերակում այս եզրույթի համար առաջարկված է *ուսումնառու* տարբերակը, որը մեր կարծիքով առավել լավ է արտացոլում այդ հասկացության իմաստը: Միտումնավոր կերպով չի կիրառվել օրինակ՝ *սովորող* բառը, որը միշտ չէ, որ հենց այս լայն իմաստով է ընկալվում (մասնավորապես՝ անցյալում այդպես էին կոչվում նախնական մասնագիտական (պրոֆտեխնիկական) ու միջին (միջնակարգ) մասնագիտական կրթության մեջ ընդգրկվածները):

Որոշ՝ առ այսօր Հայաստանում դեռևս չկիրառվող, օրինակ՝ “*Compensatory learning*” կամ “*Lifewide learning*” եզրույթների համար առաջարկված են նոր համարժեքներ:

Բառացանկի **երկրորդը մասն** առաջարկում է մասնագիտական կրթությանը վերաբերող հայերեն եզրույթների (իրավական ակտերով պաշտոնապես սահմանված, դրանցում օգտագործվող, սակայն որևէ կերպ չսահմանված, կամ պարզապես գրականության մեջ հաճախ կիրառվող) անգլերեն տարբերակները: Սահմանումներն ու դրանց թարգմանությունները տրված են՝ ըստ համապատասխան իրավական ակտերում բերված շարադրանքի՝ պահպանելով սխալները, որոնք սակայն բացատրված են:

Որոշ դեպքերում առաջարկված են բառացի թարգմանության հետ չհամընկնող տարբերակներ, որոնք առավել համապատասխան են միջազգայնորեն ընդունված եզրույթներին: Այդ դեպքերում առաջարկվող տարբերակին հաջորդում է բառացի թարգմանությունը, որը բերված է ուղղանկյուն փակագծերում՝ ալիքաձև ընդգծմամբ, օրինակ՝

**Continuing education (training)**՝ առաջարկվող տարբերակ,

[*Supplementary education (training)*]՝ բառացի թարգմանություն:

Առանձին դեպքերում առաջարկվում է թարգմանության մեկից ավելի տարբերակ, որոնք կարող են հավասարապես կիրառվել, օրինակ՝

| | | |
|---|---|---|
| **31** | **Հեռակա ուսուցում** | **1. Part-time education (studies)**<br>**2. Extramural studies**<br>**3. Education by correspondence**<br>**4. Off-site education** |

Որոշ չափով օգտագործվել են ՀՀ արդարադատության նախարարության «Թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքէջում զետեղված՝ օրենքների պաշտոնական թարգմանությունները[3], որոնք սակայն պարունակում եմ բազմաթիվ սխալներ ու բացթողումներ:

Բառացանկը պարունակում է ներքին էլեկտրոնային հղումներ, ինչը կդյուրինացնի դրանից օգտվելը:

[3]«Կրթության մասին» ՀՀ օրենք՝ http://translation-centre.am/pdf/Translat/HH_orenk/Education/HO_297_Education_en.pdf, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք՝ http://translation-centre.am/pdf/Translat/HH_orenk/Education/HO_164_N_Pr_Voc_Handi_Sec_Edu_en.pdf, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք՝ http://translation-centre.am/pdf/Translat/HH_orenk/Education/HO_62_N_High_Postgr_Edu_en.pdf:

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| CV | Curriculum Vitae |
| ECTS | European credit transfer and accumulation system |
| ECVET | European credit system for vocational education and training |
| EQAVET | European quality assurance in vocational education and training |
| EQF | European qualifications framework |
| GCE | General certificate of education |
| IAG | Information, advice and guidance |
| ICT | Information and communication technology |
| ILO | International Labour Organization |
| ISCED | International Standard Classification of Education |
| NGO | Non-governmental organisation |
| NQ | National qualifications |
| OECD | Organisation for Economic Co-operation and Development |
| VET | Vocational education and training |
| ԱՄԿ | Աշխատանքի միջազգային կազմակերպություն |
| ԿՄՍԴ | Կրթության միջազգային ստանդարտ դասակարգում |
| ԿՓԵՀ | Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՄԿՈՒ | Մասնագիտական կրթություն և ուսուցում |
| ՄԿՈՒԵԿ | Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգ |
| ՄԿՈՒՈԵԱ | Մասնագիտական կրթության և ուսուցման որակի եվրոպական ապահովում |
| ՈԵՇ | Որակավորումների եվրոպական շրջանակ |
| ՈԿԿ | Ոչ կառավարական կազմակերպություն |
| ՏՀԶԿ | Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն |
| ՏՀՏ | Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ |

# ՄԱՍ 1. ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

## Ա Մ Փ Ո Փ   Բ Ա Ռ Ա Ց Ա Ն Կ

| № | ԱՆԳԼԵՐԵՆ ԵԶՐՈՒՅԹԸ | ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔԸ |
|---|---|---|
| 1 | Access to education and training | Մուտք դեպի կրթություն և ուսուցում (կրթություն և ուսուցում ստանալու հնարավորություն) |
| 2 | Accreditation of an education or training programme | Հավատարմագրում՝ կրթության կամ ուսուցման ծրագրի |
| 3 | Accreditation of an education or training provider | Հավատարմագրում՝ կրթություն կամ ուսուցում իրականացնողի |
| 4 | Adaptability | Հարմարունակություն |
| 5 | Adult education | Մեծահասակների կրթություն |
| 6 | Ageing society | Ծերացող հասարակություն |
| 7 | Alternance training | Ուսուցում հաջորդման եղանակով |
| 8 | Apprenticeship | Աշկերտություն |
| 9 | Assessment of learning outcomes | Ուսումնառության արդյունքների գնահատում |
| 10 | Attractiveness of vocational education and training | Մասնագիտական կրթության և ուսուցման գրավչություն |
| 11 | Awarding body | Շնորհող մարմին |
| 12 | Basic information and communication technology (ICT) skills | Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) հիմնական հմտություններ |
| 13 | Basic skills | Հիմնական հմտություններ |
| 14 | Benefits of education and training | Կրթության և ուսուցման օգուտները |
| 15 | Certificate / diploma / title | Վկայական (վկայագիր, հավաստագիր) / դիպլոմ / կոչում (աստիճան) |
| 16 | Certification of learning outcomes | Հավաստագրում՝ ուսումնառության արդյունքների |
| 17 | Civil society | Քաղաքացիական հասարակություն |

| | | |
|---|---|---|
| 18 | Comparability of qualifications | Համադրելիություն՝ որակավորումների |
| 19 | Compensatory learning | Համակշռող (լրացնող) ուսումնառություն |
| 20 | Competence | Կարողություն |
| 21 | Compulsory education | Պարտադիր կրթություն |
| 22 | Continuing education and training | Շարունակական (լրացուցիչ) կրթություն և ուսուցում |
| 23 | Credit system | Կրեդիտային համակարգ |
| 24 | Curriculum | Կրթական ծրագիր |
| 25 | Digital competence / digital literacy | Թվային կարողություն / թվային գրագիտություն |
| 26 | Digital divide / digital gap | Թվային ճեղքվածք / թվային բաց |
| 27 | Distance education and training | Հեռավար կրթություն և ուսուցում |
| 28 | Dropout | Մաղում |
| 29 | Education or training path | Հետագիծ՝ կրթության կամ ուսուցման |
| 30 | Education or training pathway | Ուղեգիծ՝ կրթության կամ ուսուցման |
| 31 | Education or training provider | Կրթություն կամ ուսուցում իրականացնող |
| 32 | Educational attainment | Կրթական մակարդակ |
| 33 | E-learning | Էլ-ուսումնառություն |
| 34 | Emerging / new skills | Ի հայտ եկող / նոր հմտություններ |
| 35 | Employability | Զբաղունակություն |
| 36 | Europass | Եվրոփաս |
| 37 | European credit system for vocational education and training (ECVET) | Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգ (ՄԿՈՒԵԿ) |
| 38 | European credit transfer and accumulation system (ECTS) | Կրեդիտների փոխանցման և կուտակ-ման եվրոպական համակարգ (ԿՓԵՀ) |
| 39 | European governance | Եվրոպական կառավարում |
| 40 | European qualifications framework for lifelong learning (EQF) | Ցկյանս ուսումնառության՝ որակավորումների եվրոպական շրջանակ (ՈԵՇ) |

| | | |
|---|---|---|
| 41 | European quality assurance in vocational education and training (EQAVET) | Մասնագիտական կրթության և ուսուցման որակի եվրոպական ապահովում (ՄԿՈՒՈԵԱ) |
| 42 | Evaluation of education and training | Կրթության և ուսուցման գնահատում |
| 43 | Formal learning | Ֆորմալ ուսումնառություն |
| 44 | Green skills | Կանաչ հմտություններ |
| 45 | Guidance and counselling / information, advice and guidance (IAG) | Ուղղորդում և խորհրդատվություն / տեղեկատվություն, խորհրդատվություն և ուղղորդում |
| 46 | Human capital | Մարդկային կապիտալ |
| 47 | Individual learning account | Ուսումնառության անհատական հաշվառք |
| 48 | Informal learning | Ինֆորմալ ուսումնառություն |
| 49 | Information and communication technology (ICT) | Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՏՀՏ) |
| 50 | Information and communication technology (ICT) skills | Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) հմտություններ |
| 51 | Initial education and training | Հիմնական (սկզբնական) մասնագիտական կրթություն և ուսուցում |
| 52 | ISCED level 0 – Early childhood education | ԿՄՍԴ մակարդակ 0. Վաղ մանկական կրթություն |
| 53 | ISCED level 1 – Primary education | ԿՄՍԴ մակարդակ 1. Տարրական կրթություն |
| 54 | ISCED level 2 – Lower secondary education | ԿՄՍԴ մակարդակ 2. Հիմնական ընդհանուր կրթություն |
| 55 | ISCED level 3 – Upper secondary education | ԿՄՍԴ մակարդակ 3. Միջնակարգ կրթություն |
| 56 | ISCED level 4 – Post-secondary non-tertiary education | ԿՄՍԴ մակարդակ 4. Հետմիջնակարգ ոչ բարձրագույն կրթություն |
| 57 | ISCED level 5 – Short-cycle tertiary education | ԿՄՍԴ մակարդակ 5. Բարձրագույն կրթության կարճ պարբերաշրջան |
| 58 | ISCED level 6 – Bachelor’s or equivalent level | ԿՄՍԴ մակարդակ 6. Բակալավրի կամ դրան համարժեք մակարդակ |
| 59 | ISCED level 7 – Master or | ԿՄՍԴ մակարդակ 7. Մագիստրոսի կամ |

| | | |
|---|---|---|
| | equivalent level | դրան համարժեք մակարդակ |
| 60 | ISCED level 8 – Doctoral or equivalent | ԿՄՍԴ մակարդակ 8. Դոկտորական կամ դրան համարժեք մակարդակ |
| 61 | Job | Պաշտոն (աշխատանք) |
| 62 | Job placement | Աշխատանքի տեղավորում |
| 63 | Key skills / Key competences | Առանցքային հմտություններ / Առանցքային կարողություններ |
| 64 | Know-how | Նոու-հաու |
| 65 | Knowledge | Գիտելիք |
| 66 | Knowledge society / knowledge-based society | Գիտելիքի հասարակություն / գիտելիքահենք հասարակություն |
| 67 | Learning | Ուսումնառություն |
| 68 | Learning by doing | Ուսումնառություն՝ գործելու միջոցով |
| 69 | Learning by using | Ուսումնառություն՝ օգտագործելու միջոցով |
| 70 | Learning community | Ուսումնառող համայնք |
| 71 | Learning content | Ուսումնառության բովանդակություն |
| 72 | Learning facilitator | Ուսումնառության ֆասիլիտատոր |
| 73 | Learning organisation | Ուսումնառող կազմակերպություն |
| 74 | Learning outcomes | Ուսումնառության արդյունքներ |
| 75 | Learning region | Ուսումնառող տարածաշրջան |
| 76 | Level of qualification | Մակարդակ՝ որակավորման |
| 77 | Lifelong learning | Ցկյանս (կենսատև) ուսումնառություն |
| 78 | Lifewide learning | Համընդգրկուն (կենսափյուռ) ուսումնառություն |
| 79 | Low-skilled person | Ցածր որակավորված անձ |
| 80 | Mentoring | Մենթորություն |
| 81 | Mobility | Շարժունակություն |
| 82 | Mutual Recognition of qualifications | Փոխճանաչում՝ որակավորումների |
| 83 | New basic skills | Նոր հիմնական հմտություններ |
| 84 | Non-formal learning | Ոչ ֆորմալ ուսումնառություն |
| 85 | Occupation | Զբաղմունք |

| | | |
|---|---|---|
| 86 | Off-the-job training | Ուսուցում՝ աշխատանքից դուրս |
| 87 | On-the-job training | Ուսուցում՝ աշխատանքում |
| 88 | Open learning | Բաց ուսումնառություն |
| 89 | Overqualification | Գերորակավորվածություն |
| 90 | Permeability of education and training systems | Կրթության և ուսուցման համակարգի թափանցելիություն |
| 91 | Post-compulsory education | Հետպարտադիր կրթություն |
| 92 | Professional development | Մասնագիտական զարգացում |
| 93 | Programme of education or training | Կրթության կամ ուսուցման ծրագիր |
| 94 | Qualification | Որակավորում |
| 95 | Qualification system | Որակավորման համակարգ |
| 96 | Qualifications framework | Որակավորումների շրջանակ |
| 97 | Recognition of learning outcomes | Ուսումնառության արդյունքների ճանաչում |
| 98 | Regulated profession | Կարգավորվող մասնագիտություն |
| 99 | Retraining | Վերապատրաստում |
| 100 | Secondary school leaving certificate / baccalaureate | Միջնակարգ կրթության վկայական / բակալորիա |
| 101 | Sector | Ճյուղ (ոլորտ)՝ տնտեսության |
| 102 | Skills | Հմտություններ |
| 103 | Skill gap | Հմտությունների բաց |
| 104 | Skill mismatch | Հմտությունների անհամապատասխանություն |
| 105 | Skill needs | Հմտությունների պահանջ |
| 106 | Skill obsolescence | Հմտությունների հնացածություն |
| 107 | Skill shortage | Հմտությունների անբավարարություն |
| 108 | Skills audit | Հմտությունների աուդիտ |
| 109 | Social cohesion | Սոցիալական համախմբվածություն |
| 110 | Social dialogue | Սոցիալական երկխոսություն |
| 111 | Social inclusion | Սոցիալական ներգրավվածություն |
| 112 | Social partners | Սոցիալական գործընկերներ |

| | | |
|---|---|---|
| 113 | Special needs education | Հատուկ կարիքներին ուղղված կրթություն |
| 114 | Standard | Չափորոշիչ |
| 115 | Teacher | Դասավանդող |
| 116 | Trainer | Ուսուցանող |
| 117 | Training course planning and design | Դասընթացի պլանավորում և ձևավորում |
| 118 | Training needs analysis | Ուսուցման կարիքների վերլուծություն |
| 119 | Training of trainers | Ուսուցանողների ուսուցում |
| 120 | Transferability of learning outcomes | Ուսումնառության արդյունքների փոխանցելիություն |
| 121 | Transition from school or training to work | Անցում կրթությունից կամ ուսուցումից դեպի աշխատանք |
| 122 | Transparency of qualifications | Թափանցիկություն՝ որակավորումների |
| 123 | Tutoring | Թյութորություն (թյութորինգ) |
| 124 | Underqualification | Թերորակավորվածություն |
| 125 | Unit of learning outcomes (ECVET) | Ուսումնառության արդյունքների միավոր (ՄԿՈՒԵԿ) |
| 126 | Upskilling | Որակավորման բարձրացում |
| 127 | Validation of learning outcomes | Ուսումնառության արդյունքների վավերացում |
| 128 | Valuing learning | Ուսումնառության արժևորում |
| 129 | Vocational education and training (VET) | Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ) |
| 130 | Work-based learning | Աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն |

# ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲԱՌԱՑԱՆԿ

A | B | C | D | E | F | G | H | I | J | K | L | M | N | O | P | Q | R | S | T | U | V | W

| № | ԱՆԳԼԵՐԵՆ ԵԶՐՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ | ՀԱՅԵՐԵՆ ԵԶՐՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ |
|---|---|---|
| **1** | **Access to education and training** | **Մուտք դեպի կրթություն և ուսուցում** (**կրթություն և ուսուցում ստանալու հնարավորություն**) |
| | Conditions, circumstances or requirements (such as qualifications, education level, competences or work experience) governing admittance to and participation in educational institutions or programmes. | Ուսումնական հաստատություն ընդունվելու կամ կրթական ծրագրում ընդգրկվելու գործընթացները կարգավորող պայմաններ, հանգամանքներ և պահանջներ (օրինակ՝ որակավորումներ, կրթության մակարդակ, կարողություններ կամ աշխատանքային փորձ և այլն): |
| **2** | **Accreditation of an education or training programme** | **Հավատարմագրում՝ կրթության կամ ուսուցման ծրագրի** |
| | A process of quality assurance through which a programme of education or training is officially recognised and approved by the relevant legislative or professional authorities following assessment against predetermined standards. | Որակի ապահովման գործընթաց, որի միջոցով կրթության կամ ուսուցման ծրագիրը պաշտոնապես ճանաչվում և հաստատվում է համապատասխան լիազորված (վարչական կամ մասնագիտական) մարմինների կողմից՝ նախապես սահմանված չափորոշիչների հիման վրա անցկացված գնահատման արդյունքում: |

**Նշագրում**. Տե՛ս *Accreditation of an education or training provider* (*Հավատարմագրում՝ կրթություն կամ ուսուցում իրականացնողի*) եզրույթի համար բերված մեկնաբանությունը՝ ստորև:

| 3 | Accreditation of an education or training provider | Հավատարմագրում՝ կրթություն կամ ուսուցում իրականացնողի |
|---|---|---|
| | A process of quality assurance through which an education or training provider is officially recognised and approved by the relevant legislative or professional authorities following assessment against predetermined standards. | Որակի ապահովման գործընթաց, որի միջոցով կրթություն կամ ուսուցում իրականացնողը պաշտոնապես ճանաչվում է համապատասխան լիազորված (վարչական կամ մասնագիտական) մարմինների կողմից՝ նախապես սահմանված չափորոշիչների հիման վրա անցկացված գնահատման արդյունքում: |

**Նշագրում**. «Կրթության մասին» ՀՀ օրենքում օգտագործված է «***պետական հավատարմագրում***» հասկացությունը, որը սահմանված է հետևյալ կերպ (հոդված 3, կետ 18). «*պետության կողմից՝ պետական կրթական չափորոշիչներին մասնագետների պատրաստման որակի համապատասխանության ճանաչումը*»: Բացի այդ, նույն օրենքի 42-րդ հոդված 1-ին մասը սահմանում է, որ «*Միջին և բարձրագույն մասնագիտական կրթության գծով պետական հավատարմագրումն իրականացվում է ըստ ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների*»: Այս երկու դրույթների համադրությունն ապահովում է համապատասխանություն Բառացանկի *Accreditation of an education or training programme* (***Հավատարմագրում՝ կրթության կամ ուսուցման ծրագրի***) և *Accreditation of an education or training provider* (***Հավատարմագրում՝ կրթություն կամ ուսուցում իրականացնողի***) եզրույթների սահմանումների հետ, սակայն նպատակահարմար կլիներ վերանայել վերոնշյալ օրենքում տրված սահմանումն այն առավել ամբողջական դարձնելու նպատակով:

«Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքում նույն՝ «***պետական հավատարմագրում***» եզրույթը սահմանված է[4] (հոդված 3, կետ 12) որպես «*պետության կողմից բուհի, կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչում*»: Ըստ էության՝ նույն իմաստն է կրում, ինչ որ «Կրթության մասին» ՀՀ օրենքում տրված սահմանումը:

[4] Երկու տարբեր օրենքներում նույն եզրույթի տարբեր սահմանումների առկայությունն ինքնին անընդունելի է:

| | | |
|---|---|---|
| **4** | **Adaptability** | **Հարմարունակություն** |
| | Capacity of an organisation or of an individual to adapt to new technologies, new market conditions and new work patterns. | Կազմակերպության կամ անհատի՝ նոր տեխնոլոգիաներին, շուկայի նոր պայմաններին և աշխատանքի կազմակերպման նոր ձևերին հարմարվելու (ադապտացվելու) ունակություն: |
| **5** | **Adult education** | **Մեծահասակների կրթություն** |
| | General or vocational education provided for adults after initial education and training for professional and/or personal purposes, and which aims to:<br>• provide general education for adults in topics of particular interest to them (e.g. in open universities);<br>• provide compensatory learning in basic skills which individuals may not have acquired earlier in their initial education or training (such as literacy, numeracy) and thus to;<br>• give access to qualifications not gained, for various reasons, in the initial education and training system;<br>• acquire, improve or update knowledge, skills or competences in a specific field: this is continuing education and training.<br>***Comment***: adult education is close to, but not synonymous with continuing education and training. | Հիմնական (սկզբնական) կրթությունից կամ ուսուցումից հետո, մասնագիտական կամ անձնական նպատակով մեծահասակներին տրամադրվող ընդհանուր կամ մասնագիտական կրթություն, որի նպատակն է՝<br>• մեծահասակներին տրամադրել նրանց հետաքրքրող որևէ թեմային վերաբերող ընդհանուր կրթություն (օրինակ՝ բաց համալսարաններում).<br>• ապահովել հիմնական (սկզբնական) կրթության կամ ուսուցման շրջանակներում ձեռք չբերած հիմնական հմտություններին (ինչպիսիք են՝ գրագիտությունը, թվաբանությունը) վերաբերող համակշռող ուսումնառություն և դրանով իսկ՝<br>• արտոնել մուտք դեպի հիմնական (սկզբնական) կրթության կամ ուսուցման համակարգում որևէ պատճառով ձեռք չբերված որակավորումների ստացում,<br>• ձեռք բերել, բարելավել, թարմացնել որևէ կոնկրետ ոլորտի վերաբերող գիտելիք, հմտություններ կամ կարողություններ (այն է՝ շարունակական կրթություն ու ուսուցում):<br>***Մեկնաբանություն***. մեծահասակների կրթությունը մոտ է շարունակական կրթությանն ու ուսուցմանը, սակայն դրա հոմանիշը չէ: |

**Նշագրում**. «*մեծահասակների կրթություն և ուսուցում*» հասկացությունը հանդիպում է միայն «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում (հոդված 17, կետ 1 և հոդված 18, մաս 1, կետ 5), սակայն դրան որևէ սահմանում տրված չէ:

| | | |
|---|---|---|
| **6** | **Ageing society** | **Ծերացող հասարակություն** |
| | A society characterised by an increasing proportion of older people, usually linked to a declining birth rate.<br>***Comment***: in an aging society, education and training provision must prevent:<br>• skill shortages and gaps;<br>• early retirement by retraining and upskilling older workers. | Հասարակություն, որը բնութագրվում է տարեցների աճող համամասնությամբ, ինչը սովորաբար կապված է ծնելիության մակարդակի անկման հետ:<br>***Մեկնաբանություն***. ծերացող հասարակությունում կրթության և ուսուցման իրականացումը պետք է կանխի՝<br>• հմտությունների անբավարարությունը և բացերը,<br>• վաղաժամ թոշակավորվելը՝ տարեց աշխատողների վերապատրաստում-ների և որակավորման բարձրացման միջոցով: |
| **7** | **Alternance training** | **Ուսուցում հաջորդման եղանակով** |
| | Education or training combining periods in an educational institution or training centre and in the workplace. The alternance scheme can take place on a weekly, monthly or yearly basis. Depending on the country and applicable status, participants may be contractually linked to the employer and/or receive a remuneration.<br>***Comment***: the German 'dual system' is an example of alternance training. | Կրթություն կամ ուսուցում, որը համատե-ղում է ուսումնական հաստատությունում կամ ուսուցման կենտրոններում և աշխա-տավայրում անցկացվող պարբերաշրջան-ները: Հաջորդման սխեման կարող է տե-ղի ունենալ շաբաթական, ամսական կամ տարեկան պարբերականությամբ: Կախ-ված երկրից կամ կիրառելիության կար-գավիճակից՝ մասնակիցները կարող են կապված լինել գործատուի հետ պայմա-նագրով և/կամ դրամական փոխհատու-ցում ստանալ:<br>***Մեկնաբանություն***. Գերմանական «դուալ համակարգը» հաջորդման եղանակով ուսուցման մի օրինակ է: |

| | | |
|---|---|---|
| **8** | **Apprenticeship** | **Աշկերտություն** |
| | Systematic, long-term training alternating periods at the workplace and in an educational institution or training centre. The apprentice is contractually linked to the employer and receives remuneration (wage or allowance). The employer assumes responsibility for providing the trainee with training leading to a specific occupation.<br>***Comments:***<br>• in French, the term 'apprentissage' relates to both apprenticeship and the process of learning (see 'learning');<br>• the German 'dual system' is an example of apprenticeship. | Կանոնավոր, երկարաժամկետ ուսուցում (ուսումնառություն), որի շրջանակներում մեկը մյուսին են հաջորդում ուսումնառությունն աշխատավայրում և ուսումնական հաստատությունում կամ ուսուցման կենտրոնում: Աշկերտը կապված է գործատուի հետ պայմանագրով և ստանում է դրամական փոխհատուցում (աշխատավարձ կամ նպաստ): Գործատուն պատասխանատվություն է ստանձնում իրականացնել որոշակի զբաղմունքի միտված ուսուցում:<br>***Մեկնաբանություններ.***<br>• Ֆրանսերենում «apprentissage» եզրույթը վերաբերում է ինչպես աշկերտությանը, այնպես էլ ուսումնառության գործընթացին (տես՝ «ուսումնառություն»).<br>• Գերմանական «դուալ համակարգը» աշկերտության օրինակ է: |
| **9** | **Assessment of learning outcomes** | **Ուսումնառության արդյունքների գնահատում** |
| | Process of appraising knowledge, know-how, skills and/or competences of an individual against predefined criteria (learning expectations, measurement of learning outcomes). Assessment is typically followed by certification. | Անձի գիտելիքները, նոու-հաուն, հմտությունները և/կամ կարողությունները նախապես սահմանված չափանիշների (ուսումնառության ակնկալիքներ, ուսումնառության արդյունքների չափում) հետ համեմատելու միջոցով իրականացվող գնահատման գործընթաց: Սովորաբար գնահատմանը հաջորդում է հավաստագրումը: |
| **10** | **Attractiveness of vocational education and training** | **Մասնագիտական կրթության և ուսուցման գրավչություն** |
| | Capacity of vocational education and training to: | Մասնագիտական կրթության և ուսուցման ունակությունը՝<br>• քաջալերելու (խրախուսելու) անձանց գիտակցված կերպով ընտրել մասնա- |

| | | |
|---|---|---|
| | • encourage individuals to deliberately choose vocational education and training;<br>• offer quality qualifications that open up career prospects;<br>• persuade employers to recruit holders of VET certificates.<br>***Comment***: attractiveness of VET depends on various factors:<br>• image of VET and parity of esteem with other educational pathways;<br>• flexibility of pathways allowing mobility between VET and academic education;<br>• quality of VET offer;<br>• involvement of stakeholders, including social partners, in VET and in the provision of guidance and counselling. | գիտական կրթությունը և ուսուցումը.<br>• առաջարկելու որակյալ որակավորումներ, որոնք բացում են կարիերայի հեռանկարներ.<br>• շահադրդելու գործատուներին աշխատանքի ընդունել ՄԿՈՒ վկայականներ ունեցողներին:<br>***Մեկնաբանություն***. ՄԿՈՒ գրավչությունը կախված է տարբեր գործոններից.<br>• ՄԿՈՒ «կերպարը» և կրթության այլ ուղեգծերի հետ համարժեքությունը,<br>• ՄԿՈՒ և ակադեմիական կրթության միջև շարժունակության հնարավորություն ընձեռող ուղեգծերի ճկունությունը,<br>• ՄԿՈՒ առաջարկի որակը,<br>• ՄԿՈՒ-ի և ուղղորդման ու խորհրդատվության մեջ շահակիցների, այդ թվում՝ սոցիալական գործընկերների ներգրավվածությունը: |
| **11** | **Awarding body** | **Շնորհող մարմին** |
| | Body issuing qualifications (certificates, diplomas or titles) formally recognising the learning outcomes (knowledge, skills and/or competences) of an individual, following an assessment and validation procedure. | Որակավորումներ (վկայականներ, դիպլոմներ կամ կոչումներ/աստիճաններ) շնորհող մարմին, որը պաշտոնապես ճանաչում է անձի ուսումնառության արդյունքները (գիտելիքները, հմտությունները և/կամ կարողությունները)՝ գնահատման և վավերացման ընթացակարգի համաձայն: |
| **12** | **Basic information and communication technology (ICT) skills** | **Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) հիմնական հմտություններ** |
| | The skills needed to use efficiently the elementary functions of information and communication technologies to retrieve, assess, store, produce, | Հմտություններ, որոնք անհրաժեշտ են տեղեկատվություն ստանալու, գնահատելու, պահելու, ստեղծելու, ներկայացնելու ու փոխանակելու և ինտերնետի միջոցով շփվելու ու համագործակցային |

| | | |
|---|---|---|
| | present and exchange information, and to communicate and participate in collaborative networks via the internet.<br>***Comment:*** basic ICT skills are now part of key skills/key competences. | ցանցերին մասնակցելու նպատակով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների տարրական գործառույթների արդյունավետ օգտագործման համար:<br>***Մեկնաբանություն.*** ՏՀՏ հիմնական հմտությունները ներկայումս առանցքային հմտությունների/առանցքային կարողությունների մաս են կազմում: |
| **13** | **Basic skills** | **Հիմնական հմտություններ** |
| | The skills needed to live in contemporary society, such as listening, speaking, reading, writing and mathematics.<br>***Comment:*** together with new basic skills, basic skills form key skills. | Արդի հասարակությունում ապրելու համար անհրաժեշտ հմտություններ, օրինակ՝ լսելու, խոսելու, կարդալու, գրելու և մաթեմատիկական հմտություններ:<br>***Մեկնաբանություն.*** նոր հիմնական հմտությունների հետ համատեղ, հիմնական հմտությունները կազմում են առանցքային հմտությունները: |
| **14** | **Benefits of education and training** | **Կրթության և ուսուցման օգուտները** |
| | Socioeconomic added value of education and training.<br>***Comments:***<br>• benefits of education and training can be private, namely received by individual persons, enterprises or institutions, or public, benefiting a whole region, economy or society;<br>• benefits can be monetary (such as wages) or socioeconomic (health, wellbeing, social cohesion, reduced crime, employment, productivity, growth). | Կրթության և ուսուցման սոցիալ-տնտեսական հավելյալ արժեքը:<br>***Մեկնաբանություններ.***<br>• կրթության և ուսուցման օգուտները կարող են լինել մասնավոր, այն է՝ ստացված լինեն առանձին անհատների, ձեռնարկությունների կամ հաստատությունների կողմից, կամ հասարակական՝ ի շահ մի ամբողջ տարածաշրջանի, տնտեսության կամ հասարակության.<br>• օգուտները կարող են լինել դրամական (ինչպես օրինակ՝ աշխատավարձերը) կամ սոցիալ-տնտեսական (առողջություն, բարեկեցություն, սոցիալական համախմբվածություն, նվազեցված հանցագործություն, զբաղվածություն, արտադրողականություն, աճ): |

| | | |
|---|---|---|
| **15** | **Certificate / diploma / title** | **Վկայական (վկայագիր, հավաստագիր) / դիպլոմ / կոչում (աստիճան)** |
| | An official document, issued by an awarding body, which records achievements of an individual. | Շնորհող մարմնի կողմից տրված պաշտոնական փաստաթուղթ, որն արձանագրում է անձի նվաճումները: |

**Նշագրում**. Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի (հոդված 44, մաս 1)՝ ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթեր են համարվում *վկայականը, ատեստատը* և *դիպլոմը* (հանձնվում են ուսումնական հաստատությունը կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած անձանց):

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով (հոդված 13, մաս 2) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ավարտական փաստաթղթեր են սահմանվում՝ 1) *արհեստագործական կրթության դիպլոմը և դրա ներդիրը*, 2) *միջին մասնագիտական կրթության դիպլոմը և դրա ներդիրը* և 3) *մասնագիտական ուսուցման, ներառյալ՝ վարպետության ուսուցման որակավորման վկայականը*:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով (հոդված 10, մաս 1) բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության ավարտական փաստաթղթեր են սահմանվում *բակալավրի դիպլոմը, մագիստրոսի դիպլոմը, բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմը, հետազոտողի դիպլոմը, օրդինատորի դիպլոմը*՝ իրենց *ներդիրներով* (տրվում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց):

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում ավարտական փաստաթղթերին որևէ սահմանում տրված չէ:

| | | |
|---|---|---|
| **16** | **Certification of learning outcomes** | **Հավաստագրում՝ ուսումնառության արդյունքների** |
| | Process of issuing a certificate, diploma or title formally attesting that a set of learning outcomes (knowledge, know-how, skills and/or competences) acquired by an individual have been assessed by a competent body against a predefined standard. | Անձի ձեռք բերած որոշակի ուսումնառության արդյունքներ (գիտելիք, նոու-հաու, հմտություններ և/կամ կարողություններ) իրավասու մարմնի կողմից՝ ըստ նախապես սահմանված չափորոշիչների գնահատված լինելու մասին պաշտոնապես հավաստող վկայական, դիպլոմ կամ կոչում/աստիճան շնորհելու գործընթաց: |

| | | |
|---|---|---|
| **17** | **Civil society** | **Քաղաքացիական հասարակություն** |
| | A ‘third sector’ of society beside the State and the market, embracing institutions, groups and associations (either structured or informal), which may act as mediator between citizens and public authorities. | Հասարակության «երրորդ հատվածը»՝ պետությունից և շուկայից զատ, որն ընդգրկում է քաղաքացիների և պետական իշխանությունների միջև միջնորդ դեր խաղացող ինստիտուտներ, խմբեր և միավորումներ (պաշտոնականացված կամ ոչ պաշտոնական): |
| **18** | **Comparability of qualifications** | **Համադրելիություն՝ որակավորումների** |
| | Extent to which it is possible to establish equivalence between the level and content of qualifications (certificates diplomas or titles) at sectoral, regional, national or international levels.<br>***Comment:*** comparability of qualifications improves individuals’ employability and mobility. This term must not be confused with ‘equivalence of qualifications’ (which refers to the similarity of value of certificates or diplomas). | Ճյուղային, տարածքային, ազգային ու միջազգային մակարդակներում որակավորումների մակարդակի ու բովանդակության (վկայականներ, դիպլոմներ կամ կոչում/աստիճան) միջև համարժեքություն հաստատելու հնարավորության աստիճան:<br>***Մեկնաբանություն***. որակավորումների համադրելիությունը բարելավում է անձի զբաղունակությունը և շարժունակությունը: Այս եզրույթը չպետք է շփոթել «որակավորումների համարժեքության» հետ (որը վերաբերում է վկայականների կամ դիպլոմների արժեքի նույնականությանը): |
| **19** | **Compensatory learning** | **Համակշռող (լրացնող) ուսումնառություն** |
| | Learning intended to fill the gaps accumulated by individuals during education or training, mainly to enable them to take part in training. | Ուսումնառություն, որի նպատակն է լրացնել անհատի կրթության և ուսուցման ընթացքում կուտակված բացերը, հիմնականում՝ ուսուցման մասնակցելու հնարավորություն ընձեռելու համար: |

| | | |
|---|---|---|
| **20** | **Competence**[5] | **Կարողություն** |
| | Ability to apply learning outcomes adequately in a defined context (education, work, personal or professional development).<br>*or*<br>Ability to use knowledge, skills and personal, social and/or methodological abilities, in work or study situations and in professional and personal development.<br>***Comment:*** competence is not limited to cognitive elements (involving the use of theory, concepts or tacit knowledge); it also encompasses functional aspects (including technical skills) as well as interpersonal attributes (e.g. social or organisational skills) and ethical values. | Ուսումնառության արդյունքները որոշակի համատեքստում (կրթություն, աշխա-տանք, անձնային կամ մասնագիտական զարգացում) պատշաճ կերպով կիրառելու ունակություն:<br>*կամ*<br>Գիտելիքը, հմտությունները և անձնական, սոցիալական և/կամ մեթոդաբանական ու-նակություններն աշխատանքային կամ ու-սումնառության իրավիճակներում, ինչպես նաև մասնագիտական և անձնային զար-գացման գործում կիրառելու ունակություն:<br>***Մեկնաբանություն***. կարողությունը չի սահմանափակվում իմացական տարրե-րով (ներառյալ՝ տեսության կիրառումը, հասկացությունները և ենթադրական գի-տելիքը), այն ներառում է նաև գործառնա-կան կողմերը (ներառյալ՝ տեխնիկական հմտությունները), ինչպես նաև միջանձ-նային (օրինակ՝ սոցիալական կամ կազ-մակերպչական հմտությունները) և բարոյական արժեքները: |
| **21** | **Compulsory education** | **Պարտադիր կրթություն** |
| | Minimal legal standards and duration of obligatory schooling. | Պարտադիր դպրության նվազագույն իրավական չափորոշիչներն ու տևողությունը: |

[5] According to the Council Recommendation on the European Qualifications Framework for lifelong learning and repealing the Recommendation of the European Parliament and of the Council of 23 April 2008 on the establishment of the European Qualifications Framework for lifelong learning (Brussels, 10.6.2016, COM(2016) 383/2, 2016/0180), in the Descriptors defining the levels in the European Qualifications Framework (EQF), the term “competence” is replaced by the term “Responsibility and Autonomy” and in the NQF context means “the ability of the learner to apply knowledge and skills autonomously and with responsibility”. Համաձայն Եվրահանձնաժողովի 2016թ. երաշխավորությունների՝ ՈԵՇ-ի ամակարդակները սահմանող բնութագրիչներում «Կարողություն» եզրույթը փոխարինված է «Պատասխանա-տվություն և ինքնավարություն» եզրույթով, որը նշանակում է «գիտելիքը և հմտությունները ինքնավար և պատասխանատու կերպով կիրառելու՝ ուսումնառողի ունակությունը»:

## 22 Continuing education and training

Education or training after [initial education] or entry into working life, aimed at helping individuals to:

- improve or update their [knowledge] and/or [skills];
- acquire new skills for a career move or retraining;
- continue their personal or professional development.

***Comment:*** continuing education and training is part of lifelong learning and may encompass any kind of education (general, specialised or vocational, [formal] or [non-formal], etc.). it is crucial for [employability] of individuals.

## Շարունակական (լրացուցիչ) կրթություն և ուսուցում

[Հիմնական (սկզբնական) կրթությանը] կամ աշխատաշուկա մուտք գործելուն հաջորդող կրթություն կամ ուսուցում՝ նպատակաուղղված աջակցելու անհատներին՝

- բարելավել կամ արդիականացնել իրենց [գիտելիքը] և/կամ [հմտությունները],
- ձեռք բերել կարիերայի զարգացման կամ վերապատրաստման համար անհրաժեշտ նոր հմտություններ,
- շարունակել իրենց անձնային կամ մասնագիտական զարգացումը:

***Մեկնաբանություն.*** շարունակական կրթությունը և ուսուցումը ցկյանս ուսումնառության բաղկացուցիչ մաս են և կարող են ներառել ցանկացած տեսակի կրթություն (ընդհանուր, մասնագիտացված կամ մասնագիտական, [ֆորմալ] կամ [ոչ ֆորմալ]): Այն վճռորոշ է անձանց [զբաղունակության] համար:

**Նշագրում.** «Կրթության մասին» ՀՀ օրենքում «***շարունակական կրթություն***» հասկացությունը հիշատակվում է 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում, սակայն որևէ կերպ չի սահմանվում: Միաժամանակ, օրենքում օգտագործված հասկացությունների շարքում սահմանվում է (հոդված 3, կետ 1.6) «***լրացուցիչ կրթություն (ուսուցում)***» հասկացությունը որպես «*լրացուցիչ կրթական ծրագրով իրականացվող ոչ ֆորմալ ուսումնառություն, որի առավելագույն տևողությունը կարող է լինել մինչև հինգ ամիս*»: Նույն օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «*Լրացուցիչ կրթական ծրագրերը նպատակաուղղված են նախընթաց կրթության և ուսուցման արդյունքում կամ դրան զուգահեռ ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և (կամ) հմտությունները լրացնելուն, կատարելագործելուն և արդիականացնելուն*», իսկ 26-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «*Լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են անձի ամբողջ կյանքի ընթացքում մասնագիտական և անձնական կրթական պահանջմունքները բավարարելու նպատակով և համարվում են ոչ ֆորմալ ուսուցում ապահովելու միջոց*», իսկ 2-րդ մասը՝ «*Լրացուցիչ կրթական ծրագրերի խնդիրն է կատարելագործել, արդիականացնել և լրացնել մինչ այդ ձեռք բերված (նախընթաց) գիտելիքները,*

*կարողությունները, հմտությունները և արժեքները»:* Վերջին արտահայտությունը կրկնում է 10-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթը:

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով (հոդված 3) ***լրացուցիչ մասնագիտական կրթությունը*** սահմանվում է որպես «*հիմնական մասնագիտական կրթական ծրագրերից դուրս անձի մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերաորակավորումը ապահովող, որակավորումը բարձրացնող և լրացնող ուսումնական գործընթաց*»:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով (հոդված 3, կետ 4) ***լրացուցիչ կրթությունը*** սահմանվում է որպես «*մասնագիտական կրթության հենքի վրա հիմնական կրթական ծրագրերից դուրս մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերաորակավորումը ապահովող, անձի մասնագիտական որակավորման անընդհատ լրացնող կրթություն*»:

| 23 | Credit system | Կրեդիտային համակարգ |
|---|---|---|
| | An instrument designed to enable accumulation of learning outcomes gained in formal, non-formal and/or informal settings, and ease their transfer from one setting to another for validation. A credit system can be designed by describing:<br>• an education or training programme and attaching points (credits) to its components (modules, courses, placements, dissertation work, etc.); or<br>• a qualification using units of learning outcomes and attaching credit points to every unit. | Ֆորմալ, ոչ ֆորմալ և/կամ ինֆորմալ միջավայրում ձեռք բերված ուսումնառության արդյունքների կուտակումը հնարավոր դարձնելու, ինչպես նաև վավերացնելու նպատակով դրանց փոխանցումը մեկ միջավայրից մյուսը դյուրինացնելու համար մշակված գործիք: Կրեդիտային համակարգը կարող է նկարագրվել՝<br>• կրթության կամ ուսուցման ծրագրով և դրա բաղադրիչներին (մոդուլներին, դասընթացներին, պրակտիկաներին, ավարտական աշխատանքին (թեզին) և այլն) միավորներ (կրեդիտներ) համապատասխանեցնելով, կամ<br>• որակավորմամբ՝ ուսումնառության արդյունքների միավորներ կիրառելով և յուրաքանչյուր միավորին կրեդիտներ համապատասխանեցնելով: |

**Նշագրումներ**.

1. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» և «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքներով «*կրեդիտային (չափանիշային) համակարգը*» սահմանված է (հոդված 3 և հոդված 3, կետ 17՝ համապատասխանաբար)

որպես՝ *«Ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների [ակադեմիական] կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ, որը ներառում է դասավանդումը, գործնական և անհատական պարապմունքները, խորհրդատվությունները, ռեֆերատների, այլ աշխատանքների պատրաստումը, ամփոփիչ ստուգումների [քննությունների] նախապատրաստումը, գնահատումը և այլն.»*: Օրենքներում տրված սահմանումների հիմնական տարբերությունը Բառացանկի սահմանումից այն է, որ դրանցում հղում է կատարվում *ուսումնական գործընթացի կազմակերպմանը* և դրա տարրերին (*դասավանդում, գործնական և անհատական պարապմունքներ, խորհրդատվություններ* և այլն), մինչդեռ Բառացանկի սահմանումը վկայակոչում է միայն ուսումնառության արդյունքները՝ անկախ դրանց նվաճման ձևերից և ուսումնական գործընթացի կազմակերպման եղանակից: Վերջինս ավելի ժամանակակից և ընդունելի մոտեցում է:

2. Վերը նշված օրենքներում բերված սահմանման մեջ որպես «*կրեդիտային*» բառի այլընտրանք (հոմանիշ) կիրառված է *«չափանիշային»* բառը, ինչը, մեր կարծիքով, արդարացված չէ: Այսպես, օրինակ՝ Էդ. Աղայանի բառարանը (Երևան, 1976) տալիս է «չափանիշ» բառի հետևյալ բացատրությունը. «Չափելու՝ չափը վերցնելու միավոր, մասշտաբ»: Կրեդիտները, համաձայն վերոնշյալ օրենքների, կարող են շնորհվել և փոխանցվել, մինչդեռ հասկանալի է, որ չափման միավորների հետ նման գործողություններ կատարվել չեն կարող:

| 24 | Curriculum | Կրթական ծրագիր |
|---|---|---|
| | Inventory of activities related to the design, organisation and planning of an education or training action, including definition of learning objectives, content, methods (including assessment) and material, as well as arrangements for training teachers and trainers.<br>***Comment:*** the term curriculum refers to the design, organisation and planning of learning activities while the term programme refers to the implementation of these activities. | Կրթական կամ ուսուցման գործունեության մշակման, կազմակերպման և պլանավորման գործողությունների ամբողջություն՝ ներառյալ ուսումնառության նպատակները, բովանդակությանը, մեթոդները (այդ թվում՝ գնահատումը) և նյութերը, ինչպես նաև դասավանդողների և ուսուցանողների ուսուցմանը վերաբերող պայմանները:<br>***Մեկնաբանություն***. *Կրթական ծրագիր* եզրույթը վերաբերում է ուսումնառության գործողությունների մշակմանը, կազմակերպմանը և պլանավորմանը, մինչդեռ «Կրթության կամ ուսուցման ծրագիր» եզրույթը վերաբերում է այդ գործողությունների իրականացմանը: |

**Նշագրում**. Խիստ իմաստով՝ *Curriculum* հասկացությունը փոքր-ինչ ավելի լայն (ընդգրկուն) է, քան «Կրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված «***կրթական ծրագիրը***», որը սահմանվում է (հոդված 3, կետ 3) որպես «*կրթության համապատասխան մակարդակի բովանդակությունը և մասնագիտական ուղղվածությունը*» (բնականաբար, *Curriculum*-ը շատ ավելի լայն է նաև, քան «ուսումնական պլան» հասկացությունը, ինչպես հաճախ թարգմանվում է)։ Սակայն հաշվի առնելով նույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթն այն մասին, որ «*Կրթության գործընթացը* <…> *կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակներով*», ինչպես նաև 3-րդ հոդվածի 2-րդ կետում ***պետական կրթական չափորոշչին*** տրված սահմանումը՝ «*նորմատիվ, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները*[6]»՝ կարելի է ասել, որ ***կրթական ծրագիրը*** մասնավորապես՝ չափորոշչի, ուսումնական պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական ժամանակացույցի և դասացուցակի ամբողջությունն է։ Գրեթե այդպիսի սահմանում է տրված «***հանրակրթական ծրագիր***» հասկացությանը «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով՝ «*հանրակրթության նպատակների իրականացմանն ուղղված ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի և ուսուցման կազմակերպման ձևերի ամբողջություն*»։

Անհրաժեշտ է նշել սակայն, որ որոշ դեպքերում, անգլերենում *Curriculum* եզրույթն օգտագործվում է ոչ թե Բառացանկում տրված, այլ հենց ***ուսումնական պլան*** իմաստով։

| 25 | **Digital competence / digital literacy** | **Թվային կարողություն / թվային գրագիտություն** |
|---|---|---|
| | Ability to use information and communication technology (ICT).<br>***Comment:*** digital competence is underpinned by basic skills in ICT: use of computers to retrieve, assess, store, produce, present and exchange information, and to communicate and participate in collaborative networks via the internet. | Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) օգտագործման ունակություն։<br>***Մեկնաբանություն***. թվային կարողությունը հենված է ՏՀՏ հիմնական հմտությունների վրա. համակարգիչների կիրառում տեղեկատվություն որոնելու և քաղելու, գնահատելու, հավաքագրելու, արտադրելու, ներկայացնելու ու փոխանակելու, ինչպես նաև ինտերնետի միջոցով հաղորդակցվելու ու համագործակ- |

[6] «Որակական պահանջները» անորոշ հասկացություն է և որևէ տեղ չի սահմանվում։

| | | |
|---|---|---|
| | | ցային ցանցերին մասնակցելու համար: |
| **26** | **Digital divide / digital gap** | **Թվային ճեղքվածք / թվային բաց** |
| | Within populations, the gap between those who can access and use information and communication technologies (ICT) effectively, and those who cannot. | Բնակչության շրջանակներում՝ ճեղքվածք այն մարդկանց միջև, ովքեր կարող են մուտք գործել և արդյունավետ կիրառել տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները (ՏՀՏ) և նրանց, ովքեր դա անել չեն կարող: |
| **27** | **Distance education and training** | **Հեռավար կրթություն և ուսուցում** |
| | Education and training imparted at a distance through communication media: books, radio, TV, telephone, correspondence, computer or video. | Հեռավորության վրա՝ հաղորդակցման միջոցներով (ռադիո, հեռուստատեսություն, հեռախոս, նամակագրություն, համակարգիչ կամ վիդեո) իրականացվող կրթություն և ուսուցում: |

**Նշագրում**. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» և «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքներով (հոդված 3 և հոդված 3, կետ 10՝ համապատասխանաբար) ***հեռավար (դիստանցիոն) ուսուցումը*** սահմանված է որպես *«համակարգված ուսուցման ձև, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը ուսանողի կամ ունկնդրի և դասախոսի [սովորողի և դասախոսի] միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով»:*

| | | |
|---|---|---|
| **28** | **Dropout** | **Մաղում** |
| | Withdrawal from an education or training programme before its completion.<br>***Comments:***<br>• this term designates both the process (early school-leaving) and the persons who fail to complete a course (early school-leavers);<br>• besides early school-leavers, dropouts may also include learners who have completed | Կրթությունը կամ ուսուցումը լքելը մինչև համապատասխան ծրագրի ավարտելը:<br>***Մեկնաբանություններ.***<br>• այս եզրույթը բնութագրում է թե՛ գործընթացը (ուսումը վաղ լքելը) և թե՛ այն անձանց, ովքեր ձախողում են դասընթացն ավարտելը (ուսումը վաղ լքողներ).<br>• բացի ուսումը վաղ լքողներից, մաղումը կարող է ներառել նաև այն ուսումնառուներին, ովքեր ավարտել են կրթությունը կամ ուսուցումը, սակայն ձախողվել են |

| | | |
|---|---|---|
| | education or training but failed the final examinations. | ավարտական քննությունների ժամանակ: |
| **29** | **Education or training path** | **Հետագիծ՝ կրթության կամ ուսուցման** |
| | Sum of learning sequences followed by an individual to acquire knowledge, skills or competences.<br>***Comment:*** a learning path may combine formal and non-formal learning sequences. | Անհատի ուսումնառության հաջորդական փուլերի ամբողջություն՝ գիտելիք, հմտություններ և կարողություններ ձեռք բերելու նպատակով:<br>***Մեկնաբանություն.*** ուսումնառության հետագիծը կարող է համատեղել ֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնառության հաջորդական փուլեր: |
| **30** | **Education or training pathway** | **Ուղեգիծ՝ կրթության կամ ուսուցման** |
| | Set of related education or training programmes provided by schools, training centres, higher education institutions or VET providers, which eases the progression of individuals within or between activity sectors. | Դպրոցի, ուսուցման կենտրոնի, բարձրագույն ուսումնական հաստատության կամ ՄԿՈՒ իրականացնողների կողմից իրականացվող կրթության կամ ուսուցման (փոխկապակցված) ծրագրերի լրակազմ, որը դյուրինացնում է անհատների առաջխաղացումը գործունեության ոլորտների ներսում կամ դրանց միջև: |
| **31** | **Education or training provider** | **Կրթություն կամ ուսուցում իրականացնող** |
| | Any organisation or individual providing education or training services.<br>***Comment:*** education and training providers may be organisations specifically set up for this purpose, or they may be other bodies, such as employers who provide training as part of their business activities. Training providers also include independent individuals who offer services. | Կրթական կամ ուսուցման ծառայություններ մատուցող ցանկացած կազմակերպություն կամ անհատ:<br>***Մեկնաբանություն.*** կրթություն և ուսուցում իրականացնողները կարող են լինել կազմակերպություններ, որոնք ստեղծվել են հատուկ այդ նպատակով, կամ կարող են լինել այլ կառույցներ, օրինակ՝ գործատուներ, որոնք ուսուցում են իրականացնում, որպես իրենց բիզնես գործունեության մաս: Ուսուցում իրականացնողները ներառում են նաև անկախ անհատների, որոնք ծառայություններ են մատուցում: |

| | | |
|---|---|---|
| **32** | **Educational attainment** | **Կրթական մակարդակ** |
| | Highest level of education or training completed by an individual.<br>***Comments:*** educational attainment:<br>• is measured according to the highest educational programme successfully completed, which is typically certified by a qualification;<br>• can be measured against ISCED or EQF levels. | Անհատի կողից ավարտին հասցրած՝ կրթության կամ ուսուցման ամենաբարձր մակարդակը:<br>***Մեկնաբանություններ.*** Կրթության մակարդակը՝<br>• չափվում է՝ ըստ հաջողությամբ ավարտված ամենաբարձր կրթական ծրագրի, որը սովորաբար, հավաստագրվում է որակավորմամբ,<br>• կարող է չափվել ըստ ԿՄՍԴ-ի կամ ՈԵՇ-ի մակարդակների: |
| **33** | **E-learning** | **Էլ-ուսումնառություն** |
| | Learning supported by information and communication technologies (ICT).<br>***Comments:***<br>• e-learning is not limited to ’digital literacy’ (acquiring ICT skills). it may encompass multiple formats and hybrid methods: using software, internet, CD-ROM, online learning or any other electronic or interactive media;<br>• e-learning can be used as a tool for distance education and training but also to support face-to-face learning. | Ուսումնառություն՝ իրականացված տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներով (ՏՀՏ):<br>***Մեկնաբանություններ.***<br>• էլ-ուսումնառությունը չի սահմանափակվում «թվային գրագիտությամբ» (ՏՀՏ հմտությունների ձեռքբերմամբ): Այն կարող է ներառել բազմաթիվ ձևաչափեր և խառնածին (հիբրիդային) մեթոդներ. ծրագրային ապահովման օգտագործում, ինտերնետ, CD-ROM, առցանց ուսումնառություն կամ որևէ այլ էլեկտրոնային կամ փոխազդուն (ինտերակտիվ) մեդիա.<br>• էլ-ուսումնառությունը կարող է օգտագործվել որպես գործիք հեռավար կրթության և ուսուցման համար, ինչպես նաև աջակցել դեմ առ դեմ (կոնտակտային) ուսումնառությանը: |
| **34** | **Emerging / new skills** | **Ի հայտ եկող / նոր հմտություններ** |
| | Abilities for which demand is increasing in existing or new occupations. | Ունակություններ, որոնց նկատմամբ պահանջարկը գոյություն ունեցող կամ նոր զբաղմունքների շրջանակներում աճում է: |

| | | |
|---|---|---|
| | ***Comment:*** identification of new/emerging skills needs is crucial to prevent skill gaps and shortages, foster employability of citizens and meet needs of the economy. | ***Մեկնաբանություն***. նոր / ի հայտ եկող հմտությունների նկատմամբ պահանջարկի որոշարկումը շատ կարևոր է հմտությունների բացերը և անբավարարությունը կանխելու, քաղաքացիների զբաղունակությունը խթանելու և տնտեսության կարիքները բավարարելու համար: |
| **35** | **Employability** | **Զբաղունակություն** |
| | Combination of factors which enable individuals to progress towards or get into employment, to stay in employment and to progress during their careers.<br>***Comment:*** employability of individuals depends on:<br>• personal attributes (including adequacy of knowledge and skills);<br>• how these personal attributes are presented on the labour market;<br>• environmental and social contexts (incentives and opportunities offered to update and validate their knowledge and skills); and<br>• the economic context. | Գործոնների համակցություն, որն անձանց հնարավորություն է տալիս հաջողությամբ աշխատանք գտնել կամ տեղավորվել աշխատանքի, պահպանել այն և առաջընթաց ունենալ կարիերայում:<br>***Մեկնաբանություն***. Անձանց զբաղունակությունը կախված է՝<br>• անձնային հատկանիշներից (ներառյալ՝ գիտելիքի կամ հմտությունների համապատասխանությունը),<br>• աշխատաշուկայում այդ անձնային հատկանիշների ներկայացվածությունից,<br>• միջավայրային և սոցիալական համատեքստերից (նրանց գիտելիքը և հմտությունները արդիականացնելու և վավերացնելու առկա խթանիչներ և հնարավորություններ),<br>• տնտեսական համատեքստից: |
| **36** | **Europass** | **Եվրոփաս** |
| | Portfolio of five documents helping citizens to better communicate their skills and qualifications when applying for job or study in Europe. The Europass CV and the language Passport are completed by citizens themselves; the other three documents can be issued to citizens who achieve a mobility | Եվրոպայում աշխատանքի կամ ուսման դիմելիս՝ քաղաքացիների հմտություններն ու որակավորումներն ավելի լավ ներկայացնելուն աջակցող՝ հինգ փաստաթղթերի փաթեթ (պորթֆոլիո): Եվրոփասի ինքնակենսագրությունը (CV-ն) և լեզվի անձնագիրը լրացվում են քաղաքացիների կողմից՝ անձամբ: Մյուս երեք փաստաթղթերը կարող են տրվել այն քաղաքացիներին, ովքեր եվրոպական մեկ այլ երկ- |

| | | |
|---|---|---|
| | experience in another European country (Europass mobility) or who complete a formal programme of vocational education or training (certificate supplement) or of higher education (diploma supplement).<br>***Comment:*** Europass promotes an adequate appreciation of learning outcomes acquired in formal, non-formal or informal settings. | րում շարժունակության փորձ ունեն (Եվրոփասի շարժունակություն) կամ ավարտել են մասնագիտական կրթության և ուսուցման (վկայականի հավելված) կամ բարձրագույն կրթության (դիպլոմ) ֆորմալ ծրագիրը:<br>***Մեկնաբանություն***. Եվրոփասը նպաստում է ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ միջավայրերում ձեռք բերած ուսումնառության արդյունքների պատշաճ արժևորմանը: |
| **37** | **European credit system for vocational education and training (ECVET)** | **Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգ (ՄԿՈՒԵԿ)** |
| | Technical framework for transfer, validation and, where appropriate, accumulation of learning outcomes by individuals, to achieve a qualification. ECVET tools and methodology comprise a description of qualifications in units of learning outcomes with associated points, a transfer and accumulation process and complementary documents such as learning agreements, transcripts of records and ECVET users' guides.<br>• transcript of learning outcomes.<br>***Comments:***<br>• This framework aims to promote:<br>- mobility of people undertaking training;<br>- accumulation, transfer and validation of learning outcomes (either formal, non-formal or informal) | Որակավորման ձեռք բերման նպատակով ուսումնառության արդյունքների փոխանցման, վավերացման և, որտեղ դա հնարավոր է՝ անհատների կողմից այդ արդյունքների կուտակման տեխնիկական շրջանակ: ՄԿՈՒԵԿ գործիքներն ու մեթոդաբանությունը ներառում են որակավորումների նկարագրումը ուսումնառության արդյունքների և դրանց հետ կապված միավորների միջոցով, փոխանցման և կուտակման գործընթացն ու լրացուցիչ փաստաթղթերը, ինչպիսիք են՝ ուսումնառության համաձայնագրերը, գրանցումների պատճենները (վերծանումները) և ՄԿՈՒԵԿ կիրառման ուղեցույցները:<br>***Մեկնաբանություններ***.<br>• Այս շրջանակը նպատակ ունի նպաստելու.<br>- ուսուցում անցած մարդկանց շարժունակությանը,<br>- տարբեր երկրներում ձեռք բերված ուսումնառության արդյունքների (լինի ֆորմալ, ոչ ֆորմալ, թե ինֆորմալ) կուտակմանը, փոխանցմանն ու վավերացմանը, |

acquired in different countries;
- implementation of lifelong learning;
- transparency of qualifications;
- common trust and cooperation between providers of vocational training and education in Europe.

ECVET is based on the description of qualifications in terms of learning outcomes (knowledge, skills and/or competences), organised into transferable and accumulable learning units to which credit points are attached and registered in a personal transcript of learning outcomes.

- ցկյանս ուսումնառության իրականացմանը,
- որակավորումների թափանցիկությանը,
- Եվրոպայում մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնողների միջև համընդհանուր վստահությանն ու համագործակցությանը:

ՄԿՈՒԵԿ-ն հիմնված է որակավորումների նկարագրության վրա՝ արտահայտված ուսումնառության արդյունքներով (գիտելիք, հմտություններ և/կամ կարողություններ), որոնք բաղկացած են փոխանցելի և կուտակելի ուսումնառության միավորներից, իսկ վերջիններիս համապատասխանեցված են կրեդիտային միավորներ՝ գրանցված անհատի ուսումնառության արդյունքների ներդիրի մեջ:

## 38 European credit transfer and accumulation system (ECTS)

## Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ (ԿՓԵՀ)

A systematic way of describing a higher education programme by attaching credits to its components (modules, courses, placements, dissertation work, etc.), to:

- make study programmes easy to read and compare for all students, local and foreign;
- encourage mobility of students and validation of learning outcomes;
- help universities to organise and revise their study programmes.

Բարձրագույն կրթության ծրագրերի նկարագրման կանոնավոր եղանակ՝ այդ ծրագրերի բաղադրիչներին (մոդուլներին, դասընթացներին, պրակտիկաներին, ավարտական աշխատանքին (թեզին) և այլն) կրեդիտներ համապատասխանեցնելու միջոցով, որի նպատակն է՝

- ուսումնական ծրագրերն ավելի հասկանալի ու տեղացի և օտարերկրացի բոլոր ուսանողների համար դրանք ավելի համեմատելի դարձնելը,
- ուսանողների շարժունակությանը և ուսումնառության արդյունքների վավերացմանը նպաստելը,
- համալսարաններին՝ իրենց ուսումնական ծրագրերը կազմակերպելու և

| | | |
|---|---|---|
| | ***Comment:*** ECTS is based on the student workload required to achieve a programme's objectives, specified in terms of learning outcomes to be acquired. The student workload of a full-time study programme in Europe amounts in most cases to around 1500 to 1800 hours per year and in these cases one credit stands for around 25 to 30 hours. Individuals who can demonstrate similar learning outcomes acquired in other learning settings may obtain recognition and credits (waivers) from degree awarding bodies. | վերանայելու հարցում օժանդակելը: ***Մեկնաբանություն***. ԿՓԵՀ-ն հիմնված է ծրագրի նպատակին հասնելու համար անհրաժեշտ՝ ուսանողների բեռնվածության վրա, որը հատկորոշված է ձեռք բերվելիք ուսումնառության արդյունքներով: Եվրոպայում ստացիոնար ուսումնական ծրագրով ուսանողների բեռնվածությունը հիմնականում կազմում է տարեկան 1500-ից 1800 ժամ, և այդ պարագայում մեկ կրեդիտը կազմում է 25-ից 30 ժամ: Նրանք, ովքեր կարող են ցուցադրել ուսումնառության նմանատիպ արդյունքներ՝ ձեռք բերված ուսումնառության այլ միջավայրում, կարող են շնորհող մարմնից ստանալ դրանց ճանաչում (մերժում) և կրեդիտներ: |

**Նշագրում**. «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքում օգտագործված է «***Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ (ԿԿՓԵՀ)***» հասկացությունը, որը սահմանված է (հոդված 3, կետ 18) հետևյալ կերպ. *«համաեվրոպական կրեդիտային համակարգ, որն ապահովում է ակադեմիական կրեդիտների համեմատելիությունը և փոխանցելիությունը, դյուրացնում է ուսանողների շարժունակությունը ընդհանուր եվրոպական բարձրագույն կրթական տարածքում»*: Չի համապատասխանում Բառացանկի սահմանմանը:

| | | |
|---|---|---|
| **39** | **European governance** | **Եվրոպական կառավարում** |
| | Rules, processes and behaviour implemented for exercising power at european level. | Եվրոպական մակարդակով իշխանությունն իրականացնելու համար կիրարկվող կանոններ, գործընթացներ և վարքագիծ: |
| | ***Comment:*** governance must ensure that public resources and problems are managed effectively, efficiently and in response to critical needs of society. Effective governance relies on public participation, accountability, transparency, effectiveness and coherence. | ***Մեկնաբանություն***. կառավարումը պետք է ապահովի, որ հանրային ռեսուրսները տնօրինվեն, իսկ հիմնախնդիրները լուծվեն արդյունավետ ու արդյունավոր կերպով և հասարակության օրախնդիր կարիքներին համապատասխան: Արդյունավոր կառավարումը հիմնվում է հասարակության մասնակցության, հաշվետվողականության, թափանցիկության, արդյունավետության և համաձայնեցվածության |

| | | |
|---|---|---|
| | | վրա: |
| **40** | **European qualifications framework for lifelong learning (EQF)** | **Ցկյանս ուսումնառության՝ որակավորումների եվրոպական շրջանակ (ՈԵՇ)** |
| | Reference tool for describing and comparing qualification levels in qualifications systems developed at national, international or sectoral levels.<br>***Comment:*** the EQF's main components are a set of eight reference levels described in terms of learning outcomes (a combination of knowledge, skills and/or competences) and mechanisms and principles for voluntary cooperation. The eight levels cover the entire span of qualifications from those recognising basic knowledge, skills and competences to those awarded at the highest level of academic, professional and vocational education and training. EQF is a translation device for qualification systems. | Ազգային, միջազգային և ճյուղային (ոլորտային) մակարդակներում՝ որակավորման համակարգերում որակավորումների մակարդակները նկարագրելու և համեմատելու գործիք:<br>***Մեկնաբանություն***. ՈԵՇ-ի հիմնական բաղադրիչները ուսումնառության արդյունքներով (գիտելիքի, հմտությունների և/կամ կարողությունների համադրություն) նկարագրվող հղման 8 մակարդակների լրակազմը և կամավոր համագործակցության մեխանիզմներն ու սկզբունքներն են: 8 մակարդակներն ընդգրկում են որակավորումների ամբողջ տիրույթը՝ սկսած հիմնական (տարրական) գիտելիքներից, հմտություններից և կարողությունների ճանաչումից, մինչև ակադեմիական և մասնագիտական կրթության և ուսուցման բարձրագույն մակարդակը: ՈԵՇ-ը որակավորման համակարգերի վերծանման միջոց է: |

| | |
|---|---|
| **41 European quality assurance in vocational education and training (EQAVET)** | **Մասնագիտական կրթության և ուսուցման որակի եվրոպական ապահովում (ՄԿՈՒՈԵԱ)** |
| Reference framework to help EU member States and participating countries develop, improve, guide and assess the quality of their own vocational education and training systems.<br>***Comment:*** the methodology proposed by the framework is based on:<br>• a cycle consisting of four phases (planning, implementation, assessment and review) described for VET providers/systems;<br>• quality criteria and indicative descriptors for each phase of the cycle;<br>• common indicators for assessing targets, methods, procedures and training results – some indicators are based on statistical data, others are of a qualitative nature. | Հղման շրջանակ, որն օգնում է ԵՄ անդամ և մասնակից երկրներին մշակել, բարելավել, ուղղորդել և գնահատել իրենց երկրների մասնագիտական կրթության և ուսուցման համակարգերի որակը:<br>***Մեկնաբանություն***. շրջանակի կողմից առաջարկված մեթոդաբանությունը հիմնված է հետևյալի վրա՝<br>• 4 փուլից (պլանավորում, իրականացում, գնահատում և վերանայում) բաղկացած պարբերաշրջան՝ նկարագրված ՄԿՈՒ իրականացնողների/ համակարգերի համար,<br>• որակի չափանիշներ և ընդհանրական (հատկանշական) բնութագրիչներ՝ պարբերաշրջանի յուրաքանչյուր փուլի համար,<br>• թիրախների, մեթոդների, ընթացակարգերի և ուսուցման արդյունքների գնահատման ընդհանուր ցուցիչներ. որոշ ցուցիչներ հիմնված են վիճակագրական տվյալների վրա, մյուսները՝ որակական բնույթի են: |
| **42 Evaluation of education and training** | **Կրթության և ուսուցման գնահատում** |
| Judgment on the value of an intervention, training programme or policy with reference to criteria and standards (such as its relevance or efficiency). | Միջամտության, ուսումնական ծրագրի կամ քաղաքականության արժեքի վերաբերյալ դատողություն՝ հղում կատարելով որոշակի չափանիշների և չափորոշիչների (ինչպես օրինակ՝ համապատասխանությունը կամ արդյունավետությունը): |

| | | |
|---|---|---|
| **43** | **Formal learning** | **Ֆորմալ ուսումնառություն** |
| | Learning that occurs in an organised and structured environment (in an education or training institution or on the job) and is explicitly designated as learning (in terms of objectives, time or resources). Formal learning is intentional from the learner's point of view. It typically leads to validation and certification. | Ուսումնառություն, որը տեղի է ունենում կազմակերպված և կառուցակարգված միջավայրում (կրթություն կամ ուսուցում իրականացնող կազմակերպությունում/ հաստատությունում կամ աշխատանքում), իսկ նպատակների, հատկացվող ժամանակի և ռեսուրսների տեսանկյունից միանշանակորեն կանխորոշված է որպես ուսումնառություն: Ուսումնառուների տեսանկյունից մտադրված գործունեություն է: Սովորաբար հանգեցնում է վավերացման և հավաստագրման: |

**Նշագրում.** «Կրթության մասին» ՀՀ օրենքում *ֆորմալ կրթությունը* սահմանվում է (հոդված 3 կետ 1.3) որպես «*հանրակրթական և մասնագիտական կրթական հիմնական ծրագրերի որոշակի մակարդակ կամ ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կողմից և հանգեցնում փուլայ մակարդակի որակավորման ատիճանի շնորհման և դիպլոմավորման*»: Այս սահմանումը հիմնականում համահունչ է Բառացանկի սահմանմանը, սակայն էապես ավելի «նեղ» է, մասնավորապես այն տեսանկյունից, որ ֆորմալ կրթությունը կարող է իրականացվել միայն ուսումնական հաստատություններում:

| | | |
|---|---|---|
| **44** | **Green skills** | **Կանաչ հմտություններ** |
| | Abilities needed to live in, develop and support a society which aims to reduce the negative impact of human activity on the environment.<br>***Comments***:<br>• generic green skills help develop awareness-raising or implementation of resource-efficient activities, ecocitizenship, etc.;<br>• specific green skills are required to implement standards and processes to protect ecosystems and | Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակ ունեցող հասարակությունում ապրելու, այն զարգացնելու և դրան աջակցելու համար անհրաժեշտ ունակություններ:<br>***Մեկնաբանություններ***.<br>• ընդհանուր կանաչ հմտություններն օժանդակում են իրազեկման բարելավմանը կամ օրինակ՝ ռեսուրս-արդյունավետ գործունեության, էկոքաղաքացիության իրականացումը:<br>• առանձնահատուկ կանաչ հմտություններն անհրաժեշտ են էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպան- |

| | | |
|---|---|---|
| | biodiversity, and to reduce energy, materials and water consumption;<br>• highly-specialised green skills are required to develop and implement green technologies such as renewable energies, sewage treatment or recycling. | ման և էներգիայի, նյութերի ու ջրի սպառումը նվազեցնելու նպատակով չափորոշիչների և գործընթացների իրականացման համար,<br>• բարձր մասնագիտացված կանաչ հմտություններն անհրաժեշտ են կանաչ տեխնոլոգիաների (օրինակ՝ վերականգնվող էներգետիկա, կեղտաջրերի մաքրում կամ վերամշակում) ստեղծման համար: |
| **45** | **Guidance and counselling / information, advice and guidance (IAG)** | **Ուղղորդում և խորհրդատվություն / տեղեկատվություն, խորհրդատվություն և ուղղորդում** |
| | A range of activities designed to help individuals to take educational, vocational or personal decisions and carry them out before and after they enter the labour market.<br>***Comments***:<br>• guidance and counselling may include:<br>- counselling (personal or career development, educational guidance);<br>- assessment (psychological or competence/performance related);<br>- information on learning and labour market opportunities and career management;<br>- consultation with peers, relatives or educators;<br>- vocational preparation (pinpointing skills/competences and experience for job-seeking);<br>- referrals (to learning and career specialists); | Գործողություններ, որոնք ուղղված են օժանդակելու անհատներին՝ աշխատաշուկա մուտք գործելուց առաջ և հետո ընդունել կրթական, աշխատանքային և անձնային զարգացմանը վերաբերող որոշումներ:<br>***Մեկնաբանություններ***.<br>• ուղղորդումն ու խորհրդատվությունը կարող են ներառել՝<br>- խորհրդատվություն (անհատական կամ կարիերայի զարգացման, կրթական ուղղորդում),<br>- գնահատում (հոգեբանական կամ կարողություններին/կատարողականությանը վերաբերող),<br>- տեղեկություններ ուսումնառության և աշխատաշուկայի հնարավորությունների կամ կարիերայի կառավարման մասին,<br>- խորհրդափոխանակություն գործընկերների, ազգականների կամ դասավանդողների հետ,<br>- մասնագիտական նախապատրաստում (հմտությունների/կարողությունների և աշխատանք որոնելու փորձի որոշարկում), |

| | | |
|---|---|---|
| | • guidance and counselling can be provided at schools, training centres, job centres, the workplace, the community or in other settings. | - ուղեգրում (ուսումնառության կամ կարիերայի մասնագետների մոտ). <br>• ուղղորդումն ու խորհրդատվությունը կարող են իրականացվել ուսումնական հաստատությունում, ուսուցման կենտրոնում, աշխատավայրում, համայնքում կամ այլ միջավայրերում: |
| **46** | **Human capital** | **Մարդկային կապիտալ** |
| | Knowledge, skills, competences and attributes embodied in individuals that promote personal, social and economic wellbeing. | Անհատի մոտ ձևավորված գիտելիք, հմտություններ, կարողություններ և հատկանիշներ, որոնք նպաստում են անձնական, սոցիալական և տնտեսական բարեկեցությանը: |
| **47** | **Individual learning account** | **Ուսումնառության անհատական հաշվառք** |
| | System of public incentive to encourage access of adults to learning – for example those not already benefiting from publicly-funded education or training. <br>***Comment:*** individual learning accounts aim to widen participation in professional and personal development by providing support, expressed in either money or time that learners can spend in the institutions. | Մեծահասակներին (օրինակ՝ նրանց, ովքեր դեռևս չեն օգտվել պետության կողմից ֆինանսավորվող կրթությունից և ուսուցումից) ուսումնառության մղելու հանրային (պետական) խթանիչների համակարգ: <br>***Մեկնաբանություն.*** ուսումնառության անհատական հաշվառքը նպատակաուղղված է մասնագիտական և անձնային զարգացմանը մասնակցության ընդլայնմանը՝ ֆինանսական միջոցների կամ հաստատությունում ծախսվելիք ժամանակի տեսքով տրամադրվող աջակցության միջոցով: |
| **48** | **Informal learning** | **Ինֆորմալ ուսումնառություն** |
| | Learning resulting from daily activities related to work, family or leisure. It is not organised or structured in terms of objectives, time or learning support. Informal learning is in most cases | Ուսումնառություն, որն աշխատանքին, ընտանիքին կամ ժամանցին առնչվող առօրյա գործունեության արդյունք է: Նպատակների, հատկացվող ժամանակի և օժանդակ միջոցների տեսանկյունից կազմակերպված և կառուցակարգված չէ: Ուսումնառուների տեսանկյունից ինֆոր- |

| | | |
|---|---|---|
| | unintentional from the learner's perspective.<br>***Comments:***<br>• informal learning outcomes may be validated and certified;<br>• informal learning is also referred to as experiential or incidental/random learning. | մալ ուսումնառությունը սովորաբար մտադրված գործունեություն չէ:<br>***Մեկնաբանություններ.***<br>• ինֆորմալ ուսումնառության արդյունք-ները կարող են վավերացվել և հավաս-տագրվել.<br>• ինֆորմալ ուսումնառությանն է վերա-բերում նաև փորձի միջոցով և պատա-հական, ոչ կանոնավոր ուսումնառու-թյունը: |

**Նշագրում**. «Կրթության մասին» ՀՀ օրենքը (հոդված 3, կետ 1.5) տալիս է ***ինֆորմալ կրթության*** հետևյալ սահմանումը[7]. *«անձի առօրյա և ընտանե-կան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և այլ փարբեր գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներ, որոնք, որպես կանոն, կանխամտածված չեն անձի կողմից որ-պես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չեն ժամանակի կամ ռեսուրսների առումով, չեն հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետու-թյան օրենսդրությամբ սահմանված դեպքերի»*: Հիմնականում համահունչ է Բառացանկի սահմանմանը:

| | | |
|---|---|---|
| **49** | **Information and communication technology (ICT)** | **Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՏՀՏ)** |
| | Technology which provides for electronic input, storage, retrieval, processing, transmission and dissemination of information. | Տեխնոլոգիա, որը նախատեսված է տեղեկատվության էլեկտրոնային մուտքագրման, պահպանման, որոնման ու քաղման, վերամշակման, փոխանցման և տարածման համար: |
| **50** | **Information and communication technology (ICT) skills** | **Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) հմտություններ** |
| | Skills needed for efficient use of information and communication technologies (ICT).<br>***Comment:*** in a report on ICT skills and employment, OECD proposes a simple classification: | Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ հմտություններ:<br>***Մեկնաբանություն.*** ՏՀՏ հմտությունների և զբաղվածության վերաբերյալ իր զեկույ- |

[7] Տես նաև սույն բառացանկի երկրորդ մասում բերված «*Ինֆորմալ կրթություն*» եզրույթի համար կատարված նշագրումը:

| | |
|---|---|
| • professional ICT skills: ability to use advanced ICT tools, and/or to develop, repair and create such tools;<br>• applied ICT skills: ability to use simple ICT tools in general workplace settings (in non-IT jobs);<br>• basic ICT skills or ‘ICT literacy‘: ability to use ICT for basic tasks and as a tool for learning. | ցում ՏՀՋԿ-ն առաջարկում է պարզ դասակարգում.<br>• մասնագիտական ՏՀՏ հմտություններ՝ առաջադեմ ՏՀՏ գործիքներ օգտագործելու և/կամ նմանատիպ գործիքները զարգացնելու, վերականգնելու և ստեղծելու ունակություն,<br>• կիրառական ՏՀՏ հմտություններ՝ ընդհանուր աշխատանքային պայմաններում (ոչ ՏՀՏ ոլորտի աշխատանքներ) պարզ ՏՀՏ գործիքներ կիրառելու ունակություն,<br>• հիմնական ՏՀՏ հմտություններ կամ «ՏՀՏ գրագիտություն»՝ ՏՀՏ-ն տարրական խնդիրներ լուծելու համար կամ որպես ուսումնառության գործիք կիրառելու ունակություն: |
| **51 Initial education and training** | **Հիմնական (սկզբնական) մասնագիտական կրթություն և ուսուցում** |
| General or vocational education and training carried out in the initial education system, usually before entering working life.<br>***Comments***:<br>• some training undertaken after entry into working life may be considered as initial training (such as retraining);<br>• initial education and training can be carried out at any level in general or vocational education (full-time school-based or alternance training) or apprenticeship pathways. | Ընդհանուր կամ մասնագիտական կրթություն և ուսուցում, որն իրականացվում է հիմնական (սկզբնական) կրթության համակարգում՝ հիմնական կրթական ծրագրերի միջոցով, սովորաբար՝ աշխատանքային կյանք մուտք գործելուց առաջ:<br>***Մեկնաբանություններ***.<br>• աշխատանքային կյանք մուտք գործելուց հետո իրականացվող ուսուցման որոշակի տեսակ (օրինակ՝ վերապատրաստում) կարող է համարվել հիմնական (սկզբնական) ուսուցում.<br>• հիմնական (սկզբնական) կրթությունն ու ուսուցումը կարող են իրականացվել ընդհանուր կամ մասնագիտական կրթության ցանկացած մակարդակում (առկա (ստացիոնար) հաստատություններում կամ հաջորդման եղանակով ուսուցում) կամ աշկերտության ուղեգծերով: |

**Նշագրում**. թեև *Initial* բառը անգլերենից թարգմանվում է որպես *սկզբնական, նախնական, առաջնային* և այլն, սակայն այս եզրույթի իմաստով «Կրթության մասին» ՀՀ օրենքում հակադրվում են «***հիմնական***» և «***լրացուցիչ***» կրթական ծրագրերը (օրինակ՝ հոդված 10, մաս 1)։ Եթե «*լրացուցիչ կրթություն*» հասկացությունը սահմանվում է նույն օրենքի 3-րդ հոդվածի 1.5 կետում, իսկ 10-րդ հոդվածի 5-րդ մասը պարունակում է դրույթներ ***լրացուցիչ կրթության (ուսուցման)*** մասին, ապա «*հիմնական կրթություն*» կամ «*հիմնական կրթական ծրագիր*» հասկացությունները որևէ կերպ սահմանված չեն։ Միաժամանակ, հաշվի առնելով, օրինակ՝ «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետում «***լրացուցիչ կրթություն***» հասկացությանը տրված սահմանումը՝ «*մասնագիտական կրթության հենքի վրա հիմնական կրթական ծրագրերից դուրս մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերաորակավորումը ապահովող, անձի մասնագիտական որակավորումն անընդհատ լրացնող կրթություն*», ինչպես նաև «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում «***լրացուցիչ մասնագիտական կրթություն***» հասկացությանը տրված սահմանումը՝ «*հիմնական մասնագիտական կրթական ծրագրերից դուրս անձի մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերաորակավորումը ապահովող, որակավորումը բարձրացնող և լրացնող ուսումնական գործընթաց*»՝ կարելի է համարել, որ ՀՀ օրենսդրությունում *Initial education* հասկացությանը համապատասխանում է հենց «***հիմնական կրթություն***» հասկացությունը։ Միաժամանակ, «***սկզբնական կրթություն և ուսուցում***» եզրույթի կիրառումը, թերևս, ավելի տեղին կլիներ։

Անհրաժեշտ է նշել նաև, որ թե՛ «Կրթության մասին», թե՛ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներում նույն՝ «հիմնական կրթություն» եզրույթը վերաբերում է նաև մեկ այլ՝ հանրակրթության մակարդակ նշանակող հասկացության։ Այսպես՝ Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է՝ «***հիմնական կրթություն***՝ *պարտադիր կրթության երկրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները*» (հոդված 3, մաս 1, կետ 3), իսկ «Կրթության մասին» ՀՀ օրենքը՝ «*Հանրակրթական հիմնական ծրագրերն են՝ 1) նախադպրոցական. 2) տարրական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ). 3) հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ). 4) միջնակարգ (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ)*»։

| | | |
|---|---|---|
| 52 | **ISCED[8] level 0 – Early childhood education** | **ԿՄՍԴ[9] մակարդակ 0. Վաղ մանկական կրթություն** |
| | Programmes designed with a holistic approach to support children's early cognitive, physical, social and emotional development and introduce young children to organized instruction outside of the family context.<br>***Comment:*** programmes classified at ISCED level 0 are referred to in many ways across the world, for example early childhood education and development, pre-school, reception, pre-primary or pre-school or educación inicial. | Համալիր մոտեցմամբ մշակված ծրագրեր, որոնց նպատակն է աջակցել երեխաների վաղ իմացական, ֆիզիկական, սոցիալական և հուզական (էմոցիոնալ) զարգացմանը և փոքր երեխաներին ընդգրկել ընտանեկան համատեքստից դուրս կազմակերպված ուսուցման մեջ:<br>***Մեկնաբանություն.*** ԿՄՍԴ մակարդակ 0-ին դասվող ծրագրերն աշխարհում իրականացվում են տարբեր ձևերով, օրինակ՝ վաղ մանկական կրթություն և զարգացում, նախադպրոցական «ընդունարան», նախատարրական կամ նախադպրոցական կամ educación inicial[10]: |
| 53 | **ISCED level 1 – Primary education** | **ԿՄՍԴ մակարդակ 1. Տարրական կրթություն** |
| | Programmes designed to provide learners with fundamental skills in reading, writing and mathematics (i.e. literacy and numeracy), and to establish a sound foundation for learning and understanding core areas of knowledge, personal and social development, preparing for lower secondary education.<br>***Comment:*** programmes classified at ISCED level 1 are referred to in many ways across the world, e.g. primary education, elementary education or basic education (stage 1 / lower grades if an | Ծրագրեր, որոնց նպատակն է ուսումնառուների մոտ ձևավորել կարդալու, գրելու և մաթեմատիկական հիմնարար հմտություններ (այն է՝ գրագիտություն և թվաբանություն) և ամուր հիմք ստեղծել գիտելիքի հիմնական ոլորտներում ուսումնառության և ըմբռնման, անձնային և սոցիալական զարգացման համար՝ պատրաստելով նրանց հիմնական ընդհանուր կրթության:<br>***Մեկնաբանություն.*** ԿՄՍԴ 1-ին մակարդակին դասվող ծրագրերն աշխարհում իրականացվում են տարբեր ձևերով, օրինակ՝ նախնական կրթություն, տարրական կրթություն կամ հիմնական կրթություն (փուլ 1 / ցածր դասարաններ, եթե կրթա- |

[8] International Standard Classification of Education.
[9] Կրթության միջազգային ստանդարտ դասակարգում:
[10] Ֆր.՝ նախնական կրթություն:

| | | |
|---|---|---|
| | education system has one programme that spans ISCED levels 1 and 2). | կան համակարգն ունի ԿՄՍԴ 1-ին և 2-րդ մակարդակներն ընդգրկող մեկ ծրագիր): |
| **54** | **ISCED level 2 – Lower secondary education** | **ԿՄՍԴ մակարդակ** 2. **Հիմնական ընդհանուր կրթություն** |
| | Programmes designed to build upon the learning outcomes from ISCED level 1. Usually, the educational aim is to lay the foundation for lifelong learning and human development on which education systems may systematically expand further educational opportunities. Some education systems may already offer vocational education programmes at ISCED level 2 to provide individuals with skills relevant to employment.<br>***Comment***: programmes classified at ISCED level 2 are referred to in many ways across the world, for example secondary school (stage one / lower grades if there is nationally one programme that spans ISCED levels 2 and 3), junior secondary school, middle school or junior high. | ԿՄՍԴ 1-ին մակարդակի ուսումնառության արդյունքների վրա հիմնված ծրագրեր: Սովորաբար կրթական նպատակն է ստեղծել ցկյանս ուսումնառության և մարդկային զարգացման հենք, որի վրա կրթական համակարգերը կարող են կանոնավոր կերպով ընդլայնել հետագա կրթական հնարավորությունները: Որոշ կրթական համակարգեր արդեն ԿՄՍԴ 2-րդ մակարդակում կարող են առաջարկել մասնագիտական կրթության ծրագրեր՝ անհատների մոտ ձևավորելով զբաղվածությանն առնչվող համապատասխան հմտություններ:<br>***Մեկնաբանություն***. ԿՄՍԴ 2-րդ մակարդակին դասվող ծրագրերն աշխարհում իրականացվում են տարբեր ձևերով, օրինակ՝ միջնակարգ դպրոց (փուլ 1 / ցածր դասարաններ, եթե գործում է ԿՄՍԴ 2-րդ և 3-րդ մակարդակներն ընդգրկող մեկ ազգային ծրագիր), կրտսեր միջնակարգ դպրոց, միջին դպրոց կամ կրտսեր բարձր/ավագ: |
| **55** | **ISCED level 3 – Upper secondary education** | **ԿՄՍԴ մակարդակ** 3. **Միջնակարգ կրթություն** |
| | Programmes designed to complete secondary education in preparation for tertiary education, or to provide skills relevant to employment, or both.<br>***Comment:*** programmes classified at ISCED level 3 are referred to in many ways across the world, e.g. | Ծրագրեր, որոնց նպատակն է ամփոփել միջնակարգ կրթությունը՝ նախապատրաստելով բարձրագույն կրթության, կամ ձևավորել զբաղվածությանն առնչվող համապատասխան հմտություններ, կամ էլ՝ երկուսը միասին:<br>***Մեկնաբանություն***. ԿՄՍԴ 3-րդ մակարդակին դասվող ծրագրերն աշխարհում |

| | | |
|---|---|---|
| | secondary school (stage two / upper grades), senior secondary school or (senior) high school. | իրականացվում են տարբեր ձևերով, օրինակ՝ միջնակարգ դպրոց (փուլ 2 / բարձր դասարաններ), ավագ միջնակարգ դպրոց կամ ավագ դպրոց: |
| **56** | **ISCED level 4 – Post-secondary non-tertiary education** | **ԿՄՍԴ մակարդակ** 4. **Հետմիջնակարգ ոչ բարձրագույն կրթություն** |
| | Programmes designed to provide individuals who completed ISCED level 3 with non-tertiary qualifications that they require for progression to tertiary education or for employment when their ISCED level 3 qualification does not grant such access.<br>***Comment:*** programmes to be classified at ISCED level 4 are referred to in many ways across the world, e.g. technician diploma, primary professional education, préparation aux carriéres administratives. | Ծրագրեր, որոնց նպատակն է ԿՄՍԴ 3-րդ մակարդակն ավարտածներին ապահովել ոչ բարձրագույն կրթության որակավորմամբ, որը նրանց անհրաժեշտ է բարձրագույն կրթության անցնելու կամ զբաղվածության համար, եթե նրանց ԿՄՍԴ 3-րդ մակարդակի որակավորումը նման մուտքի իրավունք չի շնորհում:<br>***Մեկնաբանություն***. ԿՄՍԴ 4-րդ մակարդակին դասվող ծրագրերն աշխարհում իրականացվում են տարբեր ձևերով, օրինակ՝ տեխնիկական դիպլոմ, նախնական մասնագիտական կրթություն, préparation aux carriéres administratives[11]: |
| **57** | **ISCED level 5 – Short-cycle tertiary education** | **ԿՄՍԴ մակարդակ** 5. **Բարձրագույն կրթության կարճ պարբերաշրջան** |
| | Programmes designed to provide participants with professional knowledge, skills and competences. Typically, they are practically based, occupationally specific and prepare students to enter the labour market. However, programmes may also provide a pathway to other tertiary education programmes.<br>***Comment:*** programmes to be classified at ISCED level 5 are | Ծրագրեր, որոնց նպատակն է մասնակիցների մոտ ձևավորել մասնագիտական գիտելիք, հմտություններ և կարողություններ: Որպես կանոն՝ դրանք գործնական բնույթ ունեն, հատուկ են որևէ զբաղմունքի և ուսանողներին պատրաստում են աշխատաշուկա մուտք գործելուն: Այնուամենայնիվ, այս ծրագրերը կարող են տրամադրել նաև բարձրագույն կրթության մեկ այլ ծրագրի անցման ուղեգիծ:<br>***Մեկնաբանություն***. ԿՄՍԴ 5-րդ մակարդակին դասվող ծրագրերն աշխարհում |

[11] Ֆր.՝ նախապատրաստում վարչական կարիերայի:

| | | |
|---|---|---|
| | referred to in many ways across the world, e.g. master craftsman programme, (higher) technical education, community college education, technician or advanced/higher vocational training, associate degree or bac + 2 programmes. | իրականացվում են տարբեր ձևերով, օրինակ՝ վարպետ-արհեստավորի ծրագիր, (բարձրագույն) տեխնիկական կրթություն, համայնքային քոլեջի կրթություն, տեխնիկի կամ բարձր մակարդակի/ բարձրագույն մասնագիտական ուսուցում, կրտսեր աստիճան կամ bac+2 ծրագրեր: |
| **58** | **ISCED level 6 – Bachelor's or equivalent level** | **ԿՄՍԴ մակարդակ** 6. **Բակալավրի կամ դրան համարժեք մակարդակ** |
| | Programmes designed to provide participants with intermediate academic and/or professional knowledge, skills and competences, leading to a first degree or equivalent qualification. Programmes at this level are typically theoretically based but may include practical components and are informed by state of the art research and/or best professional practice. | Ծրագրեր, որոնց նպատակն է մասնակիցների մոտ ձևավորել միջանկյալ (միջին մակարդակի) ակադեմիական և/կամ մասնագիտական գիտելիք, հմտություններ և կարողություններ, որոնք հանգեցնում են առաջին աստիճանի կամ դրան համարժեք որակավորման: Սովորաբար, այս մակարդակի ծրագրերն առավելապես տեսական բնույթ են կրում, սակայն կարող են ներառել նաև գործնական բաղադրիչներ և հիմնված են իրավիճակի[12] վերլուծության կամ լավագույն մասնագիտական պրակտիկայի վրա: |
| | ***Comment:*** programmes to be classified at ISCED level 6 are referred to in many ways across the world, such as Bachelor's programme, licence or first university cycle. | ***Մեկնաբանություն***. ԿՄՍԴ 6-րդ մակարդակին դասվող ծրագրերն աշխարհում իրականացվում են տարբեր ձևերով, օրինակ՝ բակալավրի ծրագրերը, լիցենզիա կամ համալսարանական առաջին պարբերաշրջանը: |
| **59** | **ISCED level 7 – Master or equivalent level** | **ԿՄՍԴ մակարդակ** 7. **Մագիստրոսի կամ դրան համարժեք մակարդակ** |
| | Programmes designed to provide advanced academic and/or professional knowledge, skills and competences, leading to a second degree or equivalent | Ծրագրեր, որոնց նպատակն է ձևավորել խորացված ակադեմիական և/կամ մասնագիտական գիտելիք, հմտություններ և կարողություններ, որոնք հանգեցնում են երկրորդ աստիճանի կամ դրան համար- |

[12] Աշխատաշուկայում պայանջվող գիտելիքի, հմտությունների և կարողությունների տեսանկյունից:

| | | |
|---|---|---|
| | qualification. Programmes at this level may have a substantial research component, but do not yet lead to the award of a doctoral qualification.<br>***Comment:*** programmes to be classified at ISCED level 7 are referred to in many ways across the world such as master's programmes or magister. | ժեք որակավորման: Այս մակարդակի ծրագրերը կարող են ունենալ շոշափելի հետազոտական բաղադրիչ, բայց դեռևս չեն հանգեցնում դոկտորական որակավորման (աստիճանի):<br>***Մեկնաբանություն***. ԿՄՍԴ 7-րդ մակարդակին դասվող ծրագրերն աշխարհում իրականացվում են տարբեր ձևերով, օրինակ՝ մագիստրոսական ծրագիրը: |
| **60** | **ISCED level 8 – Doctoral or equivalent** | **ԿՄՍԴ մակարդակ** 8. **Դոկտորական կամ դրան համարժեք մակարդակ** |
| | Programmes designed primarily to lead to an advanced research qualification. Programmes at this ISCED level are devoted to advanced study and original research and typically offered only by research-oriented tertiary educational institutions such as universities. Doctoral programmes exist in both academic and professional fields.<br>***Comment:*** programmes to be classified at ISCED level 8 are referred to in many ways across the world such as PhD, DPhil, D.Lit, D.Sc, LL.D, Doctorate or similar terms. | Ծրագրեր, որոնց հիմնական նպատակը հետազոտողի բարձր որակավորման ապահովումն է: ԿՄՍԴ այս մակարդակի ծրագրերը նվիրված են խորը ուսումնասիրությունների կամ ինքնատիպ հետազոտությունների և սովորաբար առաջարկվում են հետազոտական ուղղվածություն ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների, օրինակ՝ համալսարանների կողմից: Դոկտորական ծրագրերը գործում են թե՛ ակադեմիական (գիտական), թե՛ մասնագիտական ոլորտներում:<br>***Մեկնաբանություն***. ԿՄՍԴ 8-րդ մակարդակին դասվող ծրագրերն աշխարհում իրականացվում են տարբեր ձևերով, օրինակ՝ PhD, DPhil, D.Lit, D.Sc, LL.D[13], Doctorate (դոկտորանտուրա) կամ նմանատիպ այլ աստիճաններ: |

[13] PhD – անգլ.՝ Philosofy Doctor, իմաստասիրության դոկտոր:
DPhil – անգլ.՝ Doctor of Philosofy, նույնն է, ինչ PhD-ն, սակայն կիրառվում է Օքսֆորդի համալսարանի կողմից:
D.Lit – անգլ.՝ Doctor of Letters (լատ.՝ Litterarum Doctor կամ Doctor Litterarum), բառացի՝ գրականության դոկտոր, սովորաբար՝ PhD-ից ավելի բարձր աստիճան:
D.Sc – անգլ.՝ Doctor of Science, գիտության (գիտությունների) դոկտոր:
LL.D – լատ.՝ Legum Doctor (անգլ.՝ Doctor of Laws), իրավունքի դոկտոր:

## 61 Job

Set of tasks and duties performed, or meant to be performed, by one person, including for an employer or in self-employment.

## Պաշտոն (աշխատանք)

Առաջադրանքների և պարտականությունների լրակազմ, որոնք իրականացվում կամ ենթադրվում են, որ պետք է իրականացվեն մեկ անձի կողմից, այդ թվում՝ գործատուի համար կամ ինքնազբաղվածության շրջանակներում:

**Նշագրում.** այս եզրույթի իմաստով՝ «*պաշտոն*» բառը փոքր-ինչ նախընտրելի է «*աշխատանք*» բառից, քանի որ առավել համապատասխանում է Հայաստանում ընդունված եզրութաբանությանը, որի շրջանակներում լայնորեն կիրառվում է օրինակ՝ «պաշտոնի նկարագիր» հասկացությունը: Վերջինս, սովորաբար սահմանում է պաշտոնային պարտականություններ, սակայն նաև՝ պաշտոնը զբաղեցնողի գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները և որակավորման պահանջները (տես, օրինակ՝ ՀՀ կառավարության 14.10.2010թ. «Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» № 1391-Ն որոշումը):

Որոշ դեպքերում, սակայն, երբ հասկանալի է, որ խոսքը գնում է պաշտոնային պարտականությունների կատարման մասին, «***աշխատանք***» եզրույթի կիրառումը հայերեն տեքստերում կարող է ավելի նպատակահարմար լինել: Ըստ այդմ՝ որպես *Job* եզրույթի հայերեն համարժեք, մենք երաշխավորում ենք թե՛ «***աշխատանք***», թե՛ «***պաշտոն***» եզրույթների կիրառումը (ելնելով համատեքստից), ինչպես դա արված է այս Բառացանկի որոշ եզրույթների սահմանումների հայերեն տարբերակներում:

## 62 Job placement

Process of supporting individuals to find jobs matching their skills.

***Comments***:

- job placement can be carried out by (public or private) employment services or educational institutions;
- job placement encompasses activities such as drafting a CV, preparation for interviews,

## Աշխատանքի տեղավորում

Գործընթաց, որն օգնում է անհատներին իրենց հմտություններին համապատասխան աշխատանք գտնել:

***Մեկնաբանություններ.***

- աշխատանքի տեղավորումը կարող է կատարվել զբաղվածության (պետական կամ մասնավոր) ծառայության կամ ուսումնական հաստատությունների կողմից.
- աշխատանքի տեղավորումը ներառում է գործողություններ, ինչպիսիք են՝ ինք-

| | | |
|---|---|---|
| | skills audit, guidance and counselling. | նակենսագրության պատրաստումը, նախապատրաստումը հարցազրույցի, հմտությունների աուդիտ, ուղղորդում և խորհրդատվություն: |
| **63** | **Key skills / Key competences** | **Առանցքային հմտություններ / Առանցքային կարողություններ** |
| | Sum of skills (basic and new basic skills) needed to live in a contemporary knowledge society.<br>***Comment:*** in its recommendation on key competences for lifelong learning, the European Commission sets out eight key competences:<br>• communication in the mother tongue;<br>• communication in foreign languages;<br>• competences in maths, science and technology;<br>• digital competence;<br>• learning to learn;<br>• interpersonal, intercultural and social competences, and civic competence;<br>• entrepreneurship;<br>• cultural expression. | Արդի՝ գիտելիքի հասարակությունում ապրելու համար անհրաժեշտ հմտությունների (հիմնական և նոր հիմնական հմտությունների) ամբողջությունը:<br>***Մեկնաբանություն***. ցկյանս ուսումնառության առանցքային կարողությունների վերաբերյալ իր երաշխավորություններում Եվրոպական Հանձնաժողովը սահմանում է 8 առանցքային կարողություն.<br>• հաղորդակցում մայրենի լեզվով.<br>• հաղորդակցում օտար լեզուներով.<br>• կարողություններ մաթեմատիկայի, գիտության և տեխնոլոգիայի ոլորտներում.<br>• «թվային» կարողություն.<br>• սովորել սովորելու կարողություն.<br>• միջանձնային, միջմշակութային և սոցիալական կարողություններ ու քաղաքացիական կարողություն.<br>• ձեռներեցություն.<br>• մշակութային արտահայտում: |
| **64** | **Know-how** | **Նոու-հաու** |
| | Practical knowledge or expertise. | Գործնական գիտելիք կամ փորձառություն: |
| **65** | **Knowledge** | **Գիտելիք** |
| | Outcome of the assimilation of information through learning. Knowledge is the body of facts, principles, theories and practices related to a field of study or work. | Ուսումնառության միջոցով տեղեկությունների յուրացման արդյունքը: Գիտելիքն ուսումնառության կամ աշխատանքի ոլորտին առնչվող փաստերի, սկզբունքների, տեսությունների և գործնական կիրառությունների ամբողջությունն է: |

***Comment***: there are numerous definitions of knowledge. Nevertheless, modern conceptions of knowledge rest broadly on several basic distinctions:

- Aristotle distinguished between theoretical and practical logic. In line with this distinction, modern theoreticians (Alexander et al., 1991) distinguish declarative (theoretical) knowledge from procedural (practical) knowledge. Declarative knowledge includes assertions on specific events, facts and empirical generalisations, as well as deeper principles on the nature of reality. Procedural knowledge includes heuristics, methods, plans, practices, procedures, routines, strategies, tactics, techniques and tricks (Ohlsson, 1994);
- It is possible to differentiate between forms of knowledge which represent different ways of learning about the world. Various attempts have been made to compile such lists, the following categories seem to be frequently represented:
  - objective (natural/scientific) knowledge, judged on the basis of certainty;

***Մեկնաբանություն.*** գիտելիքը մի շարք սահմանումներ ունի: Այնուամենայնիվ, գիտելիքի ժամանակակից ընկալումը հիմնված է առավելապես մի քանի հիմնական տարբերությունների վրա.

- Արիստոտելը տարբերակում էր տեսական և գործնական տրամաբանությունը: Ըստ այդ տարբերակման՝ ժամանակակից տեսաբանները (Alexander et al., 1991) տարանջատում են դեկլարատիվ (տեսական) գիտելիքը ընթացակարգային (գործնական) գիտելիքից: Դեկլարատիվ գիտելիքը ներառում է պնդումներ որոշակի իրադարձությունների, փաստերի և էմպիրիկ ընդհանրացումների վերաբերյալ, ինչպես նաև բնության և իրականության ավելի խորը սկզբունքներ: Ընթացակարգային գիտելիքը ներառում է էվրիստիկա[14], մեթոդներ, ծրագրեր, գործելակերպ (պրակտիկա), ընթացակարգեր, ընդունված կարգեր, ռազմավարություններ, մարտավարություններ, միջոցներ և հնարքներ (Ohlsson, 1994):
- հնարավոր է տարբերակել գիտելիքի ձևերը, որոնք ներկայացնում են աշխարհի մասին ուսանելու տարբեր եղանակները: Այդպիսի ցանկեր ձևավորելու բազում փորձեր են արվել: Առավել հաճախ են ներկայացվում հետևյալ դասերը՝
  - օբյեկտիվ (բնական/գիտական) գիտելիք, դատողությունները՝ որոշակիության հիման վրա,
  - սուբյեկտիվ (գրական/գեղագիտական) գիտելիք, դատողությունները՝

[14] Գիտելիքների բնագավառ, որն ուսումնասիրում է ստեղծագործական գործունեությունը՝ այն ըմբռնելով իբրև խնդիրների լուծում:

| | | |
|---|---|---|
| | - subjective (literary/aesthetic) knowledge judged on the basis of authenticity;<br>- moral (human/normative) knowledge judged on the basis of collective acceptance (right/wrong);<br>- religious/divine knowledge judged by reference to a divine authority (god).<br>This basic understanding of knowledge underpins the questions we ask, the methods we use and the answers we give in our search for knowledge;<br>• knowledge encompasses tacit and explicit knowledge. Tacit knowledge (Polanyi, 1967) is knowledge learners possess which influences cognitive processing. However, they may not necessarily express it or be aware of it. Explicit knowledge is knowledge a learner is conscious of, including tacit knowledge that converts into an explicit form by becoming an 'object of thought' (Prawat, 1989). | հավաստիության (վավերականության) հիման վրա,<br>- բարոյական (մարդկային/նորմատիվային) գիտելիք, դատողությունները՝ կոլեկտիվ ճանաչման (ճիշտ/սխալ) հիման վրա,<br>- կրոնական/աստվածային գիտելիք, դատողությունները՝ հղումներ անելով Աստծո իշխանությանը:<br>Գիտելիքի այս հիմնարար ընկալմամբ են պայմանավորված մեր կողմից տրվող հարցերը, մեր օգտագործած մեթոդներն ու գիտելիքի որոնման ճանապարհին մեր կողմից տրվող պատասխանները:<br>• գիտելիքը ներառում է լռելյայն (ոչ ակնհայտ) և բացահայտ (հստակ) գիտելիքը: Լռելյայն գիտելիքը (Polanyi, 1967) այն գիտելիքն է, որն ազդում է իմացական վերլուծության վրա: Սակայն պարտադիր չէ, որ ուսումնառուները կարողանան արտահայտել այն կամ տեղյակ լինեն դրա մասին: Բացահայտ գիտելիքն այն գիտելիքն է, որի առկայությունը ուսումնառուն գիտակցում է՝ ներառյալ այն լռելյայն գիտելիքը, որը, դառնալով մտածողության օբյեկտ, փոխակերպվում է բացահայտ գիտելիքի (Prawat, 1989): |
| **66** | **Knowledge society / knowledge-based society** | **Գիտելիքի հասարակություն / գիտելիքահենք հասարակություն** |
| | A society whose processes and practices are based on the production, distribution and use of knowledge. | Հասարակություն, որտեղ գործընթացները և գործելակերպը հիմնված են գիտելիքի ստեղծման, բաշխման և կիրառման վրա: |
| **67** | **Learning** | **Ուսումնառություն** |
| | Process by which an individual assimilates information, ideas and | Գործընթաց, որի միջոցով անձը յուրացնում է տեղեկություններ, գաղափարներ և |

| | | |
|---|---|---|
| | values and thus acquires knowledge, know-how, skills and/or competences.<br>***Comment:*** learning occurs through personal reflection, reconstruction and social interaction. It may take place in formal, non-formal or informal settings. | արժեքներ՝ այդպիսով ձեռք բերելով գիտելիք, նոու-հաու, հմտություններ և/կամ կարողություններ:<br>***Մեկնաբանություն***. ուսումնառությունը տեղի է ունենում անձնային ընկալման (ռեֆլեքսիա), վերակառուցման և սոցիա-լական փոխգործության միջոցով: Այն կարող է տեղի ունենալ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ միջավայրերում: |
| **68** | **Learning by doing** | **Ուսումնառություն՝ գործելու միջոցով** |
| | Learning acquired by repeated practice of a task, with or without prior instruction.<br>*or*<br>Learning acquired by transforming one’s mental assets through confrontation with reality, resulting in new knowledge and skills.<br>***Comment:*** learning by doing is also referred to as experiential learning. | Ուսումնառություն, որը տեղի է ունենում հանձնառության շրջանակներում գործո-ղությունների բազմակի իրականացման միջոցով՝ նախընթաց ուսուցմամբ կամ առանց դրա:<br>*կամ*<br>Ուսումնառություն, որը տեղի է ունենում անձի մտավոր ռեսուրսների (ակտիվների) փոխակերպման միջոցով՝ իրականության հետ առճակատման պայմաններում, ինչը հանգեցնում է նոր գիտելիքի և հմտությունների:<br>***Մեկնաբանություն***. գործելու միջոցով ուսումնառությունը հայտնի է նաև որպես փորձի վրա հիմնված ուսումնառություն: |
| **69** | **Learning by using** | **Ուսումնառություն՝ օգտագործելու միջոցով** |
| | Learning acquired by repeated use of tools or facilities, with or without prior instruction. | Ուսումնառություն, որը տեղի է ունենում գործիքների կամ միջոցների (պայմանների) բազմակի օգտագործման միջոցով՝ նախընթաց ուսուցմամբ կամ առանց դրա: |
| **70** | **Learning community** | **Ուսումնառող համայնք** |
| | Community that promotes a culture of learning by developing effective local partnerships between all sectors of the | Համայնք, որը խթանում է ուսումնառության մշակույթը համայնքի բոլոր ոլորտների միջև արդյունավետ տեղական համագործակցությունը |

| | | |
|---|---|---|
| | community, and supports and motivates individuals and organisations to learn. | զարգացնելու միջոցով և աջակցում անհատներին և կազմակերպություններին ու շահադրդում դրանց ուսումնառելու: |
| **71** | **Learning content** | **Ուսումնառության բովանդակություն** |
| | Topics and activities which make up what is learned by an individual or group of learners during a learning process. | Թեմաներ և գործողություններ, որոնք արտացոլում են այն, ինչ սովորել է անհատը կամ ուսումնառուների խումբը ուսումնառության ընթացքում: |
| **72** | **Learning facilitator** | **Ուսումնառության ֆասիլիտատոր** |
| | Anyone who promotes acquisition of knowledge and skills by establishing a favourable learning environment, including anyone exercising a teaching, training, supervision or guidance function. The facilitator helps the learner develop knowledge and skills by providing guidelines, feedback and advice throughout the learning process. | Յուրաքանչյուր ոք, ով նպաստում է գիտելիքի և հմտությունների ձեռքբերմանը՝ ստեղծելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր, այդ թվում նրանք, ովքեր իրականացնում են դասավանդման, ուսուցման, հսկողության կամ ուղղորդման գործառույթներ: Ֆասիլիտատորն օգնում է ուսումնառուներին զարգացնելու գիտելիքն ու հմտությունները՝ տրամադրելով ուղղորդում, ապահովելով հետադարձ կապ և խորհրդատվություն ուսումնառության ողջ ընթացքում: |
| **73** | **Learning organisation** | **Ուսումնառող կազմակերպություն** |
| | Organisation which promotes learning, and where individuals learn and develop through the work context, for the benefit of themselves, one another and the whole organisation, with such efforts being publicised and recognised. | Կազմակերպություն, որը խթանում է ուսումնառությունը, և որտեղ անհատները սովորում և զարգանում են աշխատանքային համատեքստում՝ ի շահ իրենց, այլոց և ողջ կազմակերպության, և այդ ջանքերը հրապարակվում ու ճանաչվում են: |
| **74** | **Learning outcomes** | **Ուսումնառության արդյունքներ** |
| | Set of knowledge, skills and/or competences an individual has acquired and/or is able to demonstrate after completion of | Գիտելիքի, հմտությունների և/կամ կարողությունների լրակազմ, որն անձը յուրացրել է կամ ի վիճակի է ցուցադրել ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ուսումնառության գործընթացի ավարտից հետո: |

a learning process, either formal, non-formal or informal.

*or*

Statement of what a learner knows, understands and is able to do on completion of a learning process, which are defined in terms of knowledge, skills and competence.

*կամ*

Գիտելիքի, հմտությունների և կարողությունների տեսանկյունից սահմանած դրույթ այն մասին, թե ինչ գիտի, ինչ է հասկանում և ինչ է ունակ անել սովորողն ուսումնառության գործընթացն ավարտելիս:

## 75 Learning region | Ուսումնառող տարածաշրջան

Region in which stakeholders cooperate to meet local learning needs and share resources to devise joint solutions.

Տարածաշրջան, որտեղ շահագրգիռ կողմերը համագործակցում են տեղական ուսումնառության կարիքները բավարարելու նպատակով և ռեսուրսներ են փոխանակում համատեղ լուծումներ մշակելու համար:

## 76 Level of qualification | Մակարդակ՝ որակավորման

The term covers two aspects:

Level of attainment in formal education and training, recognised in a qualification system or in a qualification framework.

*or*

Level of proficiency acquired through education and training, work experience or in non-formal/informal settings.

***Comments:***

- level of qualification is often determined by what is expected in qualification systems or by level descriptors of qualifications frameworks;
- it can also be determined by an occupational profile (for example, description of the learning outcomes required to

Եզրույթը երկու արտահայտում ունի՝

ստացած ֆորմալ կրթության և ուսուցման մակարդակ, որը ճանաչված է որակավորման համակարգում կամ որակավորումների շրջանակում:

*կամ*

հմտության (վարպետության) մակարդակ, որը ձեռք է բերվել կրթության և ուսուցման, աշխատանքային փորձի միջոցով կամ ոչ ֆորմալ/ինֆորմալ միջավայրում:

***Մեկնաբանություններ***.

- որակավորման մակարդակը հաճախ սահմանվում է նրանով, թե ինչ է ակնկալվում՝ համաձայն որակավորման համակարգի կամ որակավորումների շրջանակի մակարդակների բնութագրիչների.
- այն կարող է սահմանվել նաև զբաղմունքի նկարագրով (օրինակ՝ որևէ աշխատանքի վերաբերող պատասխանատվության և ինքնավարության որոշակի

perform the tasks attached to a job at a specific level of responsibility and autonomy).

մակարդակում խնդիրներ իրականացնելու համար պահանջվող ուսումնառության արդյունքների նկարագիր):

## 77 Lifelong learning

## Ցկյանս[15] (կենսանև) ուսումնառություն

All learning activity undertaken throughout life, which results in improving knowledge, know-how, skills and/or qualifications for personal, social and/or professional reasons.

Ամբողջ կյանքի ընթացքում իրականացվող ուսումնական գործունեություն, որը հանգեցնում է գիտելիքի, նոու-հաուի, հմտությունների և/կամ որակավորումների բարելավմանը՝ անձնական, սոցիալական և/կամ մասնագիտական զարգացման նպատակներով:

**Նշագրում.** «Կրթության մասին» ՀՀ օրենքում (հոդված 3, կետ 1.2) կիրառված է «*հարատև կրթություն*» եզրույթը (սահմանվում է որպես «*անձի ամբողջ կյանքի ընթացքում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մասնակցության միջոցով ձեռք բերած ուսումնառության արդյունքներ, որոնցով անհատը ձևավորում կամ կատարելագործում է իր գիտելիքները, հմտությունները, կարողությունները և արժեքային համակարգը*»), որն անընդունելի է, քանի որ «*հարատև*» բառը նշանակում է *մշտատև, մշտական* և այլն և որևէ առնչություն չունի անձի կյանքի (և դրա տևողության) հետ, ինչին վկայակոչում է *Lifelong* հասկացությունը:

## 78 Lifewide learning

## Համընդգրկուն (կենսափյուռ) ուսումնառություն

Learning, either formal, non-formal or informal, that takes place across the full range of life activities (personal, social and/or professional) and at any stage of life.

***Comment:*** lifewide learning is a dimension of lifelong learning.

Ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ուսումնառություն, որն իրականացվում է մարդու կենսագործունեության (անձնական, սոցիալական և/կամ մասնագիտական) ամբողջ շրջանակում և կյանքի ցանկացած փուլում:

***Մեկնաբանություն***. համընդգրկուն (կենսափյուռ) ուսումնառությունը ցկյանս ուսումնառության հարթություններից մեկն է:

[15] Արդի հայերենի բացատրական բառարան, Էդ. Աղայան, Երևան, 1976, էջ 1477:
Հայերեն բացատրական բառարան, Ստ. Մալխասյանց, Երևան, 1944, էջ 466:
Ռուս-հայերեն բառարան, Ա. Ղարիբյան, Երևան, 1982, էջ 822:
Ռուս-հայերեն բառարան, Ա. Ղարիբյան, Ե.Տեր-Մինասյան, Մ.Գևորգյան, Երևան, 1945, էջ 289:

| | | |
|---|---|---|
| **79** | **Low-skilled person** | **Ցածր որակավորված անձ** |
| | Individual whose level of educational attainment is lower than a predetermined standard. | Անհատ, ում կրթական մակարդակը ցածր է նախատեսված չափորոշչից: |
| **80** | **Mentoring** | **Մենթորություն** |
| | Guidance and support provided in various ways to a young person or novice (someone joining a new learning community or organisation) by an experienced person who acts as a role model, guide, tutor, coach or confidante. | Որպես օրինակ, ուղղորդող, թյութոր, քոուչ կամ հեղինակություն ծառայող փորձառու անձի կողմից երիտասարդին կամ նորեկին (ով ընդգրկվում է ուսումնառող համայնքում կամ կազմակերպությունում) տրամադրվող ուղղորդում կամ աջակցություն: |
| **81** | **Mobility** | **Շարժունակություն** |
| | The ability of an individual to move and adapt to a new occupational or educational environment.<br>***Comments:***<br>• mobility can be geographical or 'functional' (a move to a new post in a company or to a new occupation, a move between employment and education);<br>• mobility enables individuals to acquire new skills and thus increase their employability. | Անձի՝ տեղաշարժվելու և նոր մասնագիտական կամ կրթական միջավայրին հարմարվելու ունակություն:<br>***Մեկնաբանություններ.***<br>• շարժունակությունը կարող է լինել աշխարհագրական կամ «գործառնական» (դեպի նոր պաշտոն կազմակերպության ներսում կամ դեպի նոր զբաղմունք, տեղաշարժ զբաղվածության և ուսումնառության միջև).<br>• շարժունակությունն անձանց հնարավորություն է ընձեռում ձեռք բերելու նոր հմտություններ և այդպիսով՝ բարելավելու իրենց զբաղունակությունը: |
| **82** | **Mutual Recognition of qualifications** | **Փոխճանաչում՝ որակավորումների** |
| | Recognition by one or more countries of qualifications (certificates, diplomas or titles) awarded in (or by) one or more other countries or organisations.<br>***Comment:*** mutual recognition can be bilateral (between two | Մեկ կամ ավելի երկրներում (կամ դրանց կողմից) շնորհված որակավորումների (վկայականների, դիպլոմների կամ աստիճանների/կոչումների) ճանաչում մեկ կամ մի քանի այլ երկրների կողմից:<br>***Մեկնաբանություն.*** փոխճանաչումը կարող է լինել երկկողմ (երկու երկրների |

| | | |
|---|---|---|
| | countries or organisations) or multilateral (within the European union or between companies belonging to the same sector). | կամ կազմակերպությունների միջև) կամ բազմակողմ (Եվրամիության շրջանակներում կամ նույն ոլորտին պատկանող ընկերությունների միջև): |
| **83** | **New basic skills** | **Նոր հիմնական հմտություններ** |
| | Skills such as information and communication technology (ICT) skills, foreign languages, social, organisational and communication skills, technological culture, entrepreneurship.<br>***Comment:*** together with basic skills, new basic skills form the key skills needed to develop in the contemporary knowledge society. | Այնպիսի հմտություններ, ինչպիսիք են տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) հմտությունները, օտար լեզուները, սոցիալական, կազմակերպչական և հաղորդակցման հմտությունները, տեխնոլոգիական մշակույթը, ձեռներեցությունը:<br>***Մեկնաբանություն.*** հիմնական հմտությունների հետ միասին, նոր հիմնական հմտությունները ձևավորում են արդի՝ գիտելիքի հասարակությունում զարգացում ապրելու համար անհրաժեշտ առանցքային հմտությունները: |
| **84** | **Non-formal learning** | **Ոչ ֆորմալ ուսումնառություն** |
| | Learning embedded in planned activities not explicitly designated as learning (in terms of learning objectives, learning time or learning support). Non-formal learning is intentional from the learner's point of view.<br>***Comments:***<br>• non-formal learning outcomes may be validated and may lead to certification;<br>• non-formal learning is sometimes described as semistructured learning. | Ուսումնառություն՝ ներառված նախապես պլանավորված գործողությունների մեջ, որոնք սակայն նպատակների, հատկացվող ժամանակի և ռեսուրսների տեսանկյունից ոչ անպայմանորեն են կանխորոշված որպես ուսումնառություն: Ուսումնառուի տեսանկյունից մտադրված գործունեություն է:<br>***Մեկնաբանություններ.***<br>• ոչ ֆորմալ ուսումնառության արդյունքները կարող են վավերացվել և հանգեցնել հավաստագրման.<br>• ոչ ֆորմալ ուսումնառությունը, երբեմն բնութագրվում է որպես կիսակառուցակարգված ուսումնառություն: |

**Նշագրում.** «Կրթության մասին» ՀՀ օրենքում (հոդված 3, կետ 1.4) «*ոչ ֆորմալ կրթություն (ուսուցում)*» հասկացությունը սահմանվում է որպես «*կրթության լրացուցիչ ուսուցման ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաս-*

*պարտությունների) կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասություն ունեցող կազմակերպության և (կամ) ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի*»: Ընդհանուր առմամբ՝ համահունչ է Բառացանկի սահմանմանը:

| | | |
|---|---|---|
| **85** | **Occupation** | **Զբաղմունք** |
| | Set of jobs whose main tasks and duties are characterised by a high degree of similarity. | Այն պաշտոնների (աշխատանքների) ամբողջությունը, որոնց հիմնական խնդիրներն ու պարտականությունները բնութագրվում են նմանօրինակության բարձր աստիճանով: |
| **86** | **Off-the-job training** | **Ուսուցում՝ աշխատանքից դուրս** |
| | Vocational training undertaken away from the normal work situation. It is usually only part of a whole training programme, in which it is combined with on-the-job training. | Մասնագիտական ուսուցում, որն իրականացվում է բնականոն աշխատանքային համատեքստից (իրավիճակից) դուրս: Սովորաբար, սա ուսուցման ամբողջական ծրագրի մի մաս է, որի շրջանակներում համատեղվում է աշխատանքում ուսուցման հետ: |
| **87** | **On-the-job training** | **Ուսուցում՝ աշխատանքում** |
| | Vocational training given in the normal work situation. It may constitute the whole training or be combined with off-the-job training. | Մասնագիտական ուսուցում, որն իրականացվում է բնականոն աշխատանքային համատեքստում (իրավիճակում): Կարող է հանդիսանալ ուսուցման միակ ձևը կամ համատեղվել աշխատանքից դուրս ուսուցման հետ: |

**Նշագրում.** այս եզրույթը հաճախ թարգմանվում է որպես «*ուսուցում աշխատավայրում*», ինչն ընդունելի չէ, քանի որ այստեղ խոսքը գնում է ոչ թե ուսուցման իրականացման վայրի, այլ իրավիճակի մասին: Կարևորն այն է, որ այս ուսուցումն իրականացվում է, ինչպես նշված է սահմանման մեջ՝ *աշխատանքային համատեքստում*, մինչդեռ անգամ աշխատավայրում իրականացվող ուսուցումը կարող է այդ համատեքստից դուրս լինել: Միաժամանակ, երբեմն օգտագործվող մեկ այլ՝ «*ուսուցում՝ առանց աշխատանքից կտրվելու*» տարբերակը նույնպես ճշգրիտ չէ, քանի որ չի արտահայտում խնդրո առարկա եզրույթի բովանդակությունը:

| | | |
|---|---|---|
| **88** | **Open learning** | **Բաց ուսումնառություն** |
| | [Learning](#) which gives the learner a degree of flexibility in choice of topics, place, pace and/or method. | [Ուսումնառություն](#), որի շրջանակներում ուսումնառուին տրվում է թեմաների, վայրի, ուսումնառության արագության և/կամ մեթոդի ընտրության որոշակի աստիճանի ազատություն: |
| **89** | **Overqualification** | **Գերորակավորվածություն** |
| | Situation where an individual has a higher qualification than the current [job](#) requires.<br>***Comments:***<br>• overqualification is close to – but not synonymous with:<br>- overeducation: situation where an individual has more education than the current job requires (measured in years);<br>- overskilling: situation where an individual is not able to utilise fully their abilities and [skills](#) in the current job.<br>• overqualification can be temporary (e.g. when an overqualified young person accepts a low-level position until they find more appropriate employment) or can have a more permanent character. | Իրավիճակ, երբ անհատն ունի ավելի բարձր որակավորում, քան պահանջում է նրա ընթացիկ [աշխատանքը](#):<br>***Մեկնաբանություններ.***<br>• գերորակավորվածությունը մոտ է, բայց հոմանիշ չէ՝<br>- «գերկրթվածությանը». իրավիճակ, երբ անհատն ավելի կրթված է (չափված տարիներով), քան պահանջում է նրա ընթացիկ աշխատանքը,<br>- «գերհմտությանը». իրավիճակ, երբ անհատն իր ընթացիկ աշխատանքում ի վիճակի չէ ամբողջությամբ կիրառել իր ունակություններն ու [հմտությունները](#),<br>• գերորակավորվածությունը կարող է լի-նել ժամանակավոր (օրինակ՝ երբ գեր-որակավորված երիտասարդը համա-ձայնում է ցածր մակարդակի պաշտոնի մինչև առավել համապատասխան զբաղվածություն գտնելը) կամ կարող է ավելի մշտական բնույթ կրել: |
| **90** | **Permeability of education and training systems** | **Կրթության և ուսուցման համակարգի թափանցելիություն**[16] |
| | Capacity of education and training systems to enable learners to: | Կրթության և ուսուցման համակարգի ունակությունը, որն ուսումնառուներին հնարավորություն է ընձեռում՝ |

[16] Չշփոթել «թափանցիկություն» հասկացության հետ:

| | | |
|---|---|---|
| | • access and move among different pathways (programmes, levels) and systems;<br>• validate learning outcomes acquired in another system or in non-formal/ informal settings.<br>***Comments:***<br>• permeability of systems can be improved by:<br>- modularising pathways and defining units of learning outcomes;<br>- establishing qualification frameworks which create links between various qualifications, improving readability of qualifications within and between countries;<br>- setting credit systems;<br>• permeability is characterised by direction (vertical/ horizontal), criteria for access (individual or collective), admission or exemption, level of formalisation (at institution or system levels). | • մուտք գործել և շարժվել զանազան ուղեգծերի (ծրագրեր, մակարդակներ) և համակարգերի միջև.<br>• վավերացնել ոչ ֆորմալ և ինֆորմալ միջավայրերում ձեռք բերած ուսումնառության արդյունքները:<br>***Մեկնաբանություններ.***<br>• համակարգի թափանցելիությունը կարող է բարելավվել հետևյալ միջոցներով՝<br>- ուղեգծերի մոդուլավորում և ուսումնառության արդյունքների միավորների սահմանում,<br>- տարբեր որակավորումների միջև կապ ստեղծող՝ որակավորման շրջանակների ներդրում, երկրների ներսում և դրանց միջև որակավորումների «ընթեռնելիության» բարելավում,<br>- կրեդիտային համակարգերի ներդրում.<br>• թափանցելիությունը բնութագրվում է ուղղություններով (ուղղահայաց/հորիզոնական), մուտքի չափանիշներով (անհատական կամ կոլեկտիվ), ֆորմալացվածության աստիճանով (հաստատության կամ համակարգի մակարդակներում): |
| **91** | **Post-compulsory education** | **Հետպարտադիր կրթություն** |
| | Education followed by an individual after compulsory education (the minimum legal standards and duration of schooling). | Կրթություն, որն անձը ստանում է պարտադիր կրթությունից (դպրության նվազագույն իրավական չափորոշիչներ և տևողություն) հետո: |

| | | |
|---|---|---|
| **92** | **Professional development** | **Մասնագիտական զարգացում** |
| | Any action undertaken to improve professional performance.<br>***Comments:*** professional development:<br>• encompasses specific skills and generic skills (team or time management, negotiation skills, conflict management, communication, etc.);<br>• may take the form of self-learning, formal training, consultation, conferences, coaching or mentoring, communities of practice and technical assistance. | Մասնագիտական կատարողականության բարելավմանն ուղղված ցանկացած գործողություն:<br>***Մեկնաբանություններ***.<br>Մասնագիտական զարգացումը՝<br>• ներառում է հատուկ հմտություններ և ընդհանուր հմտություններ (թիմի կամ ժամանակի կառավարում, բանակցության հմտություններ, կոնֆլիկտի կառավարում, հաղորդակցում և այլն).<br>• կարող է հանդես գալ ինքնակրթության (ինքնուրույն ուսումնառության), ֆորմալ ուսուցման, խորհրդատվության, համաժողովների, քոուչինգի կամ մենթորության, մասնագիտական շրջանակներում փոխուսուցման և տեխնիկական աջակցության ձևերով: |
| **93** | **Programme of education or training** | **Կրթության կամ ուսուցման ծրագիր** |
| | Inventory of activities, content and/or methods implemented to achieve education or training objectives (acquiring knowledge, skills and/or competences), organised in a logical sequence over a specified period of time.<br>***Comment:*** the term programme of education or training refers to the implementation of learning activities whereas curriculum refers to the design, organisation and planning of these activities. | Կրթության կամ ուսուցման նպատակներին (գիտելիքի, հմտությունների և/կամ կարողությունների ձեռքբերում) հասնելուն ուղղված և որոշակի ժամկետի ընթացքում տրամաբանական հերթականությամբ իրականացվող գործողությունների, բովանդակության և/կամ կիրառվող մեթոդների ամբողջություն:<br>***Մեկնաբանություններ***. «կրթության կամ ուսուցման ծրագիր» եզրույթը վերաբերում է ուսումնառության գործողությունների իրականացմանը, մինչդեռ «կրթական ծրագիր» եզրույթը վերաբերում է այդ գործողությունների նախագծմանը, կազմակերպմանը և պլանավորմանը: |
| **94** | **Qualification** | **Որակավորում** |
| | Qualification covers different aspects: | Որակավորումը հանդես է գալիս երկակի իմաստով՝ |

- formal qualification: the formal outcome (certificate, diploma or title) of an assessment process which is obtained when a competent body determines that an individual has achieved learning outcomes to given standards and/or possesses the necessary competence to do a job in a specific area of work. A qualification confers official recognition of the value of learning outcomes in the labour market and in education and training. A qualification can be a legal entitlement to practise a trade (OECD);
- job requirements: knowledge, aptitudes and skills required to perform specific tasks attached to a particular work position (ILO).

- ֆորմալ որակավորում՝ գնահատման գործընթացի ֆորմալ արդյունք (վկայական, դիպլոմ կամ կոչում/աստիճան), որը ձեռք է բերվում, երբ իրավասու մարմինը որոշում է, որ անհատի կողմից նվաճած ուսումնառության արդյունքները համապատասխանում են սահմանված չափորոշիչներին և/կամ նա տիրապետում է որոշակի ոլորտում աշխատանք կատարելու համար անհրաժեշտ կարողությունների: Որակավորումը պաշտոնապես ճանաչում է ուսումնառության արդյունքների արժեքը աշխատաշուկայում և կրթության և ուսուցման համատեքստում: Որակավորումը կարող է հանդիսանալ որևէ մասնագիտությամբ զբաղվելու իրավական ուժ ունեցող արտոնագիր (ՏՀԶԿ).
- աշխատանքային պահանջներ՝ որոշակի պաշտոնով նախատեսված աշխատանքային հանձնառություններ իրականացնելու համար պահանջվող գիտելիք, ընդունակություններ և հմտություններ (ԱՄԿ):

**Նշագրում.** «Կրթության մասին» ՀՀ օրենքում (հոդված 3, կետ 17.1) «***որակավորում***» հասկացությունը սահմանվում է որպես «*ամփոփիչ ատեստավորման արդյունքում մասնագիտական որակավորման բնութագրին անձի համապատասխանությունը հավաստող կարգավիճակ, որը շնորհվում է համապատասխան փաստաթղթով*»: Այս սահմանումը չի համապատասխանում Բառացանկի սահմանմանը և մի շարք թերություններ ունի: Մասնավորապես՝ 1) Հայաստանում գոյություն չունի «*մասնագիտական որակավորման բնութագիր*» իրավական կատեգորիա, և հասկանալի չէ, թե ինչի մասին է խոսքը. 2) անգամ այդպիսի հասկացության առկայության դեպքում կստացվեր, որ «որակավորում» հասկացությունը սահմանվում է «մասնագիտական որակավորում», այսինքն՝ գործնականում նույն հասկացության միջոցով. 3) այն դրույթը, որ որակավորումը շնորհվում է *ամփոփիչ ատեստավորման արդյունքում*, նշանակում է, որ դա կարող է տեղի ունենալ միայն ֆորմալ կրթության շրջանակներում, ինչը հակասում է արդի մոտեցումներին. 4) ըստ

էության՝ որակավորումը սահմանված է որպես «*կարգավիճակ*», մինչդեռ որակավորումն առաջին հերթին անձի հատկանիշ (ատրիբուտ) է:

**95 Qualification system** — **Որակավորման համակարգ**

All activities related to the recognition of learning outcomes and other mechanisms that link education and training to the labour market and civil society. These activities include:

- definition of qualification policy, training design and implementation, institutional arrangements, funding, quality assurance;
- assessment and certification of learning outcomes.

***Comment:*** a national qualifications system may be composed of several subsystems and may include a national qualifications framework.

Բոլոր այն գործողությունները, որոնք առնչվում են ուսումնառության արդյունքների ճանաչմանը, և կրթությունն ու ուսուցումը աշխատաշուկային և քաղաքացիական հասարակությանը կապող մեխանիզմները: Այս գործողությունները ներառում են՝

- որակավորման քաղաքականության սահմանումը, ուսուցման պլանավորումն ու իրականացումը, հաստատությունների համակարգը, ֆինանսավորումը, որակի ապահովումը.
- ուսումնառության արդյունքների գնահատումն ու հավաստագրումը:

***Մեկնաբանություն.*** Որակավորման ազգային համակարգը կարող է բաղկացած լինել մի շարք ենթահամակարգերից և ներառել որակավորումների ազգային շրջանակը:

**Նշագրում.** Եզրույթի հայերեն տարբերակի թյուրընկալումից զերծ պահելու համար անհրաժեշտ է պարզաբանել, որ «*որակավորման*» բառը ցույց է տալիս ոչ թե պատկանելություն որևէ որակավորման կամ որակավորումների, այլ վերաբերում է որակավորում(ներ) շնորհելուն, այսինքն՝ որակավորման (որակավորելու) գործընթացներին:

**96 Qualifications framework** — **Որակավորումների շրջանակ**

Instrument for development and classification of qualifications (at national or sectoral levels) according to a set of criteria (using descriptors) applicable to specified levels of learning outcomes.

*or*

Ուսումնառության արդյունքների որոշակի մակարդակների համար կիրառվող՝ բնութագրիչներով արտահայտված չափանիշների համաձայն՝ որակավորումների (ազգային և ճյուղային մակարդակներում) մշակման և դասակարգման գործիք:

*կամ*

Ուսումնառության որոշակի մակարդակների համար սահմանված չափանիշների

Instrument for classification of qualifications according to a set of criteria for specified levels of learning achieved, which aims to integrate and coordinate qualifications subsystems and improve transparency, access, progression and quality of qualifications in relation to the labour market and civil society.

***Comment:*** a qualification framework can be used to:

- establish national standards of knowledge, skills and competences;
- promote quality of education;
- provide a system of coordination and/or integration of qualifications and enable comparison of qualifications by relating qualifications to one another;
- promote access to learning, transfer of learning outcomes and progression in learning.

համաձայն՝ որակավորումների դասակարգման գործիք, որը նպատակաուղղված է որակավորումների ենթահամակարգերի միասնականացմանն ու համակարգմանը և թափանցիկության, մուտքի, առաջխաղացման ու որակավորումների որակի բարելավմանն աշխատաշուկայի և քաղաքացիական հասարակության տեսանկյունից:

***Մեկնաբանություն***. Որակավորումների շրջանակը կարող է կիրառվել՝

- գիտելիքի, հմտությունների և կարողությունների ազգային չափորոշիչներ սահմանելու,
- կրթության որակը խթանելու,
- որակավորումների համակարգման և միասնականացման համակարգի գործարկման և որակավորումները մեկը մյուսի հետ համեմատելու,
- ուսումնառության մուտքը, ուսումնառության արդյունքների փոխանցումը և ուսումնառության մեջ առաջխաղացումը խթանելու համար:

| | | |
|---|---|---|
| **97** | **Recognition of learning outcomes** | **Ուսումնառության արդյունքների ճանաչում** |
| | Formal recognition: process of granting official status to knowledge, skills and competences either through:<br>• validation of non-formal and informal learning;<br>• grant of equivalence, credit units or waivers;<br>• award of qualifications (certificates, diploma or titles).<br>*and/or*<br>Social recognition: acknowledgement of value of knowledge, skills and/or competences by economic and social stakeholders. | Ֆորմալ ճանաչում. գիտելիքին, հմտություններին և կարողություններին պաշտոնական կարգավիճակ շնորհելու գործընթաց, որն իրականացվում է՝<br>• ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման,<br>• համարժեքության հաստատման, կրեդիտային նիշերի տրամադրման կամ մերժման,<br>• որակավորումներ (վկայական, դիպլոմ կամ կոչում/աստիճան) շնորհելու միջոցով:<br>*և/կամ*<br>Սոցիալական ճանաչում. գիտելիքի, հմտությունների և/կամ կարողությունների արժեքի ճանաչում տնտեսական և սոցիալական շահակիցների կողմից: |
| **98** | **Regulated profession** | **Կարգավորվող մասնագիտություն** |
| | Professional activity or group of professional activities, access to which, pursuit of which, or one of the modes of pursuit of which is subject, directly or indirectly, by virtue of legislative, regulatory or administrative provisions, to possession of specific professional qualifications. | Մասնագիտական գործունեություն կամ մասնագիտական գործունեության տեսակների խումբ, որոնց (կամ որոնց որևէ ձևի) իրականացումը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ենթակա է օրենսդրական կամ վարչական կարգավորման՝ մասնագիտական որակավորման առկայության տեսանկյունից: |
| **99** | **Retraining** | **Վերապատրաստում** |
| | Training enabling individuals to acquire new skills giving access either to a new occupation or to new professional activities. | Ուսուցում, որն անձանց հնարավորություն է ընձեռում ձեռք բերել նոր հմտություն-ներ, որոնք մուտք են բացում դեպի նոր զբաղմունք կամ մասնագիտական նոր գործունեություն: |

## 100 Secondary school leaving certificate / baccalaureate

Examination administered at the end of upper secondary education to certify learning outcomes of learners following an assessment procedure.

***Comments:***

- not all secondary school leaving certificates guarantee systematic access to higher education;
- at national level, school leaving certificates bear different names, for example:

**Austria**

- reifeprüfungszeugnis (general upper secondary, general access to higher education) or reife- und diplomprüfungszeugnis (vocational upper secondary, double qualification: general access to higher education and vocational qualifications)
- Berufsreifeprüfungszeugnis (general access to higher education, includes validation of knowledge, skills and competences acquired on the job)

**Germany**

- abitur
- fachabitur

**Ireland**

- leaving certificates

## Միջնակարգ կրթության վկայական / բակալորիա[17]

Միջնակարգ կրթության ավարտին անցկացվող քննություններ, որոնց նպատակն է գնահատման միջոցով հավաստել ուսումնառուների ձեռք բերած ուսումնառության արդյունքները:

***Մեկնաբանություններ.***

- միջնակարգ կրթության ոչ բոլոր վկայականներն են երաշխավորում մուտք դեպի բարձրագույն կրթություն.
- ազգային մակարդակով այդ վկայականները տարբեր անվանումներ ունեն, օրինակ՝

**Ավստրիա**

- reifeprüfungszeugnis (ընդհանուր միջնակարգ, ընդհանուր մուտք դեպի բարձրագույն կրթություն) կամ reife- և diplomprüfungszeugnis (մասնագիտական միջնակարգ, կրկնակի որակավորում՝ ընդհանուր մուտք դեպի բարձրագույն կրթություն և մասնագիտական որակավորում),
- Berufsreifeprüfungszeugnis (ընդհանուր մուտք դեպի բարձրագույն կրթություն, ներառում է աշխատանքի ընթացքում ձեռք բերած գիտելիքի, հմտությունների և կարողությունների վավերացում)

**Գերմանիա**

- abitur,
- fachabitur.

**Իռլանդիա**

- leaving certificates (ավարտական վկայականներ).

**Ֆրանսիա**

- Baccalauréat,
- baccalauréat général (ընդհանուր կրթություն),

[17] Չ'շփոթել *բակալավրիատի* հետ:

**France**
Baccalauréat:
- baccalauréat général (general education)
- baccalauréat technologique (general and technical education)
- baccalauréat professionnel (vocational training leading to a specific occupation)

**Portugal**
- diploma do ensino secundário (general education)
- diploma de qualificaçao (general and vocational education / double certification)

**United Kingdom**
(a) academic levels:
- GCE A level (advanced general certificate of education)
- GCE AS level (advanced subsidiary general certificate of education)
- NQ advanced higher (national qualifications advanced higher level)
- NQ higher (national qualifications higher level)
- Scottish baccalaureate
- Welsh baccalaureate

(b) Vocational levels:
- GCE A levels in applied subjects (advanced general certificate of education in applied subjects)
- GCE AS levels in applied subjects (advanced subsidiary

- baccalauréat technologique (ընդհանուր և տեխնիկական կրթություն),
- baccalauréat professionnel (որոշակի զբաղմունքի հանգեցնող մասնագիտական ուսուցում).

**Պորտուգալիա**
- diploma do ensino secundário (ընդհանուր կրթություն),
- diploma de qualificaçao (ընդհանուր և մասնագիտական կրթություն / կրկնակի հավաստագրում).

**Միացյալ Թագավորություն**
(ա) ակադեմիական մակարդակներ՝
- GCE A մակարդակ (կրթության բարձր մակարդակի ընդհանուր վկայական),
- GCE AS մակարդակ (կրթության բարձր մակարդակի օժանդակ ընդհանուր վկայական),
- NQ բարձր մակարդակի բարձր (բարձր ազգային որակավորումների բարձր մակարդակ),
- NQ բարձր (բարձր ազգային որակավորումների մակարդակ),
- Scottish baccalaureate (շոտլանդական բակալորիա),
- Welsh baccalaureate (ուելսական բակալորիա).

(բ) մասնագիտական մակարդակներ՝
- GCE A մակարդակներ՝ կիրառական առարկաների ոլորտում (կիրառական առարկաների ոլորտում կրթության բարձր մակարդակի ընդհանուր վկայական),
- GCE AS մակարդակներ՝ կիրառական առարկաների ոլորտում (կիրառական առարկաների ոլորտում կրթության բարձր մակարդակի օժանդակ ընդհանուր վկայական):

| | |
|---|---|
| general certificate of education in applied subjects) | |
| **101 Sector** | **Ճյուղ (ոլորտ)՝ տնտեսության** |
| Group of companies with the same main economic activity (such as chemicals).<br>*or*<br>Grouping of professional activities based on their main economic function, product, service or technology. | Հիմնական տնտեսական գործունեության նույն տեսակն (օրինակ՝ քիմիական արտադրություն) իրականացնող ընկերությունների խումբ:<br>*կամ*<br>Մասնագիտական գործունեության խմբավորում՝ հիմնված դրա հիմնական տնտեսական գործառույթի, արտադրանքի, ծառայության կամ տեխնոլոգիայի վրա: |
| **102 Skills** | **Հմտություններ** |
| Ability to apply knowledge and use know-how to complete tasks and solve problems. | Առաջադրանքների կատարման և խնդիրների լուծման համար գիտելիք կիրառելու և նոու-հաու օգտագործելու ունակություն: |
| **103 Skill gap** | **Հմտությունների բաց** |
| Situation where an individual does not have the level of skills required to perform his or her job adequately.<br>***Comments***:<br>• skill gaps can be analysed at individual level (using a skills audit), at company/sector level, or at regional, national or international levels;<br>• skill gaps can be linked to an insufficient level of qualification; they may also refer to situations where the workforce has the right level of qualification but lacks specific types of skills (such as management skills) or | Իրավիճակ, երբ անձը չունի իր աշխատանքը պատշաճ կերպով կատարելու համար անհրաժեշտ հմտություններ:<br>***Մեկնաբանություններ.***<br>• հմտությունների բացերը կարող են վերլուծվել անհատի մակարդակով (կիրառելով հմտությունների աուդիտ), ընկերության/ճյուղի մակարդակով կամ տարածաշրջանային, ազգային կամ միջազգային մակարդակներով.<br>• հմտությունների բացերը կարող են կապված լինել որակավորման անբավարար մակարդակի հետ: Դրանք կարող են առնչվել նաև այն իրավիճակին, երբ աշխատուժն ունի որակավորման համապատասխան մակարդակ, սակայն բացակայում են որոշակի հմտությունները (օրինակ՝ կառավարման |

| | |
|---|---|
| experience required to perform a task or a job adequately. | հմտություններ) կամ հանձնառությունը կամ աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ փորձը: |
| **104 Skill mismatch** | **Հմտությունների անհամապատասխանություն** |
| Situation of imbalance in which the level or type of skills available does not correspond to labour market needs.<br>***Comments***:<br>• skills mismatch can be a surplus or a lack of knowledge, abilities and competences;<br>• skill mismatch can be analysed at different levels (individual, enterprise, sectoral, economy);<br>• experts distinguish between vertical mismatch (the level of education/skills is higher or lower than required) and horizontal mismatch (the level of education/skills matches job requirements, but the type of education/skills is inappropriate for the current job). | Անհավասարակշռության իրավիճակ, երբ առկա հմտությունների մակարդակը կամ տեսակը չի համապատասխանում աշխատաշուկային:<br>***Մեկնաբանություններ.***<br>• հմտությունների անհամապատասխանությունը կարող է հանդես գալ հավելյալ կամ անբավարար գիտելիքի, ունակությունների և կարողությունների տեսքով.<br>• հմտությունների անհամապատասխանությունը կարող է վերլուծվել տարբեր մակարդակներով (անհատի, ձեռնարկության, ճյուղի, ամբողջ տնտեսության).<br>• փորձագետները տարբերակում են ուղղահայաց անհամապատասխանությունը (կրթության/հմտությունների մակարդակն ավելի բարձր կամ ցածր է, քան պահանջվում է) և հորիզոնական անհամապատասխանությունը (կրթության/ հմտությունների մակարդակը համապատասխանում է պաշտոնի (աշխատանքի) պահանջներին, սակայն դրանց չի համապատասխանում կրթության/հմտությունների տեսակը): |
| **105 Skill needs** | **Հմտությունների պահանջ (կարիք)** |
| Demand for particular types of knowledge and skills on the labour market (total demand within a country or region, economic sector, etc.).<br>***Comments***: | Աշխատաշուկայում որոշակի տեսակի գիտելիքի և հմտությունների պահանջարկ (համընդհանուր պահանջ երկրի կամ տարածաշրջանի, տնտեսության ներսում):<br>***Մեկնաբանություններ.***<br>• հմտությունների պահանջի վերլուծու- |

- skills needs analysis (also referred to as identification of skills needs) aims at identifying skills gaps and shortages, anticipating skills needs, and assessing the capacity of qualification systems (education and training provision, funding schemes, etc.) to meet the needs of the economy;
- anticipation of skills needs is the process of identifying skills the economy will require in a short, medium or longer term;
- skills forecasting estimates the skill demand (jobs) and/or skill supply (labour force) that will be available on a short, medium or long term.

թյունը (հայտնի է նաև որպես հմտությունների պահանջի որոշարկում) նպատակաուղղված է հմտությունների բացերի և անբավարարության որոշարկմանը, հմտությունների պահանջի կանխատեսմանը և որակավորման համակարգի (կրթության և ուսուցման իրականացում, ֆինանսավորում և այլն)՝ տնտեսության պահանջները բավարարելու ունակության գնահատմանը.

- հմտությունների պահանջի կանխատեսումը գործընթաց է, որի միջոցով որոշարկվում են այն հմտությունները, որոնք տնտեսությունում կպահանջվեն կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում.
- հմտությունների կանխատեսումը գնահատում է հմտությունների նկատմամբ պահանջարկը(պաշտոնները/աշխատանքը) և/կամ հմտությունների առաջարկը (աշխատուժ), որոնք առկա կլինեն կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:

## 106 Skill obsolescence

## Հմտությունների հնացածություն

Situation in which knowledge and skills of individuals are out of date or out of use.

***Comment:*** this term is also used in the literature to describe situations where physical or mental abilities and skills deteriorate due to atrophy or wear and tear.

Իրավիճակ, երբ անհատների գիտելիքը և հմտությունները հնացած կամ գործածությունից դուրս են:

***Մեկնաբանություն.*** գրականությունում այս եզրույթն օգտագործվում է նկարագրելու նաև այն իրավիճակը, երբ ֆիզիկական կամ մտավոր ունակությունները վատթարանում են հյուծման (ատրոֆիայի) կամ ֆիզիկական մաշվածության հետևանքով:

## 107 Skill shortage

## Հմտությունների անբավարարություն

Situation where skills supply (type of abilities and number of people available on the labour market) is

Իրավիճակ, երբ հմտությունների առաջարկը (ունակությունների տեսակը և աշխատաշուկայում առկա անձանց թիվը) չի

| | |
|---|---|
| not sufficient to meet labour market demand. | բավարարում աշխատաշուկայի պահանջարկը: |
| ***Comment:*** a skill shortage applies to all levels of qualification; it may result from factors such as:<br>• insufficient education and training supply;<br>• geographical imbalance in supply;<br>• developments impacting the structure of the economy;<br>• lack of attractiveness of specific occupations (difficult working conditions, low remuneration, insufficient social recognition). | ***Մեկնաբանություն.*** հմտությունների անբավարարությունը առնչվում է որակավորման բոլոր մակարդակներին. այն կարող է այնպիսի գործոնների արդյունք լինել, ինչպիսիք են՝<br>• կրթության և ուսուցման անբավարար առաջարկը.<br>• առաջարկի աշխարհագրական անհավասարակշռվածությունը.<br>• տնտեսության կառուցվածքի վրա ազդող զարգացումները.<br>• որոշակի մասնագիտությունների անբավարար գրավչությունը (ծանր աշխատանքային պայմաններ, ցածր վարձատրություն, անբավարար սոցիալական արժևորում): |
| **108 Skills audit** | **Հմտությունների աուդիտ** |
| Analysis of knowledge, skills and competences of individuals, including their aptitudes and motivations to define a career project and/or plan professional reorientation or a training project. | Անհատների գիտելիքի, հմտությունների և կարողությունների, այդ թվում՝ ընդունակությունների և շահադրդվածության վերլուծություն, որի նպատակն է կարիերայի նախագծումը և/կամ մասնագիտական վերակողմնորոշումը կամ ուսուցման պլանավորումը: |
| ***Comment:*** a skills audit aims to help individuals:<br>• analyse their career backgrounds;<br>• self-assess their position in the labour environment;<br>• prepare themselves for validation of non-formal or informal learning outcomes;<br>• plan career pathways. | ***Մեկնաբանություն.*** հմտությունների աուդիտի նպատակն է օժանդակել անհատներին՝<br>• վերլուծելու իրենց կարիերայի նախապատմությունը,<br>• ինքնագնահատելու իրենց տեղը աշխատանքային միջավայրում.<br>• ինքնապատրաստվելու ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ուսումնառության արդյունքների վավերացմանը.<br>• պլանավորելու կարիերայի ուղեգծերը: |

## 109 Social cohesion

Degree to which different groups in a society can live together and share common values.

***Comments***:

- social cohesion requires low degrees of social exclusion, intra-community cooperation and solidarity across communities and social groups;
- social cohesion goes beyond the level of economic homogeneity (rate of employment, salary scale, access to health and education, housing); it is also linked to the level of social inclusion;
- Jenson (1998) identified five dimensions to social cohesion:
  1. belonging – isolation: that means shared values, identity, feelings of commitment;
  2. inclusion – exclusion (access to welfare);
  3. participation – non-involvement (in civil society);
  4. recognition – rejection of differences (in a pluralistic society);
  5. legitimacy – illegitimacy (trust and respect to institutions).

## Սոցիալական համախմբվածություն

Որքանով հասարակության տարբեր խմբերը կարող են համատեղ ապրել և կիսել ընդհանուր արժեքները:

***Մեկնաբանություններ.***

- սոցիալական համախմբվածությունը պահանջում է սոցիալական մերժվածության (անտեսվածության) ցածր մակարդակ, ներհամայնքային համագործակցություն և համայնքների ու սոցիալական խմբերի համերաշխություն.
- սոցիալական համախմբվածությունն ավելին է, քան տնտեսական համասեռության մակարդակը (զբաղվածության մակարդակ, աշխատավարձերի սանդղակ, կրթության և առողջապահության մատչելիություն, բնակարանով ապահովվածություն). այն առնչվում է նաև սոցիալական ներգրավվածությանը.
- Ջենսընը (1998թ.) որոշարկել է սոցիալական համախմբվածության 5 հարթություն՝
  1. պատկանելություն – մեկուսացվածություն. նշանակում է համատեղ արժեքներ, ինքնություն, նվիրվածության զգացում.
  2. ներգրավվածություն - մերժվածություն (մուտք դեպի բարօրություն, ապահովվածություն).
  3. մասնակցություն - ոչ ընդգրկվածություն (քաղաքացիական հասարակությունում).
  4. տարբերությունների ճանաչում – մերժում (պլուրալիստական հասարակությունում).
  5. օրինականություն - ապօրինություն (վստահություն և հարգանք հաստատությունների նկատմամբ):

| **110 Social dialogue** | **Սոցիալական երկխոսություն** |
|---|---|
| Process of exchange between social partners to promote consultation and collective bargaining.<br>***Comments:***<br>• social dialogue can be bipartite (involving representatives of workers and employers) or tripartite (also involving public authorities and/or representatives of civil society, NGOs, etc.);<br>• social dialogue can take place at various levels (company, sectoral / cross-sectoral and local / regional / national / transnational;<br>• at international level, social dialogue can be bilateral, trilateral or multilateral, according to number of countries involved. | Սոցիալական գործընկերների միջև փոխազդեցության (փոխգործակցության) գործընթաց՝ խորհրդափոխանակությունը և կոլեկտիվ բանակցությունները խթանելու նպատակով:<br>***Մեկնաբանություններ.***<br>• սոցիալական երկխոսությունը կարող է լինել երկկողմ (ներգրավելով աշխատողների և գործատուների ներկայացուցիչներին) կամ եռակողմ (ներառելով նաև պետական իշխանություններին և/կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, ՈԿԿ-ներ և այլն).<br>• սոցիալական երկխոսությունը կարող է տեղի ունենալ տարբեր մակարդակներում (ընկերության, ճյուղային/ միջճյուղային և տեղական / տարածաշրջանային / ազգային / վերազգային).<br>• միջազգային մակարդակով սոցիալական երկխոսությունը կարող է լինել երկկողմ, եռակողմ կամ բազմակողմ՝ ըստ ընդգրկված երկրների թվի: |

| **111 Social inclusion** | **Սոցիալական ներգրավվածություն** |
|---|---|
| Integration of individuals – or groups of individuals – into society as citizens or as members of various public social networks. Social inclusion is fundamentally rooted in labour market or economic inclusion. | Անհատների կամ դրանց խմբերի ինտեգրումը հասարակության մեջ՝ որպես քաղաքացիներ կամ տարբեր հասարակական ցանցերի անդամներ: Սոցիալական ներգրավվածությունը հիմնարար կերպով կապված է աշխատաշուկայում և տնտեսության մեջ ներգրավվածության հետ: |

| 112 Social partners | Սոցիալական գործընկերներ |
| --- | --- |
| Employers' associations and trade unions forming the two sides of social dialogue.<br>***Comments***:<br>• the concept of 'social partner' originates in France and Germany and was subsequently taken up in EU circles;<br>• tripartite social dialogue also involves public authorities and/or representatives of civil society, NGOs, etc. | Գործատուների միավորումներ և արհմիություններ, որոնք սոցիալական երկխոսության երկու կողմերն են:<br>***Մեկնաբանություններ.***<br>• «սոցիալական գործընկեր» հասկացությունը ծագել է Ֆրանսիայում և Գերմանիայում և հետագայում ներմուծվել է ԵՄ շրջանակ.<br>• եռակողմ սոցիալական երկխոսությունը ներառում է նաև պետական իշխանություններին և/կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, ՈԿԿ-ներ և այլն: |

**Նշագրում.** «Կրթության մասին» ՀՀ օրենքում (հոդված 3, կետ 1.8) «***սոցիալական գործընկեր***» հասկացությունը սահմանվում է որպես «*մասնագիտական կրթության և ուսուցման համակարգին աջակցող, համագործակցող և համակարգի զարգացման գործում շահագրգիռ կազմակերպություն կամ կազմակերպությունների միավորում, մասնավորապես գործատուների, արհեստակցական և հասարակական այլ միավորումներ, կրթական և ուսումնական ծրագրեր իրականացնող ցանկացած կազմակերպություն, պետական և համայնքային մարմիններ*»: «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում (հոդված 3) նույն հասկացությունը սահմանվում է որպես «*արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգին աջակցող, համագործակցող և համակարգի զարգացման գործում շահագրգիռ կազմակերպություն կամ կազմակերպությունների միավորում, ներառյալ՝ ցանկացած տիպի ուսումնական հաստատություն*»: Երկու սահմանումներում էլ առկա է նույն սկզբունքային սխալը. ուսումնական հաստատությունները (կրթական և ուսումնական ծրագրեր իրականացնող կազմակերպությունները) սոցիալական գործընկեր հանդիսանալ չեն կարող:

| | |
|---|---|
| **113 Special needs education** | **Հատուկ կարիքներին ուղղված կրթություն** |
| Educational activity and support designed to address specific needs of disabled children or children failing school for reasons known to impede optimal progress.<br>***Comment:*** the term ‘special needs education’ is now preferred to the term ‘special education’. The older term was mainly understood to refer to education of children with disabilities, taking place in special schools or institutions distinct from, and outside the regular school and university system. In many countries today a large proportion of disabled children are in fact educated in institutions of the regular system. | Կրթական գործունեություն և օժանդակություն, որի նպատակն է բավարարել հաշմանդամ երեխաների կամ հայտնի պատճառներով ոչ բավարար առաջադիմություն ցուցաբերող երեխաների հատուկ կարիքները:<br>***Մեկնաբանություն.*** «հատուկ կարիքներին ուղղված կրթություն» եզրույթը ներկայումս նախընտրելի է «հատուկ կրթություն» եզրույթին: Վերջինս ընկալվում էր հիմնականում որպես կրթություն հաշմանդամ երեխաների համար, որն իրականացվում է սովորական դպրոցական կամ համալսարանական համակարգից տարբերվող կամ դրանցից դուրս գործող հատուկ ուսումնական հաստատություններում: Ներկայումս բազմաթիվ երկրներում հաշմանդամություն ունեցող երեխաների մեծ մասնաբաժին գործնականում ուսումնառում է սովորական համակարգի հաստատություններում: |
| **114 Standard** | **Չափորոշիչ** |
| Series of elements whose content is defined by concerned actors.<br>***Comments:*** one can distinguish between several types of standards:<br>• competence standard refers to knowledge, skills and/or competences linked to the practice of a job;<br>• educational standard refers to statements of learning objectives, content of curricula, entry requirements as well as resources required to meet learning objectives; | Մի շարք տարրեր, որոնց բովանդակությունը սահմանվում է շահագրգիռ դերակատարների կողմից:<br>***Մեկնաբանություններ.*** Կարող են տարբերակվել չափորոշիչների տեսակներ՝<br>• կարողության չափորոշիչը հղում է կատարում գիտելիքին, հմտություններին և/կամ կարողություններին, որոնք առնչվում են աշխատանքի (պաշտոնի) իրականացմանը.<br>• կրթական չափորոշիչը հղում է կատարում ուսումնառության արդյունքներին, կրթական ծրագրի բովանդակությանը, մուտքային պահանջներին, ինչպես նաև ուսումնառության արդյունքներին հաս- |

- occupational standard refers to the statements of the activities and tasks related to a specific job and to its practice;
- assessment standard refers to statements of the learning outcomes to be assessed and the methodology used;
- validation standard refers to statements of level of achievement to be reached by the person assessed, and the methodology used;
- certification standard refers to statements of the rules applicable for obtaining a certificate or diploma as well as the rights conferred.

According to the system, these standards can be defined separately or be part of one document.

նելու համար անհրաժեշտ ռեսուրսներին.

- զբաղմունքի չափորոշիչը հղում է կատարում որոշակի պաշտոնի (աշխատանքի) կամ դրա իրականացմանն առնչվող գործողություններին և խնդիրներին.
- գնահատման չափորոշիչը հղում է կատարում ուսումնառության այն արդյունքներին, որոնք պետք է գնահատվեն, և գնահատման մեթոդաբանությանը.
- վավերացման չափորոշիչը հղում է կատարում այն նվաճումներին, որոնք պետք ունենա անհատը, ինչպես նաև գնահատման մեթոդաբանությանը.
- հավաստագրման չափորոշիչը հղում է կատարում վկայական կամ դիպլոմ ստանալու կանոններին, ինչպես նաև դրանցով տրվող իրավունքներին:

Գործող համակարգի համաձայն՝ այդ չափորոշիչները կարող են սահմանվել առանձին կամ կազմել մեկ միասնական փաստաթղթի մաս:

**Նշագրում.** «Կրթության մասին» ՀՀ օրենքում կիրառվում է «***պետական կրթական չափորոշիչ***» հասկացությունը, որը սահմանվում է (հոդված 3, կետ 2) որպես «*նորմատիվ, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները*»:

Կարևոր է նշել, որ *Standard* բառի հայերեն համարժեքը միշտ չէ, որ ***չափորոշիչն*** է: Որպես ածական՝ այն թարգմանվում է «***ստանդարտ***» (տես օրինակ՝ «***Կրթության միջազգային ստանդարտ դասակարգում***»): Բացի այդ, «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքը սահմանում է (հոդված 2, մաս 1, կետ 2) «***ստանդարտ***» հասկացությունը որպես «*փաստաթուղթ, որով սահմանվում են գործունեության տարբեր ձևերին կամ դրանց արդյունքներին վերաբերող համընդհանուր և բազմակի կիրառման համար կանոններ, ընդհանուր սկզբունքներ կամ բնութագրեր՝ ուղղված որոշակի բնագավառում լավագույն կարգավորվածության ձեռքբերմանը, որը մշակվում է փոխհա-*

*մաձայնության հիման վրա և հապարարվում ճանաչված մարմնի կողմից»:* ՀՀ օրենսդրությունում կիրառվում են նաև ***ապանդարարացում, միջազգային ապանդարար***, ***պարածաշրջանային ապանդարար***, ***ազգային ապանդարար***, ***եվրոպական ապանդարար***, ***միջպետական ապանդարար***, ***կազմակերպության ապանդարար*** հասկացությունները:

| 115 Teacher | Դասավանդող |
|---|---|
| Person whose function is to impart knowledge, know-how or skills to learners in an education or training institution.<br>***Comment:*** a teacher may fulfil several tasks such as organising and carrying out training programmes/courses and transmitting knowledge, whether generic or specific, theoretical or practical. A teacher in a vocationally-oriented institution may be referred to as a 'trainer'. | Անձ, ում գործառույթն է ուսումնառուներին գիտելիք, նոու-հաու և հմտություններ փոխանցելը կրթական (ուսումնական) կամ ուսուցման հաստատությունում:<br>***Մեկնաբանություն.*** դասավանդողը կարող է իրականացնել մի շարք հանձնառություններ, ինչպես օրինակ՝ ուսուցման ծրագրի/դասընթացի կազմակերպումն ու իրագործումը, գիտելիքի հաղորդումը՝ լինի այն ընդհանուր կամ հատուկ, տեսական կամ գործնական: Մասնագիտական ուղղվածություն ունեցող հաստատությունում դասավանդողը կարող է անվանվել նաև «ուսուցանող»: |

**Նշագրում**. թեև *Teacher* բառը անգլերենից թարգմանվում է որպես *ուսուցիչ*, *դասատու*, սակայն այս եզրույթի իմաստով, հաշվի առնելով Բառացանկում տրված սահմանումը, առավել նպատակահարմար է կիրառել ավելի լայն՝ «***դասավանդող***» բառը:

ՀՀ օրենսդրությունը սահմանում է դասավանդողների հետևյալ կատեգորիաները՝

- ***մանկավարժական աշխատող***՝ *սովորողների կողմից հանրակրթական (հիմնական, լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների պահանջների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և (կամ) դրանք ապահովող ուսումնական հաստատության աշխատակից* («Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1, կետ 12).
- ***ուսուցիչ***՝ *ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի միջոցով ապահովող և այդ գործընթացի համար անմիջականորեն պատասխանատու մանկավարժական աշխատող* («Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3,

մաս 1, կետ 13).

- ***դասախոս՝*** *ուսանողի (ունկնդրի) տեսական գիտելիքների յուրացումն ապահովող և գործնական կարողությունների զարգացմանը նպաստող, մասնագիտական կրթության և (կամ) ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող* («Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3).
- ***արտադրական ուսուցման վարպետ՝*** *անձի արհեստագործական հմտություններ ապահովող, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և (կամ) մասնագիտական ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող* («Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3).
- ***դասախոս՝*** *բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի գիտամանկավարժական աշխատող, որը տեսական, գործնական, մասնագիտական գիտելիքներ է դասավանդում ուսանողներին, սովորողներին և նպաստում է դրանց յուրացմանը* («Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3, կետ 6):

| **116** | **Trainer** | **Ուսուցանող** |
|---|---|---|
| | Anyone who fulfills one or more activities linked to the (theoretical or practical) training function, either in an institution for education or training, or at the workplace.<br>***Comments:***<br>• two categories of trainer can be distinguished:<br>- professional trainers are training specialists whose job may coincide with that of the teacher in a vocational training establishment;<br>- part-time or occasional trainers are professionals in various fields who take on, in their normal duties, part-time training activity, either in-company (as mentors and tutors of recruits and | Յուրաքանչյուր ոք, ով իրականացնում է (տեսական կամ գործնական) ուսուցման գործառույթին վերաբերող մեկ կամ ավելի գործողություն՝ կրթության կամ ուսուցման հաստատությունում կամ աշխատավայրում:<br>***Մեկնաբանություններ.***<br>• կարելի է տարբերակել ուսուցանողի երկու դաս՝<br>- արհեստավարժ ուսուցանողներն ուսուցման մասնագետներ են, ում աշխատանքը կարող է համընկնել մասնագիտական ուսուցման հաստատության դասավանդողի աշխատանքի հետ,<br>- ոչ հիմնական (ոչ լրիվ դրույքով) ուսուցանողները տարբեր բնագավառների մասնագետներ են, ովքեր իրենց հիմնական պարտականությունների շրջանակներում իրականացնում են ուսուցման որոշակի գործողություններ՝ ընկերությունում (որպես նոր աշխատակից- |

| | | |
|---|---|---|
| | apprentices or as training providers) or externally (by occasionally offering their services at a training establishment);<br>• trainers may carry out various tasks:<br>- design training activities;<br>- organise and implement these activities;<br>- provide the actual training (transfer knowledge, know-how and skills);<br>- help apprentices develop their skills by providing advice, instructions and comments throughout the apprenticeship. | ների և աշկերտների մենթորներ և թյութորներ կամ որպես ուսուցում իրականացնողներ) կամ որպես հրավիրված (դեպքից դեպք առաջարկելով իրենց ծառայությունները ուսուցման հաստատությունում).<br>• ուսուցանողները կարող են իրականացնել տարատեսակ հանձնառություններ՝<br>- մշակել ուսուցման գործողություններ,<br>- կազմակերպել և իրականացնել այդ գործողությունները,<br>- իրականացնել բուն ուսումնառություն (գիտելիքի, նոու-հաուի և հմտությունների փոխանցում),<br>- օժանդակել աշկերտներին զարգացնելու իրենց հմտությունները աշկերտության ընթացքում խորհրդատվության, հրահանգավորման և մեկնաբանություններ կատարելու միջոցով: |
| **117** | **Training course planning and design** | **Դասընթացի պլանավորում և ձևավորում** |
| | Set of consistent methodological activities employed in designing and planning training initiatives and schemes against objectives set.<br>***Comment:*** training course planning and design includes analysis of training demand and needs, project design, coordination and implementation monitoring as well as assessment of training impact. | Սահմանված նպատակներին հասնելուն ուղղված ուսուցման նախաձեռնությունների ձևավորման և պլանավորման համար կիրառվող հետևողական մեթոդաբանական գործողությունների լրակազմ:<br>***Մեկնաբանություն.*** դասընթացի պլանավորումն ու ձևավորումն ընդգրկում է ուսուցման պահանջարկի և կարիքների վերլուծություն, նախագծում, համակարգում և իրականացման մշտադիտարկում, ինչպես նաև ուսուցման ազդեցության գնահատում: |
| **118** | **Training needs analysis** | **Ուսուցման կարիքների վերլուծություն** |
| | Systematic evaluation of present and future skills needs against the | Ուսուցման արդյունավետ ռազմավարություն իրականացնելու նպատակով հմտությունների ներկայիս և ապագա |

skills available to implement an efficient training strategy.

***Comments***:

- training needs analysis rests on:

  (a) identification of skills needs;

  (b) assessment of skills available in the workforce, and

  (c) appraisal of skills gaps and shortages;
- training needs analysis can be conducted at individual, organisational, sectoral, national or international levels; it may focus on quantitative or qualitative aspects (such as level and type of training) and should ensure that training is delivered effectively and cost-efficiently.

կարիքների կանոնավոր գնահատում՝ առկա հմտությունների հետ համեմատելու միջոցով:

***Մեկնաբանություններ.***

- ուսուցման կարիքների վերլուծության հիմքում են՝ ա) հմտությունների կարիքների որոշարկումը, բ) աշխատուժի ունեցած հմտությունների գնահատումը, գ) հմտությունների բացի և անբավարարության գնահատումը.
- ուսուցման կարիքների վերլուծությունը կարող է իրականացվել անձի, կազմակերպության, ճյուղի, ազգային ու միջազգային մակարդակներում: Այն կարող է կենտրոնանալ քանակական կամ որակական կողմերի վրա (օրինակ՝ ուսուցման մակարդակը և տեսակը) և պետք է ապահովի տրամադրվող ուսուցման արդյունավորությունն ու ծախսարդյունավետությունը:

## 119 Training of trainers

## Ուսուցանողների ուսուցում

Theoretical or practical training for teachers and trainers.

***Comments:*** training of trainers:

- is for teaching/training personnel, either practising: (a) as professional teachers or trainers, (b) as professionals in a given field who accompany trainees in their work environment (occasional teachers or trainers);
- covers a wide range of skills: knowledge specific to the field in question (general, technical or scientific); educational, psychological and sociological

Դասավանդողների և ուսուցանողների տեսական կամ գործնական ուսուցում:

***Մեկնաբանություն.*** Ուսուցանողների ուսուցումը՝

- այն դասավանդողների/ուսուցանողների համար է, ովքեր՝ ա) արհեստավարժ դասավանդողներ կամ ուսուցանողներ են, բ) տվյալ ոլորտի մասնագետներ են, ովքեր ուղեկցում են ուսումնառուներին աշխատանքային միջավայրում (դեպքից դեպք են դասավանդում կամ ուսուցանում).
- ներառում է հմտությունների լայն շրջանակ՝ խնդրո առարկա ոլորտին հատուկ գիտելիք (ընդհանուր, մասնագիտական կամ գիտական), կրթական,

| | |
|---|---|
| skills; management skills; familiarity with the world of work; and knowledge of training schemes and target audience; | հոգեբանական և սոցիոլոգիական հմտություններ, ծանոթություն աշխատանքի աշխարհի հետ, ուսուցման սխեմաների և թիրախ լսարանի իմացություն. |
| • also covers training related to course design, organisation and implementation, as well as content of training activities (imparting knowledge, know-how and skills). | • ներառում է նաև դասընթացի ձևավորման, կազմակերպման ու իրականացման հարցերին, ինչպես նաև ուսուցման գործողությունների բովանդակությանը (գիտելիքի, նոուհաուի և հմտությունների փոխանցում) վերաբերող ուսուցում: |
| **120 Transferability of learning outcomes** | **Ուսումնառության արդյունքների փոխանցելիություն** |
| Degree to which knowledge, skills and competences can be used in a new occupational or educational environment, and/or be validated and certified. | Որքանով է հնարավոր կիրառել գիտելիքը, հմտություններն ու կարողությունները նոր զբաղմունքի շրջանակներում կամ կրթական նոր միջավայրում և/կամ վավերացնել ու հավաստագրել դրանք: |
| **121 Transition from school or training to work** | **Անցում կրթությունից կամ ուսուցումից դեպի աշխատանք** |
| Move from education or training to employment, covering the period between leaving education and entering the labour market. | Տեղաշարժ կրթությունից կամ ուսուցումից դեպի զբաղվածություն, որն ընդգրկում է կրթությունն ավարտելուց (լքելուց) մինչև աշխատաշուկա մուտք գործելն ընկած ժամանակահատվածը: |
| ***Comment:*** transition between school and employment (integration path, type of employment – with regard to level and status – and duration) is complex. Integration depends on many factors (gender, age, qualification, employment policy, guidance and counselling provision, etc.). | ***Մեկնաբանություն.*** կրթությունից զբաղվածություն անցումը (ինտեգրման ուղին, զբաղվածության տեսակը՝ դրա մակարդակի և կարգավիճակի տեսանկյունից, և տևողությունը) բարդ գործընթաց է: Ինտեգրումը կախված է մի շարք գործոններից (սեռ, տարիք, որակավորում, զբաղվածության քաղաքականություն, ուղղորդման և խորհրդատվության տրամադրում և այլն): |

**Նշագրում**. թեև *School* բառը անգլերենից սովորաբար թարգմանվում է որպես *դպրոց*, այստեղ այն ավելի լայն՝ ցանկացած *ուսումնական հաստատության* կամ ընդհանուր առմամբ՝ դպրության իմաստ ունի: Այնուամենայնիվ, այս եզրույթի իմաստով, հաշվի առնելով Բառացանկում տրված սահմանումը, առավել նպատակահարմար է հայերեն համարժեքում կիրառել «*կրթություն*» բառը:

| | |
|---|---|
| **122 Transparency of qualifications** | **Թափանցիկություն՝ որակավորումների** |
| Degree of visibility and legibility of qualifications, their content and value on the (sectoral, regional, national or international) labour market and in education and training systems. | Աշխատաշուկայում (ճյուղային, տարածքային, ազգային ու միջազգային) և կրթության և ուսուցման համակարգերում որակավորումների և դրանց բովանդակության ու արժեքի տեսանելիության և «ընթեռնելիության» աստիճան: |
| **123 Tutoring** | **Թյութորություն (թյութորինգ)** |
| Any activity offering a learner guidance, counselling or supervision by an experienced and competent professional.<br>The tutor supports the learner throughout the learning process (at school, in training centres or on the job).<br>***Comment:*** tutoring covers various activities:<br>• academic subjects (to improve educational achievement);<br>• career guidance (to ease transition from school to work);<br>• personal development (to encourage learners to make wise choices). | Ցանկացած գործողություն, որն ուսումնառուին առաջարկում է ուղղորդում, խորհրդատվություն կամ վերահսկողություն փորձառու և իրազեկ մասնագետի կողմից:<br>Թյութորն աջակցում է ուսումնառուին նրա ուսումնառության ընթացքում (ուսումնական հաստատությունում, ուսուցման կենտրոնում կամ աշխատանքի ընթացքում):<br>***Մեկնաբանություն.*** թյութորությունն ընդգրկում է տարատեսակ գործողություններ՝<br>• ակադեմիական առարկաներ (բարելավելու կրթական նվաճումները),<br>• կարիերայի ուղղորդում (դյուրինացնելու անցումը կրթությունից դեպի աշխատանք),<br>• անձնային զարգացում (խթանելու ուսումնառուներին կատարել ողջամիտ ընտրություն): |

| 124 Underqualification | Թերորակավորվածություն |
|---|---|
| Situation where an individual has a lower qualification than the current job requires.<br>***Comments:***<br>• underqualification may be assessed against the level of education or the degree of work experience in previous employment;<br>• underqualification can be temporary (such as employers hire underqualified staff for a high-level position until they find a more appropriate person) or have a more permanent character;<br>• underqualification may refer to undereducation (a situation where an individual has a level of education inferior to that required for a job) or underskilling (a situation where an individual lacks the skills and competences necessary to perform a job to acceptable standards). | Իրավիճակ, երբ անհատն ունի ավելի ցածր որակավորում, քան պահանջում է նրա ընթացիկ աշխատանքը:<br>***Մեկնաբանություններ***.<br>• թերորակավորվածությունը կարող է գնահատվել կրթության մակարդակի կամ աշխատանքային փորձի տեսանկյունից,<br>• թերորակավորվածությունը կարող է լինել ժամանակավոր (օրինակ՝ երբ գործատուները վարձում են թերորակավորված աշխատակից բարձր մակարդակի պաշտոնի համար մինչև առավել համապատասխան անձ գտնելը),<br>• թերորակավորվածությունը կարող է վերաբերել «թերկրթվածությանը» (իրավիճակ, երբ անձն ունի կրթության ավելի ցածր մակարդակ, քան պահանջում է տվյալ աշխատանքը) կամ «թերհմտությանը» (իրավիճակ, երբ անձի հմտություններն ու կարողությունները չեն բավարարում տվյալ աշխատանքն ընդունելի չափորոշիչներին համապատասխան կատարելու համար): |

| 125 Unit of learning outcomes (ECVET) | Ուսումնառության արդյունքների միավոր (ՄԿՈՒԵԿ) |
|---|---|
| Component of a qualification, consisting of a coherent set of knowledge, skills and competences, that can be assessed and validated;<br>*or*<br>Set of knowledge, skills, and/or competences which constitute a coherent part of a qualification. A | Որակավորման բաղադրիչ՝ բաղկացած փոխկապակցված գիտելիքի, հմտություններ և կարողությունների լրակազմից, որը կարող է գնահատվել և վավերացվել:<br>*կամ*<br>Որակավորման ամբողջական մաս կազմող՝ գիտելիքի, հմտությունների և/կամ կարողությունների լրակազմ: Միավորը կարող է լինել որակավորման փոքրագույն |

unit can be the smallest part of a qualification that can be assessed, transferred and, possibly, certified. It can be specific to a single qualification or common to several qualifications.

***Comment:*** the characteristics of units (content, size, total number of units composing a qualification, etc.) are defined by the competent body responsible for the qualification at the appropriate level. The definition and description of units can vary according to the qualifications system and procedures of the competent body. However, the ECVET system proposes to provide for every unit:

- its generic title;
- the knowledge, skills and competences contained in it;
- the criteria for assessment of the corresponding learning outcomes.

մասը, որը հնարավոր է գնահատել, փոխանցել և որոշ դեպքերում՝ հավաստագրել: Այն կարող է հատուկ լինել որոշակի որակավորման համար կամ ընդհանուր՝ մի քանի որակավորումների համար:

***Մեկնաբանություն.*** միավորների բնութագրիչները (բովանդակությունը, ծավալը, որակավորումն ամբողջացնող միավորների ընդհանուր թիվը) սահմանվում են որոշակի մակարդակի որակավորման համար պատասխանատու իրավասու մարմնի կողմից: Այնուամենայնիվ, ՄԿՈՒԵԿ համակարգն առաջարկում է յուրաքանչյուր միավորի համար սահմանել՝

- դրա ընդհանուր անվանումը,
- դրանում ամփոփված գիտելիքը, հմտություններն ու կարողությունները,
- համապատասխան ուսումնառության արդյունքների գնահատման չափանիշները:

## 126 Upskilling

## Որակավորման բարձրացում

Short-term targeted training typically provided following initial education or training, and aimed at supplementing, improving or updating knowledge, skills and/or competences acquired during previous training.

Կարճաժամկետ թիրախավորված ուսուցում, որը սովորաբար հետևում է հիմնական (սկզբնական) կրթությանը կամ ուսուցմանը և նպատակաուղղված է նախորդ ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների և/կամ կարողությունների կատարելագործմանը կամ արդիականացմանը:

**Նշագրում.** տվյալ համատեքստում «Որակավորման բարձրացում» եզրույթը չպետք է ընկալվի որպես ավելի բարձր մակարդակի որակավորման շնորհում: Խիստ իմաստով՝ այս եզրույթը ճշգրիտ չէ, սակայն առաջարկվում է որպես անգլերեն *Upskilling* եզրույթի համարժեք՝ իր լայնորեն տարածված

և ավանդաբար ընդունված իմաստին համապատասխան:

| | |
|---|---|
| **127 Validation of learning outcomes** | **Ուսումնառության արդյունքների վավերացում** |
| Confirmation by a competent body that learning outcomes (knowledge, skills and/or competences) acquired by an individual in a formal, non-formal or informal setting have been assessed against predefined criteria and are compliant with the requirements of a validation standard. Validation typically leads to certification.<br>*or*<br>Process of confirmation by an authorised body that an individual has acquired learning outcomes measured against a relevant standard. Validation consists of four distinct phases:<br>• identification through dialogue of particular experiences of an individual;<br>• documentation to make visible the individual's experiences;<br>• formal assessment of these experiences; and<br>• certification of the results of the assessment which may lead to a partial or full qualification. | Իրավասու մարմնի կողմից տրված հաստատում առ այն, որ ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ ուսումնառության միջոցով անձի ձեռք բերած ուսումնառության արդյունքները (գիտելիքը, հմտությունները և/կամ կարողությունները) գնահատվել են նախապես սահմանված չափանիշների հետ համեմատման միջոցով և բավարարում են վավերացման չափորոշչի պահանջները: Վավերացումը սովորաբար հանգեցնում է հավաստագրման:<br>*կամ*<br>Գործընթաց, երբ իրավասու մարմինը հաստատում է, որ անհատը ձեռք է բերել համապատասխան չափորոշչով պահանջվող ուսումնառության արդյունքները: Վավերացումը բաղկացած է չորս առանձին փուլերից.<br>• երկխոսության միջոցով անհատի որոշակի փորձառության որոշարկում,<br>• անհատի փորձառության փաստաթղթավորում,<br>• այդ փորձառությունների պաշտոնական գնահատում,<br>• գնահատման արդյունքների հավաստագրում, որը կարող է հանգեցնել մասնակի կամ լրիվ որակավորման: |
| **128 Valuing learning** | **Ուսումնառության արժևորում** |
| Process of promoting participation in and outcomes of (formal or non-formal) learning, | Ուսումնառությանը (ֆորմալ և ոչ ֆորմալ) մասնակցության և ուսումնառության արդյունքների խթանման գործընթաց դրա իրական արժեքի մասին տեղեկացվածության բարձրացման և |

| | | |
|---|---|---|
| | to raise awareness of its intrinsic worth and to reward learning. | ուսումնառության խրախուսման նպատակով: |
| **129** | **Vocational education and training (VET)** | **Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈՒ)** |
| | Education and training which aim to equip people with knowledge, know-how, skills and/or competences required in particular occupations or more broadly on the labour market. | Կրթություն և ուսուցում, որը նպատակաուղղված է մարդկանց մոտ ձևավորել գիտելիք, նոու-հաու, հմտություններ և/կամ կարողություններ, որոնք պահանջվում են որոշակի զբաղմունք իրականացնելու համար կամ ընդհանուր առմամբ՝ աշխատաշուկայում: |
| **130** | **Work-based learning** | **Աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն** |
| | Acquisition of knowledge and skills through carrying out – and reflecting on – tasks in a vocational context, either at the workplace (such as alternance training) or in a VET institution. | Գիտելիքի և հմտությունների ձեռքբերում մասնագիտական համատեքստում՝ աշխատավայրում (օրինակ՝ հաջորդման եղանակով ուսուցում) կամ ՄԿՈՒ հաստատություններում, հանձնառություններ կատարելու և դրանք ընկալելու միջոցով: |

**Նշագրումներ**.

1. Չի կարելի թարգմանել որպես «*ուսումնառություն աշխատավայրում*»:
2. Եվրոպական կրթական հիմնադրամը (European Training Foundation) առաջարկում է սրանից սկզբունքորեն տարբերվող սահմանում. «*Ուսումնառություն, որը տեղի է ունենում, երբ մարդիկ իրական աշխատանք են կատարում: Այս աշխատանքը կարող է լինել վճարվող կամ անվճար, սակայն պետք է լինի իրական ապրանքի կամ ծառայությունների արտադրության հանգեցնող իրական աշխատանք*[18]»:

[18] *"Learning that occurs when people do real work. This work can be paid or unpaid, but it must be real work that leads to the production of real goods and services"*, "Work-Based Learning. A Handbook for Policy Makers and Social Partners in ETF Partner Countries", ETF 2014. http://www.etf.europa.eu/webatt.nsf/0/8EFD210012D6B04EC1257CE60042AB7E/$file/Work-based%20learning_Handbook.pdf

# ՄԱՍ 2. ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՑԱՆԿ

Ա | Բ | Դ | Ի | Լ | Կ | Հ | Մ | Ն | Ո | Պ | Ռ | Ս | ՈՒ | Ք | Ֆ |

| № | ՀԱՅԵՐԵՆ ԵԶՐՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ | ԱՆԳԼԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ |
|---|---|---|
| 1 | **Ակադեմիա (ուսումնական)** | **Academy (educational)** |
| | Բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է որոշակի ոլորտում կրթության, գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացմանը, իրականացնում է որոշակի ճյուղի (բնագավառի) բարձր որակավորման մասնագետների պատրաստումը և վերաորակավորումը, հետբուհական կրթական ծրագրերը: [1][19] | Higher education institution the activities whereof are aimed at developing education, science, technology and culture in a particular field; which carries out preparation and re-qualification of highly qualified specialists in a certain branch (sector) and implements postgraduate educational programmes. [1] |
| 2 | **Ակադեմիական արձակուրդ** | **Academic leave** |
| | Նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառող սովորողներին, ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին՝ ըստ բժշկասոցիալական փորձաքննության եզրակացության, մեկ օրացուցային տարով (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի) տրվող արձակուրդ: [*ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006թ. դեկտեմբերի 22-ի № 997-Ն հրաման*] | A leave granted for one calendar year (except the cases stipulated by the legislation) to the preliminary, middle, higher and post-graduate educational programmes' students and researchers of doctoral studies, based on the conclusions of the medico-socilological expertise. [*Order of the Minister of Education and Science, № 997-N, 22nd December 2006*] |

[19] ՀՀ օրենքը «Կրթության մասին»:

| | | |
|---|---|---|
| **3** | **Անհատական մասնագիտական ուսուցում** | Տես՝ [***Վարպետային ուսուցում***] |
| **4** | **Առկա (ստացիոնար) ուսուցում** | **Full-time (stationary) studies** |
| | Կրթության (ուսուցման) իրականացման ձև: *Որևէ իրավական ակտով սահմանված չէ:* | Form of education (training provision. *This term is not defined by any leagal act.* |
| **5** | **Ատեստավորում** | **Attestation** |
| | Ուսումնական հաստատության գործունեության և նրա շրջանավարտների պատրաստման որակի, բովանդակության և մակարդակի գնահատում՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան: [1] | Evaluation of the activities of an educational institution and that of the quality, content and level of preparation of the graduates thereof, against the requirements of state educational standards. [1] |

**Նշագրումներ.**

1. Եզրույթի այս սահմանումն անիմաստ է կամ սխալ, քանի որ «Կրթության մասին» ՀՀ օրենքում, որով այն սահմանված է, ***ատեստավորումն*** օգտագործվում է միայն անձանց նկատմամբ (այսինքն՝ որևէ կերպ չի վերաբերում ուսումնական հաստատության գործունեությանը)՝ հիմնականում «ամփոփիչ ատեստավորում» արտահայտության մեջ:
2. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» է ՀՀ օրենքներում օգտագործված է «Ուսումնական հաստատության որակի գնահատում (ատեստավորում)» եզրույթը, որը համապատասխանաբար՝ սահմանված է հետևյալ կերպ.
   - *Արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատում.*
   - *Բարձրագույն ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատում:*

| | | |
|---|---|---|
| **6** | **Արտադրական ուսուցման վարպետ** | **1. Master of practical training**<br>**2. Practical trainer**<br>**3. Instructor** |
| | Անձի արհեստագործական հմտություններ ապահովող, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և (կամ) մասնագիտական ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող: [2][20] | A pedagogical worker of the system of preliminary and middle vocational education and/or vocational training, who ensures vocational skills of a person. [2] |
| **7** | **Արհեստագործական կրթություն** | **Craftsmanship education** |
| | Առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա արհեստագործական կրթական ծրագրերի իրականացում, բացառությամբ վարպետային ուսուցման: [2] | Implementation of craftsmanship education programmes, except for Master training, on the basis of at least basic general education. [2] |
| | **Նշագրում**. Ըստ էության՝ նույնաբանություն (տավտոլոգիա) է: Ոչինչ չի սահմանում: | |
| **8** | **Արհեստագործական ուսումնարան** | **Craftsmanship school** |
| | Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր: [1] | Organisation with the status of a legal person or a subdivision thereof implementing a preliminary vocational (craftsmanship) educational programme. [1] |
| | Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է արհեստագործական կրթական ծրագիր: [2] | Organisation with the status of a legal person or a subdivision thereof implementing a craftsmanship educational programme. [2] |
| **9** | **Արհեստավոր** | **Craftsman** |
| | Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է նախ- | Level of qualification degree of preliminary vocational (craftsmanship) education, which is |

[20] ՀՀ օրենքը «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին»

| | | |
|---|---|---|
| | նական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրին և (կամ) որակավորման կարգին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց: [1]<br>Արհեստագործական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է արհեստագործական կրթական ծրագրին և (կամ) որակավորման կարգին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց: [2] | awarded to persons having passed state final attestation in accordance with preliminary vocational (craftsmanship) educational programme and (or) regulation on qualification. [1]<br>Level of qualification degree of craftsmanship education, which is awarded to persons having passed state final attestation in accordance with craftsmanship educational programme and (or) regulation on qualification. [2] |
| **10** | **Բակալավր** | **1. Bachelor's degree**<br>**2. Bachelor[21]** |
| | Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ կրթություն ունեցող և առնվազն քառամյա (ոստիկանական կամ զինվորական մասնագիտությունների համար՝ միջին մասնագիտական ոստիկանական կամ զինվորական կրթության հիմքով, առնվազն եռամյա) բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան ատեստավորված անձանց: [1] | 1. Qualification degree of higher professional education, which is awarded to persons with secondary education having passed attestation in accordance with at least four-year higher professional education programmes (in case of police or military professions — in accordance with at least three-year programmes on the basis of police or military middle vocational education). [1]<br>2. Person holding Bachelor's Degree. |
| **11** | **Դասախոս** | **Lecturer** |
| | Ուսանողի (ունկնդրի) տեսական գիտելիքների յուրացումն ապահովող և գործնական կարողությունների զարգացումը նպաստող, մասնագիտական կրթության և (կամ) ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող: [2] | A pedagogical worker of the vocational education and/or training system, who ensures mastering of the theoretical knowledge by students (attendees) |

[21] Որպես բակալավրի աստիճան ստացած անձ:

| | | |
|---|---|---|
| | | and supports developing their practical competences. [2] |

**Նշագրում**. Անհրաժեշտ է հաշվի առնել, որ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը «***դասախոս***» եզրույթը սահմանում է որպես «*բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի գիտամանկավարժական աշխատող, որը տեսական, գործնական, մասնագիտական գիտելիքներ է դասավանդում ուսանողներին, սովորողներին և նպաստում է դրանց յուրացմանը*»:

| | | |
|---|---|---|
| **12** | **Դիպլոմ *(արհեստագործական կրթության, միջին մասնագիտական կրթության, բակալավրի, մագիստրոսի, բարձրագույն կրթությամբ մասնագետի, հետազոտողի, օրդինատորի)*** | **Diploma *(of preliminary vocational (craftsmanship) education, of* middle *vocational education, of Bachelor, of Master, of Specialist with Diploma, etc.)*** |
| | Ուսումնական հաստատության ավարտական փաստաթուղթ: [1] | Graduation document of educational institution. [1] |
| | Բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության ավարտական փաստաթուղթ: [3][22] | Graduation document of higher educational institution or organisation providing post-graduate professional education. [3] |

**Նշագրում**. Թե՛ «Կրթության մասին», թե՛ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները սահմանում են *դիպլոմը* որպես ուսումնական *հաստատության* (կամ կազմակերպության) ավարտական փաստաթուղթ, սակայն դիպլոմների անվանումները հղում են կատարում կրթության մակարդակին, աստիճանին կամ որակավորման մակարդակին, օրինակ՝ ***արհեստագործական կրթության*** դիպլոմ, ***մագիստրոսի*** դիպլոմ, ***հետազոտողի*** դիպլոմ, այլ ոչ թե հաստատությանը: Սա ակնհայտ հակասություն է, որը մեր կարծիքով, պետք է լուծվի կրթության մակարդակի կամ, ավելի ճիշտ՝ որակավորման մակարդակի օգտին, այն է, օրինակ՝ ***արհեստագործական կրթության դիպլոմ*** կամ ***արհեստավորի դիպլոմ***:

[22] ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»:

| | | |
|---|---|---|
| **13** | **Դիպլոմավորված մասնագետ** | **1. Diploma Specialist**<br>**2. Specialist with Diploma** |
| | Բարձրագույն մասնագիտական կրթու-- թյան որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ կամ մասնա- գիտական կրթություն ունեցող անձանց՝ առնվազն հնգամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով: [1] | Qualification degree of higher professional education, which is awarded to persons with secondary education or vocational education upon attestation results of at least five-year higher professional education programme. [1] |
| **14** | **Դրսեկություն (էքստեռնատ)** | **External studies (externship)** |
| | Ինքնակրթությամբ և արհեստագործա- կան և միջին մասնագիտական ուսում- նական հաստատությունում գիտելիքնե- րի ու կարողությունների ընթացիկ, ամփոփիչ գնահատման եղանակով իրականացվող կրթության ձև: [2]<br>Ինքնակրթությամբ և գիտելիքների ու կարողությունների ընթացիկ, ամփոփիչ գնահատման եղանակով ուսումնական հաստատությունում իրականացվող կրթության ձև: [3] | A form of education implemented through self-education and formative and summative assessment of knowledge and competences at the craftsmanship and middle vocational educational institutions. [2]<br>A form of education implemented at the educational institution through self-education and summative assessment of knowledge and competences. [3] |

**Նշագրումներ**.

1. Վերը բերված երկու սահմանումների մեջ «*ուսումնական հաստատու- թյունում*» արտահայտության դիրքի փոփոխությունը որոշակիորեն փո- խում է նաև դրանց իմաստը:
2. «Կրթության մասին» ՀՀ օրենքում օգտագործված է «***Էքստեռն (դրսեկություն)***» եզրույթը, որ սահմանված է որպես «*Ինքնակրթությամբ և ուսումնական հաստատությունում գիտելիքների ու կարողությունների ամփոփիչ ատեստավորման եղանակով իրականացվող կրթության ձև*»:

| | | |
|---|---|---|
| **15** | **Ինֆորմալ կրթություն** | **Informal learning**<br>[Informal education] |
| | Անձի առօրյա և ընտանեկան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և այլ տարբեր գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներ, որոնք, որպես կանոն, կանխամտածված չեն անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չեն ժամանակի կամ ռեսուրսների առումով, չեն հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի: [1] | Learning outcomes achieved as a result of daily and family life, rest, leisure, work and other different activities that, as a rule, are unintentional from the person's perspective as targeted learning, are not organised and coordinated in terms of time or resources, do not lead to official recognition of the outcomes, except for the cases provided for by the legislation of the Republic of Armenia. [1] |

**Նշագրում**. ակնհայտ է, որ եզրույթն ինքնին պարունակում է կոպիտ սխալ, քանի որ «ինֆորմալը» սկզբունքորեն չի կարող վերաբերել ***կրթությանը***, այլ միայն ուսումնառությանը: Այդ իսկ պատճառով անգլերեն տարբերակում առաջարկված է “*learning*” բառը:

| | | |
|---|---|---|
| **16** | **Ինստիտուտ** | **Institute** |
| | Բարձրագույն ուսումնական հաստատություն, որն իրականացնում է գիտության, տնտեսության և մշակույթի մի շարք ուղղությունների գծով մասնագիտական ու հետբուհական կրթական ծրագրեր և գիտական ուսումնասիրություններ: [1] | A higher education institution implementing professional and postgraduate educational programmes and scientific studies in a number of directions of science, economy and culture. [1] |

| | | |
|---|---|---|
| **17** | **Լիցենզավորում** | **Licencing** |
| | Ուսումնական հաստատության գործունեության թույլտվության գործընթաց: [1] | The process of authorisation of an educational institution's activity. [1] |

**Նշագրում**. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով (հոդված 3) ***լիցենզավորումը*** սահմանված է որպես «*գործընթաց՝ կապված լիցենզիաների տրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման հետ*», իսկ ***լիցենզիան՝*** որպես «*լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն, ինչպես նաև այդ իրավունքը*

*հասարակող պաշտոնական փաստաթուղթ*»: «Կրթության մասին» ՀՀ օրենքով, ըստ էության, փորձ է արված հարմարեցնել «***յիցենզավորում***» եզրույթը կրթության ոլորտին, սակայն դրա իմաստն ակնհայտորեն աղավաղված է:

| | | |
|---|---|---|
| **18** | **Լրացուցիչ կրթություն (ուսուցում)** | **Continuing education (training)**<br>[Supplementary education (training)] |
| | Լրացուցիչ կրթական ծրագրով իրականացվող ոչ ֆորմալ ուսումնառություն, որի առավելագույն տևողությունը կարող է լինել մինչև հինգ ամիս: [1] | Non-formal learning with the maximum duration of five months, implemented in the framework of a supplementary (continuing) educational programme. [1] |

**Նշագրում**. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում օգտագործված է «***լրացուցիչ կրթություն***» եզրույթը, որը սահմանված է որպես «*Մասնագիտական կրթության հենքի վրա հիմնական կրթական ծրագրերից դուրս մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերաորակավորումը ապահովող, անձի մասնագիտական որակավորումն անընդհատ լրացնող կրթություն*»: Այս սահմանումը պարունակում է մի շարք սխալներ կամ առնվազն՝ անորոշություններ: Այսպես՝ 1) որևէ տեղ սահմանված չէ և հայտնի չէ, թե ինչ է «*մասնագիտական որակ(ներ)ը*». 2) նույնպես որևէ տեղ սահմանված չէ և հայտնի չէ, թե ինչ է «*վերաորակավորումը*», սակայն եթե անգամ ենթադրենք, որ դա անձին մեկ այլ որակավորման շնորհումն է, ապա օրենսդրությամբ որևէ կերպ նախատեսված չէ, որ դա կարող է տեղի ունենալ լրացուցիչ կրթական ծրագրերի միջոցով կամ արդյունքում. 3) հաշվի առնելով «*որակավորում*» եզրույթի սահմանումը՝ հասկանալի չէ, թե ինչ է նշանակում «*որակավորումը լրացնելը*»:

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում օգտագործվում է «***Լրացուցիչ մասնագիտական կրթություն***» եզրույթը (տես՝ ստորև):

| | | |
|---|---|---|
| **19** | **Լրացուցիչ մասնագիտական կրթություն** | **Continuing vocational education**<br>[Supplementary vocational education] |
| | Հիմնական մասնագիտական կրթական ծրագրերից դուրս անձի մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերաորակավորումը ապահովող, որակավորումը | Education process beyond the framework of main (initial) vocational educational programmes, improving professional qualities, ensuring |

| | | |
|---|---|---|
| | բարձրացնող և լրացնող ուսումնական գործընթաց: [2] | professional re-qualification, upgrading and complementing the qualification of a person. [2] |

**Նշագրում**. Այս սահմանումը պարունակում է նույն սխալներն ու անորոշությունները, ինչ որ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում «*լրացուցիչ կրթություն*» եզրույթի համար բերված սահմանումը (տես «*Լրացուցիչ կրթություն (ուսուցում)*» եզրույթի համար կատարված նշագրումը վերևում): Ավելին՝ այստեղ օգտագործված է նաև մեկ անորոշ հասկացություն՝ «*որակավորման բարձրացում*»:
«Կրթության մասին» ՀՀ օրենքում օգտագործվում է «*Լրացուցիչ կրթություն (ուսուցում)*» եզրույթը (տես՝ վերևում):

| | | |
|---|---|---|
| **20** | **Կրեդիտ (չափանիշ)** | **Credit**<br>[Credit (criteria)] |
| | Ուսումնական բեռնվածության և գիտելիքների յուրացման չափաքանակ: [2] | The volumes of academic load and knowledge mastering. [2] |

**Նշագրումներ**.
1. Անհասկանալի է «գիտելիքների յուրացման չափաքանակ» արտահայտության իմաստը:
2. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում օգտագործված է «***ակադեմիական կրեդիտ (չափանիշ)***» եզրույթը, որը սահմանված է՝ «*ուսումնական բեռնվածության չափման ժամաքանակով արտահայտվող պայմանական միավոր*»: Այսինքն՝ այստեղ հղում է կատարվում միայն ուսումնառության վրա ծախսված ժամաքանակին, այլ ոչ նաև «գիտելիքների յուրացմանը»:

| | | |
|---|---|---|
| **21** | **Կրեդիտային (չափանիշային) համակարգ** | **Credit system**<br>[Credit (criteria) system] |
| | Ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ, որը ներառում է դասավանդումը, գործնական և անհատական պարապմունքները, խորհրդատվությունները, ռեֆերատների, այլ աշխատանքների պատրաստումը, ամփոփիչ ստուգում- | System of organising the education process and that of measuring, recording and transferring the learning outcomes in terms of credits. This system includes teaching, practical and individual classes, consultations, preparation of term papers, other works, preparation to final testing, assessment, etc. [2] |

| | | |
|---|---|---|
| | ների նախապատրաստումը, գնահատումը և այլն: [2]<br>Ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների ակադեմիական կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ, որը ներառում է դասավանդումը, գործնական և անհատական պարապմունքները, խորհրդատվությունները, ռեֆերատների, այլ աշխատանքների պատրաստումը, քննությունների նախապատրաստումը, գնահատումը և այլն: [3] | System of organising the education process and that of measuring, recording and transferring the learning outcomes in terms of academic credits. This system includes teaching, practical and individual classes, consultations, preparation of term papers, other works, preparation to exams, assessment, etc. [3] |
| **22** | **Կրթական (այդ թվում՝ ռազմական) ծրագիր** | **1. Educational (including military) programme**<br>**2. Curriculum**[23] |
| | Կրթության համապատասխան մակարդակի բովանդակությունը և մասնագիտական ուղղվածությունը: [1] | The content and the field of the relevant level of education. [1] |
| **23** | **Կրթահամալիր** | **Educational complex** |
| | Տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորում: [1] | An association of educational institutions implementing different educational programmes (curricula). [1] |
| **24** | **Կրթության որակ** | **Quality of education** |
| | Կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը և ուսումնառության գնա- | A measurable result of organisation of education targeted at reaching the objectives and the tasks defined by the education policy. It is assessed by consideration of the individual needs of the learner, the environment where education is organised, the programmatic content of education, the process of education organisation and the |

[23] Տես՝ այս Բառացանկի 1-ին բաժնում բերված “Curriculum” եզրույթին նվիրված նշագրումը:

| | | |
|---|---|---|
| | հատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների: [1] | learning outcomes assessed according to the defined criteria. [1] |
| **25** | **Կրթություն** | **Education** |
| | Անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար: [1] | Training and upbringing process in the interests of a person, society and the state, aimed at preserving the knowledge and transferring it to generations. [1] |

**Նշագրում**. Այս եզրույթի սահմանումը խիստ նեղ ու սահմանափակ բնույթ է կրում, առնվազն՝ այն պատճառով, որ վկայակոչում է միայն գիտելիքին՝ անտեսելով, օրինակ՝ հմտությունները, կարողությունները և արժեքային համակարգը, որոնք նույն օրենքով տրված այլ սահմանումներում (օրինակ՝ «հարատև կրթություն» եզրույթի համար) ճանաչվում են որպես կրթության արդյունքների տարրեր: Այնուամենայնիվ, դիտարկելով անգամ միայն գիտելիքը, ակնհայտ է նաև, որ կրթության նպատակը չի կարող սահմանափակվել զուտ դրա պահպանմամբ և սերունդներին փոխանցմամբ: Սահմանման մեջ առկա է նաև քերականական սխալ. *«նպատակաուղղված է … համար»*:

| | | |
|---|---|---|
| **26** | **Համալսարան** | **University** |
| | Բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է բնագիտական, հասարակագիտական, գիտության և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղությունների բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը: [1] | A higher education institution, the activities whereof are aimed at organising higher, post-graduate and continuing education, fundamental scientific research and studies in different fields of natural sciences, sociology, science and technology, and culture. [1] |
| **27** | **Հանրակրթական ուսումնական հաստատություն** | **1. General educational institution**<br>**2. Institution of general education** |
| | Մեկ կամ մի քանի հանրակրթական հիմնական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություն: [1] | An educational institution implementing one or more main programmes (curricula) of general education. [1] |

| | | |
|---|---|---|
| **28** | **Հատուկ կրթություն** | **Special education** |
| | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաների ուսուցման և կրթության համակարգ, որը մեկ կամ մի քանի կրթական ծրագրերի հիման վրա կարող է իրականացվել հատուկ կամ ընդհանուր հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատություններում: [1] | A system of training and education of persons in need of special conditions for education as well as that of children having demonstrated antisocial conduct, which, on the basis of one or several educational programmes (curricula), may be implemented in special or common institutions of general education, those of vocational education. [1] |
| **29** | **Հարատև կրթություն**[24] | **Lifelong learning** |
| | Անձի ամբողջ կյանքի ընթացքում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մասնակցության միջոցով ձեռք բերած ուսումնառության արդյունքներ, որոնցով անհատը ձևավորում կամ կատարելագործում է իր գիտելիքները, հմտությունները, կարողությունները և արժեքային համակարգը: [1] | Learning outcomes achieved through participation in formal, non-formal and informal education throughout the entire life of a person, by which the individual forms or improves his or her knowledge, skills, competences and the system of values. [1] |
| **30** | **Հեռակա ուսուցում** | **1. Part-time education (studies)**<br>**2. Extramural studies**<br>**3. Education by correspondence**<br>**4. Off-site education** |
| | Կրթության (ուսուցման) իրականացման ձև: *Որևէ իրավական ակտով սահմանված չէ:* | Form of education (instruction) provision. |
| **31** | **Հեռավար (դիստանցիոն) ուսուցում** | **Distance learning** |
| | Համակարգված ուսուցման ձև, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը ուսանողի կամ ունկնդրի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխ- | Systematic form of instruction, when the process of direct and indirect instruction between a student or attendee and a lecturer is conducted mainly through |

[24] Տես՝ այս Բառացանկի 1-ին բաժնում բերված “Lifelong learning” եզրույթին նվիրված նշագրումը:

| | | |
|---|---|---|
| | նոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով: [2] | information technologies and by means of telecommunication. [2] |

**Նշագրում.** Թեև եզրույթում օգտագործվում է «*ուսուցում*» բառը, սակայն այս հասկացության թիրախն իրականում *ուսումնառությունն* է: Այդ իսկ պատճառով անգլերեն տարբերակում առաջարկվում է “learning” բառը, որը համապատասխանում է միջազգայնորեն ընդունված տարբերակին:

| | | |
|---|---|---|
| **32** | **Մագիստրոս** | **Master’s degree** |
| | Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝ առնվազն մեկ տարի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով: [1] | Qualification degree of higher professional education, which is awarded to persons with bachelor’s degree or degree of a Diploma Specialist, upon attestation results of at least one-year higher professional education programme. [1] |
| **33** | **Մանկապարտեզ** | **Kindergarten** |
| | Նախադպրոցական կրթության ծրագիր իրականացնող ուսումնադաստիարակչական հաստատություն: [1] | An educational and upbringing institution implementing a preschool education programme. [1] |
| **34** | **Մասնագետ** | **Specialist** |
| | Միջին մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջին մասնագիտական կրթական ծրագրին համապատասխան ամփոփիչ ատեստավորում անցած անձանց: [1] | A qualification degree of middle vocational education, which is awarded to persons having passed final attestation in accordance with middle vocational education programme. [1] |
| | Միջին մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջին մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց: [2] | A qualification degree of middle vocational education, which is awarded to persons having passed state final attestation in accordance with middle vocational education programmes. [2] |

| | | |
|---|---|---|
| **35** | **Մասնագիտական ուսուցում** | **1. Vocational training**<br>**2. Professional training**[25] |
| | Մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների յուրացմանն ու օգտագործմանը նպատակաուղղված ուսուցման գործընթաց: [2] | Process of instruction aimed at mastering and using knowledge and skills necessary for performing professional activities. [2] |
| **36** | **Մասնաճյուղ** | **Branch** |
| | Ուսումնական հաստատության տարածքային առանձնացված ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ տարբեր կրթական ծրագրեր: [1] | A territorial separated subdivision of an educational institution, which implements one or various educational programmes. [1] |
| **37** | **Մեծահասակների կրթություն և ուսուցում** | **Adult Learning and Education**<br>[Adult Education and Training] |
| | *Որևէ իրավական ակտով սահմանված չէ: Հիշատակվում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում՝ հոդված 17, կետ 1 և հոդված 18, մաս 1, կետ 5:* | *This term is mentioned in the Law on Preliminary Vocational (Craftsmanship) and Middle Vocational Education but it is not defined by any leagal act.* |

**Նշագրումներ.**

1. Թեև բառացի անգլերեն թարգմանությունն է “Adult Education and Training”, սակայն առաջարկվում է “Adult Learning and Education”, որն ընդունված է միջազգային ասպարեզում և կիրառվում է մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ցկյանս ուսումնառության ինստիտուտը (UNESCO Institute for Lifelong Learning, http://uil.unesco.org/adult-education) կամ Մեծահասակների կրթության միջազգային խորհուրդը (International Council for Adult Education, http://icae.global/en/about/what-is-icae/):
2. ՀՀ կառավարության 29.12.2005թ. նիստի № 53 արձանագրային որոշմամբ հավանություն ստացած «Մեծահասակների կրթության հայեցակարգը և ռազմավարությունը» տալիս են հետևյալ սահմանումը. *«Մեծահասակների կրթությունն է համարվում հանրակրթության փարիքն անցած անձանց հանրակրթական հիմնական և լրացուցիչ, ինչպես նաև մասնագիտական*

[25] Կիրառելի է, երբ խոսքը գնում է, օրինակ՝ բարձրագույն կրթության մակարդակով լրացուցիչ ուսուցման մասին:

*լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվող կրթությունը, որը քաղաքացիների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, տեխնիկական միջոցների, կենսագործունեության միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական ծառայությունների միջոցով ընթացող կրթական գործընթացն է»:* Վերջինս հազիվ թե կարելի է արդիական համարել:

| | | |
|---|---|---|
| **38** | **Միջին մասնագիտական կրթություն** | **Middle vocational education** |
| | Առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում: [2] | Implementation of middle vocational educational programmes on the basis of at least basic general education. [2] |

**Նշագրում**. Ըստ էության՝ նույնաբանություն (տավտոլոգիա) է: Ոչինչ չի սահմանում:

| | | |
|---|---|---|
| **39** | **Նպատակային ուսուցում** | **Targeted Education**<br>[Targeted Training] |
| | Մասնագիտական կրթական ծրագրերով պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածաշրջանները, այդ թվում՝ սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերը, համապատասխան որակավորմամբ մասնագետներով ապահովելու նպատակով իրականացվող ուսուցում: [1] | Education implemented upon professional (vocatiional) educational programmes (curricula) with a purpose to provide the sectors of priority and importance for the state, as well as RA regions including the border and mountainous localities with specialists with appropriate qualification. [1] |
| | Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածաշրջանները, այդ թվում՝ սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերը, համապատասխան որակավորմամբ մասնագետներով ապահովելու նպատակով իրականացվող ուսուցում: [3] | Education implemented upon higher and post-graduate professional educational programmes (curricula) with a purpose to provide the sectors of priority and importance for the state, as well as RA regions including the border and mountainous localities with specialists with appropriate qualification. [3] |

**Նշագրում**. Անհասկանալի է, թե ինչու է սահմանման մեջ օգտագործված

«ուսուցում», այլ ոչ «կրթություն» բառը, թեև հասկացությունը նպատակային կրթության մասին է: Հավանաբար, դեռևս խորհրդային տարիներին օգտագործվող՝ ռուսերեն “целевое обучение” արտահայտության բառացի թարգմանություն է՝ «կալկա»:

| | | |
|---|---|---|
| **40** | **Ոչ ֆորմալ կրթություն (ուսուցում)** | **Non-formal education (training)** |
| | Կրթության լրացուցիչ ուսուցման ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպության և (կամ) ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի: [1] | A supplementary (continuing) educational programme or the aggregate of those programmes which is implemented by relevant educational institution(s) or by organisation and/or service authorised to perform that function, which however does not lead to awarding a qualification degree and official recognition of the learning outcomes, except for the cases provided for by laws of the Republic of Armenia. [1] |
| **41** | **Որակավորում** | **Qualification** |
| | Ամփոփիչ ատեստավորման արդյունքում մասնագիտական որակավորման բնութագրին անձի համապատասխանությունը հավաստող կարգավիճակ, որը շնորհվում է համապատասխան փաստաթղթով: [1] | A status certifying the compliance of a person with the professional (vocational) qualification description in the result of final attestation, which is awarded via relevant document. [1] |
| **42** | **Որակավորումների ազգային շրջանակ** | **National qualifications framework** |
| | Մասնագիտական կրթության որակավորման աստիճանների բնութագրերի ամբողջությունը, որը ներառում է ուսումնառության յուրաքանչյուր աստիճանում ուսուցման արդյունքների և մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ընդհանրական նկարագրերը: [1] | The integrity of characteristics (descriptions) of the qualification levels of professional education, which includes generalised descriptions of learning outcomes at each level of learning, and those of knowledge, skills and competences required for performing professional activities. [1] |

| | | |
|---|---|---|
| **43** | **Որակի գնահատում (ատեստավորում)** | **Quality assessment (attestation)** |
| | Արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատում: [2] | Assessment of effectiveness of professions, educational programmes (curricula), instruction methods, staff and structure of craftsmanship and middle vocational educational institutions. [2] |

**Նշագրում.** Տես նաև՝ «Ուսումնական հաստատության որակի գնահատում (ատեստավորում)» և «Ատեստավորում»:

| | | |
|---|---|---|
| **44** | **Պետական կրթական չափորոշիչ** | **State educational standard** |
| | Նորմատիվ, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները: [1] | A norm whish defines the mandatory minimum content of educational programmes, the maximum academic workload of learners and quality requirements towards graduates. [1] |
| **45** | **Պետական հավատարմագրում** | **State accreditation** |
| | Պետության կողմից՝ պետական կրթական չափորոշիչներին մասնագետների պատրաստման որակի համապատասխանության ճանաչումը: [1] | Recognition by the state, of compliance of the quality of preparation of specialists with the state educational standards. [1] |
| | Պետության կողմից բուհի, կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչում: [3] | Recognition by the State, of compliance of the higher education institution, educational programme and quality of preparation of specialists with the state educational standards. [3] |
| **46** | **Ռազմաուսումնական հաստատություն** | **Military educational institution** |
| | Հանրակրթական կամ միջին մասնագիտական կամ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն, որն ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակու- | An educational institution implementing general or middle vocational or higher and post-graduate professional education and ensuring the instruction and upbringing of learners in accordance |

| | | |
|---|---|---|
| | թյունը ռազմական կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան: [1] | with the requirements for military education programmes. [1] |
| **47** | **Սովորող** | **Learner** |
| | Սահմանված կարգով ուսումնական հաստատություն ընդունված և կրթական հիմնական ծրագրով (ծրագրերով) ուսումնառող անձ: [1] | Person enrolled in the educational institution according to the defined procedure and studying upon main (initial) educational programme(s) (curricula). [1] |
| **48** | **Սոցիալական գործընկեր** | **Social partner** |
| | Մասնագիտական կրթության և ուսուցման համակարգին աջակցող, համագործակցող և համակարգի զարգացման գործում շահագրգիռ կազմակերպություն կամ կազմակերպությունների միավորում, մասնավորապես գործատուների, արհեստակցական և հասարակական այլ միավորումներ, կրթական և ուսումնական ծրագրեր իրականացնող ցանկացած կազմակերպություն, պետական և համայնքային մարմիններ: [1] | Organisation or union of organisations particularly unions of employers, trade unions and other public associations, as well as any organisation, state and community bodies implementing educational and academic programmes, who support, collaborate with, and are interested in, the development of the system of professional (vocational) education and training. [1] |
| | Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգին աջակցող, համագործակցող և համակարգի զարգացման գործում շահագրգիռ կազմակերպություն կամ կազմակերպությունների միավորում, ներառյալ՝ ցանկացած տիպի ուսումնական հաստատություն: [2] | Organisation or union of organisations, including any type of educational institution which support, collaborate with, and are interested in, the development of the system of craftsmanship and middle vocational education and training. [2] |

**Նշագրում**. Տես այս բառացանկի առաջին մասում “Social partners” («Սոցիալական գործընկերներ») եզրույթին վերաբերող նշագրումը:

| | | |
|---|---|---|
| **49** | **Վարպետային ուսուցում** | **Master Training** |
| | Մասնագիտական կրթության բնագավառում համակարգված ուսուցման ձև, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացն ուսուցանողի և | In the filed of vocational education, a structured form of training when the direct and indirect instruction is implemented according with the |

| | | |
|---|---|---|
| | ուսանողի միջև իրականացվում է անհատական ուսուցման ժամանակացույցի հիման վրա: Կարող է իրականացվել ուսումնական հաստատությունում, կազմակերպությունում կամ վարպետի արհեստանոցում: [*ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի № 1254-Ն որոշում*] | individual training schedule. Can be implemented at educational institution, at organisation or at the masters' workshop [*RA Government Decision № 1254-N, 30th december 2008*]. |

**Նշագրում**. պարունակում է քերականորեն ոչ միանշանակ արտահայտություն՝ «*գործընթացն ուսուցանողի և ուսանողի միջև*»:

| 50 | **Ունկնդիր** | **Attendee** |
|---|---|---|
| | Լրացուցիչ կրթական ծրագրում ընդգրկված և ուսումնառող անձ: [1] Սահմանված կարգով արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական լրացուցիչ ծրագրով ուսումնառող և (կամ) որակավորման բարձրացման (վերապատրաստման, վերաորակավորման) դասընթացին մասնակցող անձ: [2] | Person enrolled in, and studying upon supplementary (continuing) educational programme. [1] Person studying, in a prescribed manner, upon supplementary (continuing) programme (curricula) of craftsmanship or middle vocational education and (or) person attending a qualification upgraide (training, re-qualification) course. [2] |

| 51 | **Ուսանող** | **Student** |
|---|---|---|
| | Համապատասխան ուսումնական հաստատությունում սահմանված կարգով ընդունված և արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական հիմնական ծրագրով ուսումնառող անձ: [2] Համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություն սահմանված կարգով ընդունված և բարձրագույն մասնագիտական կրթության կրթական որևէ ծրագրով ուսումնառու անձ: [3] | Person enrolled in the appropriate educational institution according to the defined procedure and studying upon main (initial) programmes (curricula)of craftsmanship or middle vocational education. [2] Person enrolled in the appropriate higher educational institution according to the defined procedure and studying upon any main programme (curricula) of higher professional education. [3] |

**Նշագրում**. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում «ուսանող» եզրույթին տրված սահմանումը հավասա-

բապես վերաբերում է նաև «կուրսանտ» և «ունկնդիր» եզրույթներին: Սա ուղղակիորեն հակասում է «Կրթության մասին» ՀՀ օրենքին, քանի որ վերջինի համաձայն՝ ուսանողը հիմնական կրթական ծրագրով սովորողն է, իսկ ունկնդիրը՝ լրացուցիչ:

| | | |
|---|---|---|
| **52** | **Ուսանողական նպաստ** | **Student benefit** |
| | Ուսանողի ուսման վարձի փոխհատուցում պետական բյուջեի ֆինանսավորման, մասնագիտական ուսումնական հաստատության, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին: [2]<br>Ուսանողի ուսման վարձի փոխհատուցում պետական բյուջեի ֆինանսավորման, բարձրագույն ուսումնական հաստատության, հիմնադրամների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին: [3] | Refund of the tuition fee of a student at the expense of the state budget, allocations from vocational educational institution, other legal and natural persons. [2]<br>Refund of the tuition fee of a student at the expense of the state budget, allocations from higher educational institution, foundations and other organisations as well as natural persons. [3] |
| **53** | **Ուսումնական կենտրոն** | **Educational centre** |
| | Կազմակերպություն (այդ թվում՝ ուսումնական հաստատություն), որն իրականացնում է լրացուցիչ կրթական ծրագիր (ծրագրեր): [1] | An organisation (including an educational institution) implementing supplementary (continuing) educational programme(s). [1] |
| **54** | **Ուսումնական հաստատության որակի գնահատում (ատեստավորում)** | **Educational Institution Quality Assessment (attestation)** |
| | Բարձրագույն ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատում: [3] | Assessment of effectiveness of professions, educational programmes (curricula), instruction methods, staff and structure of higher educational institution. [3] |

**Նշագրում**. Տես նաև՝ «Որակի գնահատում (ատեստավորում)» և «Ատեստավորում»:

| 55 | Ուսումնական հաստատություն | Educational institution |
|---|---|---|
| | Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան: [1] | Organisation with the status of legal person or a subdivision thereof implementing one or more educational programmes and ensuring the instruction and upbringing of learners in accordance with the requirements of those programmes. [1] |

**Նշագրում**. Սահմանման մեջ տեղ գտած «և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան» արտահայտությունն ավելորդ է, քանի որ «Կրթության մասին» ՀՀ օրենքով (հոդված 3, կետ 1) «կրթություն» հասկացությունն արդեն իսկ սահմանված որպես «... ուսուցման և դաստիարակության գործընթաց ...», ինչից հետևում է, որ կրթական ծրագրի իրականացումը ոչ այլ ինչ է, քան հենց այդ ուսուցման և դաստիարակության ապահովումը:

| 56 | Ուսումնառության ժամկետ | Time period of studies |
|---|---|---|
| | Տվյալ մասնագիտական կրթական չափորոշիչով սահմանված ուսումնառության նվազագույն տևողություն: [2] | Minimum duration of studies defined by the given vocational educational standard. [2] |

**Նշագրումներ**.

1. «Մասնագիտական կրթական չափորոշիչ» հասկացություն գոյություն չունի: Հավանաբար, նկատի է ունեցվել տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչը:
2. Համաձայն «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի (հոդված 7, մաս 2, կետ 3)՝ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները ներառում են, մասնավորապես՝ *«արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման ժամկետները»*, սակայն ոչ ուսումնառության նվազագույն տևողությունը: ՀՀ կրթության և գիտության նախարարի 04.09.2009թ. № 772-Ն հրամանով սահմանված՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության մասնագիտության պետական կրթական չափորոշիչների բաղադրիչները (համապատասխանաբար՝ հավելված 1, կետ 3 և հավելված 2, կետ 5) նախատեսում են *«ուսուցման տևողությունը ըստ կրթության հիմքի և ձևերի»*: Ավելին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով՝ ըստ մասնագիտությունների

(որակավորումների) հաստատվող չափորոշիչներում նշվում են *ուսումնառության նորմատիվային ժամկետները*:

| | | |
|---|---|---|
| **57** | **Ուսուցում** | **Training** |
| | Կրթական ծրագրով իրականացվող գործընթաց, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպատակաուղղված է անձի ուսումնառության կազմակերպմանը, իրականացմանը կամ դրա օժանդակմանը: [1] | A process carried out through an educational programme that is directly or indirectly aimed at organising, implementing or assisting the learning of an individual. [1] |
| **58** | **Քոլեջ** | **College** |
| | Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր: [1], [2] | Organisation with the status of legal person or a subdivision thereof implementing a middle vocational educational programme. [1], [2] |
| **59** | **Ֆորմալ կրթություն** | **Formal education** |
| | Հանրակրթական և մասնագիտական կրթական հիմնական ծրագրերի որոշակի մակարդակ կամ ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կողմից և հանգեցնում տվյալ մակարդակի որակավորման աստիճանի շնորհման և դիպլոմավորման: [1] | Certain level or the aggregate of the main educational programmes of general and professional education which are implemented by relevant educational institution(s) and lead to awarding a qualification degree and diploma. [1] |